

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՂԱԶԱՐՅԱՆ ՌՈՔԵՐՏ ՊԵՏՐՈՍԻ

ՀԱՅԱՍՏԱՆ-ԱԶԶԻԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսություն

Է. 00.01- «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի  
գիտական աստիճանի հայցման համար

Գիտական ղեկավար՝  
պատմական գիտությունների դոկտոր  
Է. Լ. Դանիելյան

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ՀԱՅԱՍՏԱ-ԱԶԶԻԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ .....	18
1. Հայասա-Ազգիի պատմաաշխարհագրական դիրքը.....	18
2. Հայասա-Ազգիի բնակավայրերի տեղադրությունը .....	35
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ. ՀԱՅԱՍՏԱ-ԱԶԶԻԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (Մ.Թ.Ա. XIV-XIIIԴԴ.)	56
1. Ռազմաքաղաքական փոխհարաբերությունները Հայասա-Ազգիի և Խաթթիի միջև (մ.թ.ա. XIV դար) .....	56
2. Խեթա-հայասական հարաբերությունները մ.թ.ա. XIII դարում .....	80
ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ. ՀԱՅԱՍՏԱ-ԱԶԶԻԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԵՎ ՀՐԳԵԿՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԸ .....	89
1. Հնագիտական տվյալներ պատմական Հայասա-Ազգիի տարածքից .....	89
2. Հայասա-Ազգիի հոգևոր մշակույթը .....	100
ՎԵՐՋԱԲԱՆ.....	115
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....	119

## ՆԵՐՎՃՈՒԹՅՈՒՆ

Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումները քաղաքական, տնտեսական, մշակութային և ռազմական փոխհարաբերությունների մեջ են եղել հարակից տարածքների երկրների հետ, ուստի դրանց վաղ պատմության շատ դրվագներ միահյուսվում են Հին Արևելքի պատմությանը: Այստեղ կարևորվում է սեպագիր աղբյուրներից հայտնի Հայաստանի երկիրը, որի անունը Հայք-Հայաստան անվան վկայությունն է մ.թ.ա. II հազարամյակում<sup>1</sup>: Քանի որ այդ պետական միավորի մասին տեղեկություններն առկա են խեթական սկզբնաղբյուրներում, ապա, ինչպես պարզված է պատմագիտության մեջ, երկրի անվանումը տրված է խեթերենին համապատասխան, որտեղ (a)ša-ն Փոքր Ասիայի տեղանուններում օգտագործվող վերջածանց էր և կապված էր խեթա-լուվական լեզվաշխարհի հետ: Հայկական լեռնաշխարհի հնագույն պետականություններից մեկի՝ Հայաստան-Ազգի թագավորության պատմության ուսումնասիրությունը հայոց պատմության այն հիմնահարցն է, որի հետազոտությունը կարևոր է թե՛ հայագիտության և թե՛ արևելագիտության մեջ և դրանով իսկ խիստ արդիական է Հին Արևելքի պատմության խնդիրներն ուսումնասիրելու համար:

Հայաստան-Ազգի պատմությունն ուսումնասիրվել է հայրենական և արտերկրյա պատմագիտության կողմից: Ատենախոսության թեմային վերաբերող կամ առնչվող ուսումնասիրություններն սկսվել են դեռևս XX դ. 20-30-ական թվականներից: Այս խնդրում հիմնարար նշանակություն ունի Գրիգոր Ղափանցյանի հատկապես «Հայասան-հայերի բնօրրան» աշխատությունը<sup>2</sup>: Դրա հետ մեկտեղ կարևորվում են նաև այլ հեղինակների մասնագիտական և ընդհանուր բնույթի ուսումնասիրությունները, որոնցում վեր են հանված Հայաստանի լեզվին, ռազմա-քաղաքական պատմությանը, տեղագրությանը և կրոնին նվիրված հարցերը: Սակայն Հայաստան-Ազգի պատմությունն արծարծող դասական աշխատանքներն ունեն տասնյակ տարիների վաղեմություն: Ժամանակի հրամայականն է անցած տասնամյակների ընթացքում սեպագրագիտության և հնագիտության բնագավառում ձեռք բերված նվաճումների լույսի ներքո կատարել Հայաստան-Ազգի պատմության քննական ուսումնասիրությունը:

Այսքանից հետո պետք է նշել երկու կարևոր հանգամանք, որոնք հեռու են պատմագիտական խնդիրների ոլորտից: Առաջինը գիտականորեն ընդունված պատմաաշխարհագրական անունների բռնազբոսիկ կերպով փոփոխությունն է: Երկրորդը հնագիտական հուշարձանները պատմական հասցեատիրոջից զրկելն է: Խոսքը վերաբերում է Հայկական լեռնաշխարհին, այն ընդգրկող վայրերի աշխարհագրական անուններին և հայոց մշակութային ժառանգությանը<sup>3</sup>: Դրանով իսկ ներկայիս մենագրությունում կարևորվում է խնդրո

<sup>1</sup> Հայա (որպես տեղանուն, ցեղանուն և անձնանուն) և Ազի (որպես տեղանուն և ցեղանուն) անվանումները փաստվել են Էբլայի (մ.թ.ա. III հազարամյակի կեսերով թվագրվող առևտրական տեքստերում) և Աշշուրի (Կապադոկիայի տարածքից գտնված հինասորեստանյան արձանագրություն, թվագրվող մ.թ.ա. III-II հազարամյակների սահմանագծով) արձանագրություններում (Иванов В., Выделение разных хронологических слоев в древнеармянском и проблема первоначальной структуры текста гимна Ва(х)агпу, Պատմա-բանասիրական հանդես (այսուհետև՝ ՊԲՀ), 1983, թիվ 4, էջ 30-33):

<sup>2</sup> Капанцян Г., Хайаса-колыбель армян, Ереван, 1948.

<sup>3</sup> Դանիելյան Է., Հին Հայաստանի պատմության հայեցակարգային հիմնահարցերը պատմագրության մեջ,

առարկա տարածքի թե՛ հնավայրերի պատմաաշխարհագրական անունների վերականգնումը և թե՛ հնագիտական հուշարձանների էթնիկական պատկանելիության արծարծումը Հայկական լեռնաշխարհի էթնո-մշակութային ամբողջականության շարունակականության առումով:

Ներկա ատենախոսության նպատակն է աղբյուրների համալիր ուսումնասիրմամբ ներկայացնել խեթական սկզբնաղբյուրներից հայտնի Հայասա-Ազգի թագավորության պատմությունը: Դրան հասնելու համար դրվել են հետևյալ խնդիրները.

1. Շարադրել Հայասա-Ազգիի ամբողջական ու քննական պատմությունը:
2. Ամբողջացնել Հայասայի տեղանունների ցանկը, անհրաժեշտ փաստարկներով քննել և հիմնավորել առաջարկված տեղադրումները:
3. Լուսաբանել խեթական տերության հետ Հայասա-Ազգիի ռազմաքաղաքական փոխհարաբերությունների խնդիրները սեպագիր աղբյուրների հանգամանակի վերլուծության հիման վրա:
4. Պարզել Հայասայի թագավորության դերը Հայկական լեռնաշխարհի մշակութային ու ռազմաքաղաքական ընդհանուր համատեքստում:
5. Վերհանել, ժամանակաշրջանին և տարածաշրջանին բնորոշ, Հայասա-Ազգիի մշակույթի ընդհանուր պատկերը՝ դրա համար օգտագործելով առկա ողջ նյութը՝ գրավոր, հնագիտական և հարակից:

Սույն թեմայի կատարմամբ փորձ է արվում ներկայացնել Հայասա-Ազգիի ամբողջական պատմությունն ամփոփող աշխատություն:

Ինչպես վերը նշվել է, ատենախոսության թեմային վերաբերող կամ առնչվող ուսումնասիրություններն սկսվել են դեռևս XXդ. 20-ական թվականներից: Չնայած անցած բավական ժամանակին, երբ հրատարակվեցին «Հայասա-Ազգի», «Հայասան-հայերի բնօրրան», «Հին Հայաստանի պատմության և աշխարհագրության մի քանի վիճելի խնդիրների մասին», «Հայասցիներ»<sup>4</sup>, ինչպես նաև մասնավոր և ընդհանուր բնույթի տարբեր ուսումնասիրություններ, սակայն տվյալ խնդրի ուսումնասիրման համար առաջին անգամ է փորձ արվում օգտագործել նաև պատմական Հայասա-Ազգիի տարածքի հնագիտական նյութը: Խնդրո առարկա տարածքում կատարվող հնագիտական պեղումների արդյունքում վերհանված ուշբրոնզեդարյան մշակույթն ստեղծվել է Հայասա-Ազգիի ժամանակաշրջանում և կարևոր նշանակություն ունի այդ քաղաքական միավորի մշակույթի առանձնահատկությունները և ընդհանրությունները Հայկական լեռնաշխարհի մյուս տարածաշրջանների հետ շաղկապված ուսումնասիրվելու համար:

Բացի այդ, վերջին տասնամյակներում սեպագրագիտությունն ապրել է զգալի առաջընթաց, հայտնաբերվել են նոր աղբյուրներ, ճշգրտվել և վերահրատարակվել են հները, վերանայվել են սկզբունքային մի շարք հարցեր: Բոլոր վերոհիշյալ գործոններն, ինչպես նաև նյութին քննական մոտեցման անհրաժեշտությունը պարտադրում են վերաշարադրել Հայասա-

<sup>4</sup> Պատմա-բանասիրական հանդես՝ ՊԲՀ, 2003, թիվ 3, էջ 30-37:

<sup>4</sup> Fother E., ĭajasa-Azzi, Caucasia, 1931, № 9, S. 1-24. Карапетян Г., Хайаса-колыбель армян. Манандян Я., О некоторых спорных проблемах истории и географии древней Армении, Ереван, 1956, с. 68-155. Хачатурян В., Хайаса, Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ), 1972, թիվ 8, էջ 32-41.

Ազգի պատմությունը:

Ներկա ատենախոսությունն, ըստ այդմ, նպատակ ունի լրացնել բացը: Այս համատեքստում որոշ փաստեր շրջանառության մեջ են դրվում առաջին անգամ: Օգտագործվել է մեծ քանակությամբ մասնագիտական նոր գրականություն:

Հայասա-Ազգիի պատմության աղբյուրագիտական հենքը կազմում են խեթական սեպագիր աղբյուրները, ասորեստանյան որոշ տեքստեր, գրավոր աղբյուրներին լրացնող հնագիտական նյութեր և հուշարձաններ, օժանդակ աղբյուրներ, որոնք ներառում են ֆիզիկաաշխարհագրական, լեզվաբանական և այլ ուղղություններ:

Ատենախոսության մեջ օգտագործվել են հայրենական և օտար հետազոտողների աշխատությունները՝ սկզբնաղբյուրների հրատարակություններ, մեմագրություններ, կոլեկտիվ ուսումնասիրություններ և գիտական հոդվածներ:

## 1. **Գրավոր աղբյուրներ**

**Ա. խեթական արձանագրություններ:** Հայասա-Ազգիին վերաբերող համեմատաբար մեծաքանակ և արժեքավոր տեղեկությունների հիմնական աղբյուրը միջինխեթական ու նորխեթական ժամանակաշրջանի սեպագիր արձանագրություններն են: Հայկական լեռնաշխարհին արևմուտքից հարող Խաթթի պետության արքաները գրառել են տվել իրենց թագավորման ժամանակաշրջանի իրադարձությունները տարեգրությունների տեսքով՝ սկսելով, հավանաբար, խեթական նոր թագավորության առաջին գահակալ Թուդիսալիյաս I/II-ից (մ.թ.ա. XIVդ. սկիզբ)<sup>5</sup>: Նրա հաջորդները շարունակել են այդ ավանդույթը, և տարեգրություններ են պահպանվել Արնուվանդաս I-ից (մ.թ.ա. XIVդ. I կես), Սուպաիլուլիումաս I-ից (կազմվել է իր որդու՝ Սուրսիլիս II-ի կողմից) (մ.թ.ա. 1344-1322թթ.) և բոլորից առավել՝ Սուրսիլիս II-ից (մ.թ.ա. 1321-1295թթ.): Հաջորդ արքաներից Սուվատալիս II-ի (մ.թ.ա. 1295-1272թթ.) և Ուրիսի-Թեշուբի (Սուրսիլիս III) (մ.թ.ա. 1272-1267թթ.) արխիվները դեռ չեն հայտնաբերվել: Գտնվել են Խաթթուսիլիս III-ի (մ.թ.ա. 1267-1237թթ.) թագավորման շրջանի տեքստեր: Թուդիսալիյաս IV-ը (մ.թ.ա. 1237-1209թթ.) և Սուպաիլուլիումաս II-ը (մ.թ.ա. 1207-XIIդ. սկիզբ) [տեղեկություն չկա Արնուվանդաս III-ից (մ.թ.ա. 1209-1207թթ.)], թվում է, «հիերոգլիֆիկ» գրի և լուվիերեն լեզվի զարգացմանը զուգընթաց ընդունել են իրենց գործերի հաղորդման նոր ձև՝ մոնումենտալ արձանագրությունների կամ արձանների տեսքով<sup>6</sup>:

Խաթթի արքա Արնուվանդաս I-ի օրոք կազմված խեթական տեքստերից է այսպես կոչված «Պախսուվացի Միտայի» տեքստը<sup>7</sup>: Այս վավերագրում տրվել է Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորների հետ խեթական պետության կնքած ժամանակագրորեն ամենավաղ պայմանագիրը, որտեղ Հայասա-Ազգին չի հիշատակվել,

<sup>5</sup> խեթական արքաների թագավորման տարեթվերը տրված են ըստ Թրեյր Բրայսի գրքի՝ Bryce T., The Kingdom of the Hittites, Oxford, 1999, p. XIII-XIV.

<sup>6</sup> Hoffner H., Histories and Historians of the Ancient Near East: The Hittites, Orientalia, 1980, № 49, 4, p. 285-286.

<sup>7</sup> Keilschrifturkunden aus Boğhazköi (այսուհետև՝ KUB) XXIII 72.

սակայն այստեղ հանդես են գալիս որոշ քաղաքներ, որոնք ավելի ուշ շրջանի խեթական աղբյուրներից հայտնի են որպես այդ երկրի բնակավայրեր:

Գոյություն ունի խեթա-հայասական առաջին չթվագրված պայմանագիր, որտեղ խեթական արքան (հավանաբար Թուդխալիյաս III-ը) դիմում է հայասացիներին (Չայասայի մարդկանց)<sup>8</sup>:

Մաշատ-Չույուքից՝ Ձիլեից 30կմ հարավ-արևմուտք (խեթ. <sup>URU</sup>Tarigga), հայտնաբերված տեքստերում տեղեկություն կա նաև Չայասայի վերաբերյալ, որի դեմ արշավելու նպատակով խեթերը զորահավաք էին անցկացրել Վերին երկրում<sup>9</sup>: Արխիվը թվագրվել է Թուդխալիյաս III-ի և Սուպիլուլիումաս I-ի կառավարման շրջանով (մ.թ.ա. XIVդ.):

Չայասա-Ազզին հիշատակված է խեթական թագավոր Սուպիլուլիումաս I-ի տարեգրության մեջ, որը խմբագրել է նրա որդին՝ Սուրսիլիս II-ը<sup>10</sup>: Այդ տարեգրությունից տեղեկանում ենք, որ Թուդխալիյաս III-ն իր որդու՝ Սուպիլուլիումասի մասնակցությամբ երկու ռազմական արշավանք է կատարել Չայասա-Ազզիի դեմ: Ժամանակագրական տեսակետից Չայասայի մասին հետագա տեղեկություններ ստանում ենք Սուպիլուլիումաս I-ի և Չայասայի արքա Խուկկանայի միջև կնքված դաշնագրից<sup>11</sup>:

Խաթթիի և Չայասա-Ազզիի միջև հետագա փոխհարաբերությունների մասին մեզ կարևոր տեղեկություններ են հասել Սուրսիլիս II-ի տարեգրություններից («Տասնամյա» և «Ընդարձակ»)<sup>12</sup>: Առաջինը ներկայացնում է արքայի կառավարման առաջին տաս տարիների իրադարձությունները, երկրորդն ընդգրկում է նրա կառավարման գրեթե ողջ շրջանը: Չայասայի հետ փոխհարաբերությունները թվագրվում են յոթից տասնմեկերորդ տարիներով:

Չայկական լեռնաշխարհի երկրների վերաբերյալ հավաստի սկզբնաղբյուր է խեթական արքա Խաթթուսիլիս III-ի՝ մասնագիտական շրջանակներին լավ հայտնի «Ինքնակենսագրությունը», որտեղ տեղեկություններ են պարունակվում խեթական արքայի կողմից գահի բռնազավթման արդարացման և նախորդ արքաների գործունեության վերաբերյալ<sup>13</sup>: Այստեղ հիշատակություն կա նաև Խաթթիի արևելյան հարևան Չայասա-Ազզիի մասին<sup>14</sup>:

Չայասան վերջին անգամ հիշատակվել է Թուդխալիյաս IV-ի (մ.թ.ա. 1237-1209թթ.) օրոք

<sup>8</sup> KBo XVI 45 (Laroche E., Catalogue des textes hittites (այսուհետև՝ CTH) 832. Քոսյան Ա., Չայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, 2004, էջ 128).

<sup>9</sup> Alp S., Hethitische Briefe aus Maşat-Höyük, Türk Tarih Kurumu Yayınları (այսուհետև՝ TTKY), № VI/34, Ankara, 1991, S. 298-301. Քոսյան Ա., Նոր նյութեր խեթական տեքստերի և Չայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ (այսուհետև՝ ՄԱԱԵԺ), 2001, XX, էջ 233-245:

<sup>10</sup> Güterbock H., The Deeds of Suppiluliuma as told by his Son, Mursili II, Journal of Cuneiform Studies (այսուհետև՝ JCS), 1956, № 10, 2-4, pp. 41-68, 75-98, 107-130.

<sup>11</sup> Friedrich J., Staatsverträge des İatti-Reiches in hethitischer Sprache, 2 T., 1930, S. 103-163.

<sup>12</sup> Forrer E., Die Boghazköi-Texte in Umschrift (այսուհետև՝ BoTU) II, 1926, S. 48-63 (Götze A., Die Annalen des Muršiliš, Mitteilungen der Vorderasiatisch-ägyptischen Gesellschaft (այսուհետև՝ MVAG), 1933, № 38. CTH 61).

<sup>13</sup> CTH 81 (Ottens H., Die Apologie Hattušiliš III: Das Bild der Überlieferung, Wiesbaden, 1981).

<sup>14</sup> Keilschrifttexte aus Boghazköi (այսուհետև՝ KBo) VI 28.

և նշվել է, որ այն թշնամական երկիր է Խաթթիի համար<sup>15</sup>:

Պահպանվել է նաև խեթական մի կարևոր տեքստ (առայժմ չթվագրված)՝ խեթահայասական ինչ-որ պայմանագրի կնքմանը վկա աստվածների ցուցակ, որտեղ տրվել է նաև Չայասայի քաղաքների և նրանցում պաշտվող աստվածների անվանացուցակը<sup>16</sup>:

Չայկական լեռնաշխարհի մ.թ.ա. II հազարամյակի պետական կազմավորումների պատմության վերաբերյալ խեթական սեպագիր աղբյուրներն արտակարգ կարևոր են այն առումով, որ շատ դեպքերում դրանք միակ գրավոր վկայություններն են: 1920-ական թվականներից հրատարակվող այդ աղբյուրների շնորհիվ ոսումնասիրվել են նաև Չայասա-Ազգիի պատմության, էթնիկական, սոցիալական իրավիճակի և հոգևոր մշակույթի բազմաթիվ խնդիրներ: Սակայն Խաթթուսասի (այժմ՝ Բողազքոյ) պալատական պահոցի ընձեռած հնարավորությունները սահմանափակ են: Արդի ժամանակաշրջանում Փոքր Ասիայի տարբեր շրջաններում կատարված պեղումների ընթացքում հայտնաբերվել են տեղական սեպագրական արխիվներ, որոնց հրատարակությունը միայն նոր է սկսվել: Սրանք գերազանցապես նամակներ են՝ առաքված խեթական արքունիքից կամ այնտեղից ստացված: Ջգալի թիվ են կազմում վարչական և ծիսապաշտամունքային տեքստերը: Այստեղ կան նաև հայագիտության համար զգալի հետաքրքրություն ներկայացնող նյութեր<sup>17</sup>:

Վերջին տասնամյակներում հրատարակված (հիմնականում ինքնագիր եղանակով) խեթական սեպագիր տեքստերում վկայված են նաև մի քանի նոր տեղանուններ, որոնք, հավանաբար, գտնվել են Չայասայում կամ նրան հարող խեթական տարածքում<sup>18</sup>: Դրանք են Իյանիննա (<sup>URU</sup>Iyaninna), Խարսալասա (<sup>URU</sup>i aršalaša/i), Խուդդու (<sup>URU</sup>iuddu), Լալատտա (<sup>URU</sup>Lalatta), Լիտտա (<sup>URU</sup>Litta), Պարտանտա (<sup>URU</sup>Pártanta), Տախ(ա)նիսարա (<sup>URU</sup>TaÆÆanišara), Տավատենա (<sup>URU</sup>Tawatena), Ուկսու (<sup>URU</sup>Ukšu), Ուտկունիսա (<sup>URU</sup>Utkuniša) քաղաքները, որոնք գտնվել են Չայասայի Ուրա քաղաքի շրջակայքում կամ դրան հարող տարածքում, և Սալիտի լեռնանունը(<sup>iUR.SAG</sup>Šaliti)<sup>19</sup> (ներկայիս Երզնկայից քիչ հյուսիս-արևմուտք՝ Չայասայի հարևանությամբ): Կան նաև մի շարք դժվարընթեռնելի քաղաքանուններ, որոնց հայասական պատկանելիությունը հավանական է: Դրանք են՝ <sup>URU</sup>i u-u-u[1....], [<sup>URU</sup>....]-mi-it-ta, [<sup>URU</sup>...-p]a-ku-ul-la, [<sup>URU</sup>...-t/š]a-ta, [<sup>URU</sup>]x-x-ri-u, [<sup>URU</sup>...-I]š-ta<sup>20</sup>:

Չայասա-Ազգի երկրանունը նշյալ աղբյուրներում տրվել է Չայասա կամ Ազգի ձևով, և երկու դեպքում էլ խեթերը հասկացել են միևնույն երկիրը: Այն խեթերեն արտահայտվել է KUR <sup>URU</sup>i a-ya-ša, <sup>URU</sup>i a-ya-ša, <sup>URU</sup>i a-i-ya-ša, KUR <sup>URU</sup>i a-a-ya-ša<sup>21</sup> կամ KUR <sup>URU</sup>Az-zi, <sup>KUR</sup>Az-zi,

<sup>15</sup> KUB XXVI 12 11 12-15.

<sup>16</sup> KUB XXVI 39 (Forrer E., i ajasa-Azzi, S. 6).

<sup>17</sup> Քոսյան Ա., Նոր նյութեր խեթական տեքստերի և Չայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին, ՄՄԱԵԺ, 2001, XX, էջ 233-234:

<sup>18</sup> Քոսյան Ա., Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեքստերում, ՄՄԱԵԺ, 2003, XXII, էջ 252-259: Նույնի, Չայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների), Երևան, 2004, էջ 54, 58, 69, 79, 84, 93, 100, 101, 157:

<sup>19</sup> KBo IV 4 II 78 (Götze A., Die Annalen des Muršiliš, S. 122-123).

<sup>20</sup> Քոսյան Ա., Չայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 105-107:

<sup>21</sup> Del Monte G., Tischler T., Répertoire Géographique des Textes Cunéiformes, № VI (այսուհետև՝ RGTC, VI), 1978,

<sup>URU</sup>Az-zi, KUR <sup>URU</sup>A-az-zi գրելաձևերով: Ազգի տեղանվանաձևը գրվում է նաև Ազի ձևով. հավանական է համարվում, որ երկու z(զ) տառերի հաջորդականությունն այս բառի մեջ կարելի է գրել մեկ տառով<sup>22</sup>:

Խեթական տեքստերը հիմնականում հրատարակվել են հետևյալ պարբերականներում՝ KUB (Keilschrifturkunden aus Boğhazköi, Berlin, 1921ff.) և KBo (Keilschrifttexte aus Boğhazköi, in: Deutsche Orientgesellschaft, Wissenschaftliche Veröffentlichungen. 30. u. 36. Bd. Leipzig, 1923ff.):

**Բ. Ասորեստանյան արձանագրություններ:** Հայասա-Ազգիի պատմության մասին տեղեկություններ են պարունակում նաև մ.թ.ա. XIII-XIIդդ. ասորեստանյան սեպագիր արձանագրությունները:

Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. XIIIդ. կեսերից հայտնվել էր Խաթթիի և Ասորեստանի ռազմաքաղաքական մրցակցության ոլորտում: Այդ ժամանակաշրջանի ասորեստանյան գրավոր աղբյուրներում որոշակի տեղեկություններ են հայտնվում Հայկական լեռնաշխարհի երկրների մասին: Այդ տեղեկությունները գալիս են Ասորեստանի արքաների՝ դեպի հյուսիս կատարած արշավանքների նկարագրություններից:

Թուկուլթի-Նինուրտա I-ի (մ.թ.ա. 1233-1197թթ.)<sup>23</sup> տեքստերում հանդիպում է Հայկական լեռնաշխարհի՝ «Նաիրի երկիր» հավաքական անունը: Եթե խեթերը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան կողմերն անվանում էին *Հայասա* կամ *Ազգի*, ապա ասորեստանցիները Լեռնաշխարհի արևմտյան հատվածը հիշատակել են *Նաիրի երկրներ* (Տավրոսի լեռներից հյուսիս ընկած հատվածը՝ մինչև Սև ծով) անունով: Այսպես, Աշշուր քաղաքում, Թուկուլթի-Նինուրտայի պալատում և տաճարում հայտնաբերված արձանագրություններում պատմվում է Ասորեստանի արքայի՝ դեպի Հայկական լեռնաշխարհ արշավանքի ժամանակ նրա դեմ դուրս եկած *Նաիրյան 43 թագավորների* մասին<sup>24</sup>:

Հայկական լեռնաշխարհի՝ մ.թ.ա. XIIդ. վերջին տասնամյակների քաղաքական վիճակի մասին տեղեկություններ հանդիպում են միայն Ասորեստանի արքա Թիգլաթպալասար I-ի (մ.թ.ա. 1115-1077թթ.) սեպագիր արձանագրություններում: Դրանք վերաբերում են նշված տարածաշրջանում այդ տիրակալի մ.թ.ա. 1112թ. նվաճումներին, որոնց կապակցությամբ նույնպես հիշատակվել են *Նաիրյան երկրները*: Թիգլաթպալասար I-ը հիշատակել է Նաիրիի 23 *երկրների թագավորներին*: Պարտության մատնելով նաիրյան ուժերը՝ նա ավար էր վերցրել 120 մարտակառք և այնուհետև հետապնդել *Նաիրիի 60 թագավորներին* ու նրանց օգնության

S. 63-64. Del Monte G., Répertoire Géographique des Textes Cunéiformes, № VI/2 (այսուհետև՝ RGTC, VI/2), 1992, S. 22.

<sup>22</sup> RGTC, VI, S. 59. RGTC, VI/2, S. 19.

<sup>23</sup> Ասորեստանյան արքաների ժամանակագրությունը տրված է ըստ Boese J., Wilhelm G., Aššur-dan I, Ninurta-apil-ekur und die mittelassyrische Chronologie, Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes, 1979, №71, S. 19-38.

<sup>24</sup> Дьяконова И. И. Ассирия — вавилонские источники по истории Урарту (այսուհետև՝ АВИИУ) Вестник древней истории (այսուհետև՝ ВДИ), 5, 6, 7, 8, 1951, № 2, 3, 4; Grayson A., The Assyrian Royal Inscriptions



եկածներին մինչև «Վերին ծովը»<sup>25</sup>:

Թիզլաթպալասար I-ի տարեգրություններում տեղեկություններ կան նաև այն մասին, որ ուրումեացիների (ուրումացիների) և կասկերի (աբեշլացիների) ուժերը շարժվել են դեպի հարավ և բախվել Ասորեստանի հետ: Այս շարժը, հավանաբար, տեղի է ունեցել Չայասայի տարածքից<sup>26</sup>:

## 2. Հնագիտական աղբյուրներ

Չայասա-Ազգիի տարածքը պատմաբանները հիմնականում տեղորոշում են Չայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասում՝ որպես կենտրոն նշելով գլխավորապես Բարձր Չայքը և հարակից տարածքները: Ի տարբերություն Չայկական լեռնաշխարհի առավել լավ ուսումնասիրված երկրամասերի (Վանա լճի ավազանը, Խարբերդի շրջանը, Չայաստանի Հանրապետության տարածքը, Ուրմիա լճի ավազանը, պատմական Գուգարքի տարածքը)՝ Լեռնաշխարհի արևմտյան և հարավային շրջանների հնագիտական ուսումնասիրության վիճակը դեռևս հեռու է բավարար լինելուց:

Թեև Չայասա-Ազգիի պատմական տարածքում հնագիտական-հետախուզական աշխատանքներ կատարվել են դեռևս XXդ. 40-ական թթ., սակայն կանոնավոր պեղումներ այստեղ իրականացվում են սկսած 1980-ական թթ.-ից: Խնդրո առարկա տարածաշրջանում պեղումներն ի հայտ բերեցին մ.թ.ա. II հազարամյակի՝ մասնավորապես ուշբրոնզեդարյան մշակույթի առկայությունը Չայկական լեռնաշխարհի այս հատվածում:

Ներկայիս Երզրումի մարզի տարածքում են գտնվում նաև Սոս, Գյուզելովա (թուրք.՝ Գեդեցիկ դաշտ), Բլուր, Կարազ (Արծն) հնավայրերը:

Sos Höyük (Սոս) հնավայր-բլուրը գտնվում է Երզրում քաղաքից 25կմ արևելք (պատմական Վերին Բասեն գավառում): Հնավայրում պեղումներն սկսվել են դեռևս 1987թ. Երզրումի համալսարանի և Երզրումի թանգարանի աշխատակիցների խմբի կողմից: Այնուհետև, սկսած 1994թ.-ից, թուրք-ավստրալական միացյալ հնագիտական արշավախումբն ավելի ինտենսիվ կերպով շարունակեց բնակավայրի պեղումները (Անտոնիո Սագոնա, Կլաուդիա Սագոնա, Հիլմի Օզքոռուսուքլու, Յան Սաքֆի և այլք): Ա. Սագոնան մի քանի համահեղինակների հետ սկսած 1995թ.-ից հրատարակել է կատարված աշխատանքների ամփոփումը<sup>27</sup>:

(այսուհետև՝ ARI), §§ 691-694, 701, 707, 713, 773, 783 և Երզրումի Նիբայնիլի (Урарту) Երևանի 1970 թ. 21 թ. 351

<sup>25</sup> AVIИYИ10(IV, 43). Հայ ժողովրդի պատմության քրեստոնմատիա, հ. 1, Երևան, 1981, էջ 19-20:

<sup>26</sup> AVIИYИ12,13. Wallis Budge E., King L., The Annals of the Kings of Assyria (այսուհետև՝ AKA), № 1, London, 1902, Col. II, 100-102, Col. III, 1-2, p. 47-48. ARI, II, № 18. AKA, p. 112, 117. ARI, II, № 67, 93. Երեմյան Ս., Հայերի ցեղային միությունը Արմե-Շուպրիա երկրում, ՊԲՀ, 1958, թիվ 3, էջ 59-74: Քոսյան Ա., Էթնիկական տեղաշարժերը Փոքր Ասիայում և Չայկական լեռնաշխարհում մ.թ.ա. XII դարում, ՊԲՀ, 1991, թիվ 1, էջ 74-77: Նույնի, «Արևելյան» և «արևմտյան» մուշկերի խնդիրը, ՊԲՀ, 1996, թիվ 1-2, էջ 214-218: Ավետիսյան Հ., Հնագույն էթնիկական տեղաշարժերը և Չայկական լեռնաշխարհը մ.թ.ա. III-I հազարամյակներում, ՊԲՀ, 1994, թիվ 1-2, էջ 243-245:

<sup>27</sup> Sagona A., Sagona C., Özkorucuklu H., Excavations at Sos Höyük 1994, Anatolian Studies (այսուհետև՝ AnSt), 1995, № 45, p. 193-218. Sagona A., Erkmen M., Sagona C., Excavations at Sos Höyük, 1995, AnSt, 1996, № 46, 1, p. 27-52. Sagona A., Erkmen M., Sagona C., Howells S., Excavations at Sos Höyük, 1996, Anatolica, 1997, № XXIII, p. 181-203. Sagona A., Erkmen M., Sagona C., Excavations at Sos Höyük, 1997, Kazi Sonuçları Toplantısı (այսուհետև՝ KST), 1998, № XX, 1, p. 205-206. Sagona A., Sagona C., Excavations at Sos Höyük, 1998 to 2000, Ancient Near Eastern Studies (այսուհետև՝ ANES), 2000, № XXXVII, p. 56-77.

Երզրունից 16կմ դեպի հյուսիս-արևմուտք է տեղորոշվում Karaz (Կարազ) հնագիտական վայրը: Այն գտնվում է հայոց միջնադարյան Արծն քաղաքի տեղում: Այստեղ հետազոտություններ կատարվել են դեռևս 20-րդ դ. 40-50-ական թթ.(Յ. Քոչայ, Ք. Թուրֆան)<sup>28</sup>:

Հայտնի հնավայրերից է նաև Pulur-ը (Բլուր): Այն գտնվում է Երզրունից 20կմ դեպի արևմուտք: Այս հնավայրում ուսումնասիրություններ են կատարվել սկսած անցած դարի 40-ական թթ.-ից: Բլուրի հնավայրում հետազոտություններ են կատարել և դրանց ամփոփումը տվել թուրք հնագետները<sup>29</sup>:

Güzelova (Գյուզելովա) հուշարձանը գտնվում է Երզրունից 15կմ դեպի հյուսիս-արևելք: Այստեղ պեղումներ կատարվել են 1961թ.-ին Յ. Քոչայի և Յ. Վարիի գլխավորությամբ<sup>30</sup>:

Հայկական լեռնաշխարհի մյուս շրջանը, որտեղից պեղված մ.թ.ա. II հազարամյակի հնագիտական նյութերը կարևոր են Հայաստան-Ազգիի պատմության ուսումնասիրության համար, ընդգրկում է Գայլ (Լյուկոս) և ճորոխ գետերի հովիտները: Այստեղ է Büyüktepe Höyük (Բյույուքթեպե, թուրք.՝ Մեծ գագաթ) հնավայրը՝ Բաբերդից 30կմ դեպի հարավ-արևմուտք: Այս հնավայրը հայտնագործվել է 1988թ.-ին Մելբուռնի համալսարանի հնագիտական արշավախմբի կողմից (Անտոնիո Սագոնայի գլխավորությամբ), որը կանոնավոր պեղումներ սկսել է 1990թ.-ից<sup>31</sup>:

1980-ական թթ. վերջում Գյուլնուշխանեի մարզի Բաբերդի և Կելկիտի շրջաններում (ճորոխ և Գայլ գետերի հովիտներ) սկսված հնագիտական աշխատանքներն ի հայտ բերեցին բազմաթիվ հնավայրեր: Ուսումնասիրվել են 60-ից ավելի հնավայրեր, ներառյալ նաև 1940թ.-ի հետազոտական արշավանքի ժամանակ հնագետ Ք. Քյոքթեպեի կողմից Բաբերդի շրջանում հիշատակված 5 հնավայրերը<sup>32</sup>: Այդ տարածքում հնագիտական հետազոտությունները շարունակվեցին նաև 90-ական թթ. սկզբին՝ Büyüktepe Höyük-ի պեղումների հետ միաժամանակ<sup>33</sup>:

Բարձր Հայքի և հարակից տարածքների հնագիտության մասին նյութեր են հրատարակվել և հրատարակվում Թուրքիայի, ինչպես նաև Գերմանիայի, Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի, Ավստրալիայի և այլ երկրների համապատասխան ինստիտուտները ներկայացնող մի շարք պարբերականներում, ինչպիսիք են Türk Arkeoloji Dergisi (Izmir), Türk Tarih Arkeologya

<sup>28</sup> Lamb W., The Culture of North-East Anatolia and its Neighbours, AnSt, 1954, № 4, p. 21-32. Koşay H., Turfan K., Erzurum-Karaz Kazisi raporu, Belleten. Türk Tarih Kurumu (այսուհետև՝ Belleten), 1959, № XXIII, s. 349-413.

<sup>29</sup> Kökten K., Orta, doğu ve kuzey Anadolu'da yapılan tarih öncesi araştırmaları, Belleten, 1944, № VIII/32, s. 659-680. Սուլմի, Kuzey-doğu Anadolu prehistoryasında Bayburt çevresinin yeri, Ankara Üniversitesi Dil ve Tarih-Coğrafya Fakültesi Dergisi, 1944, № III/5, s. 464-505. Koşay H., Pulur ve Güzelova (Erzurum Araştırmaları), TTKY, 1964, № XVII, 1, s. 91-94. Güneri S., Erzurum Çevresindeki Höyüklerin Yüzye Araştırması, Araştırma Sonuçları Toplantısı (այսուհետև՝ AST), 1988, № 5/2, s. 45-76. Սուլմի, Doğu Anadolu'da Yeni Gözlemler, Türk Arkeoloji Dergisi (այսուհետև՝ TAD), 1992, № XXX, s. 153-158.

<sup>30</sup> Koşay H., Vary H., Güzelova Kazisi. Ausgrabungen von Güzelova, Ankara, 1967.

<sup>31</sup> Sagona A., Pemberton E., Mcphee I., Excavations at Büyüktepe Höyük, 1992, AnSt, 1993, № 43, p. 69-83. Sagona A., Pemberton E., Mcphee I., Sagona C., Büyüktepe Höyük 1993 Activities, KST, 1994, № XVI, 1, p. 161-164.

<sup>32</sup> Kökten K., Kuzey-doğu Anadolu prehistoryasında Bayburt çevresinin yeri, s. 479-486, 498-505. Sagona A., An Archaeological Survey of the Bayburt and Kelkit Regions, North-Eastern Anatolia: The Pre-classical period, AST, 1989, № 7, p. 425-433.

<sup>33</sup> Sagona A., Bayburt Survey 1990, AST, 1991, № 9, p. 397-403. Սուլմի, Bayburt Survey 1991, AST, 1992, № 10, p. 261-268.

ve Etnografya Dergisi (Istanbul), Türk Tarih Kurumu Belleten (Ankara), Türk Tarih Kurumu Yayınlarından (Ankara), Dil ve Tarih-Göğrafya Fakültesi Dergisi (Ankara), American Journal of Archaeology (Princeton-Concord), Anatolian Studies (London), Ancient Near Eastern Studies (Melbourne), Jahrbuch des Deutschen Archäologischen Instituts (Berlin), Annals of Archaeology and Anthropology (Liverpool) և այլն:

### 3. **Թեմայի գիտական ուսումնասիրությունը և կարևորագույն գրականությունը**

Հայասա-Ազգիի ուսումնասիրության խնդրին են նվիրվել բազում աշխատություններ: Դրանց մեծ մասը վերաբերում է Հայասայի պատմությանը, տեղադրությանը և մշակույթի հարցերին: Գնահատելով կատարված աշխատանքները և ելնելով ներկա թեմայի պահանջներից՝ այստեղ նպատակահարմար է ամփոփ ներկայացնել միայն այն աշխատանքները, որոնք ուղղակի վերաբերում են Հայասա-Ազգիին:

Նշենք, որ Հայասային վերաբերող պատմագիտության բնագավառը վերելք ապրեց խեթագիտության զարգացմանը զուգահեռ: Դեռևս XXդ. սկզբին Գ. Վինքլերի, Ջ. Գարստանգի, Բ. Ջրոզնու և այլ արևելագետների կողմից հիմք դրված խեթագիտությունն իր առաջին հրատարակություններում տեղեկություններ է պարունակում նաև Հայասա-Ազգիի մասին: Եթե Բ. Ջրոզնին բավարարվել է միայն թուրքիկ ծանոթագրություններով Հայասա-Ազգի երկրի և նրան սահմանակից ցեղերի մասին<sup>34</sup>, ապա Է. Ֆոռերն անդրադարձել է Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. 15-13-րդ դարերում կազմավորված քաղաքական միավորների պատմությանը: 1927թ. նա գրել է գիտական մեծ արժեք ներկայացնող «Հայասա-Ազգի» աշխատությունը, որը լույս է տեսել չորս տարի անց՝ 1931թ.-ին<sup>35</sup>:

Հայասայի պատմության ուսումնասիրության գործում զգալի ներդրում է ակնավոր արևելագետ Յ. Ֆրիդրիխի կողմից հրատարակված Խաթթիի արքա Սուպպիլուլիումաս I-ի և Հայասայի թագավոր Խուկկանայի միջև կնքված դաշնագիրը<sup>36</sup>:

Հայասայի պատմության լավագույն սկզբնաղբյուրներն են նաև արևելագետ Ա. Գյոտցեի՝ գիտական մեծ արժեք ներկայացնող աշխատությունները<sup>37</sup>:

Հայասայի պատմության վաղ շրջանին են վերաբերում Յ. Գյոտցերի կողմից հրատարակված խեթական բնագրերը, որտեղ կան նաև Թուրխալիյաս III-ի և Սուպպիլուլիումաս I-ի դեպի Հայասա ձեռնարկած արշավանքների մասին տեղեկություններ<sup>38</sup>:

Է. Ֆոռերից և Ա. Գյոտցեից հետո Հայասայի պատմության համար շատ կարևոր աղբյուրների հրատարակությամբ հանդես եկավ ֆրանսիացի արևելագետ Է. Կավենյակը: Վերահրատարակելով Սուպպիլուլիումասի տարեգրություններն ու դաշնագրերը՝ Է. Կավենյակը

<sup>34</sup> Hrozny F., Die ersten Zehn Regierungsjahre des Königs Muršiliš II, Hethitische Keilschrifttexte aus Boghazköi, 1919, S. 156-223.

<sup>35</sup> Forrer E., İajasa-Azzi, S. 1-24.

<sup>36</sup> Friedrich J., Staatsverträge des İatti-Reiches in hethitischer Sprache, 2 T., 1930, S. 103-163.

<sup>37</sup> Götte A., Zur Geographie des Hethiterreiches, Kleinasatische Forschungen, 1930. B. 1, H. 1, S. 108-114. Սուլմի, Die Annalen des Muršiliš, 1933. Սուլմի, Kizzuwatna and the Problem of Hittite Geography, New Haven, 1940. Սուլմի, Kleinasien, München, 1957.

<sup>38</sup> Güterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, JCS, 1956, № 10, 2-4.

փորձել է ճշտել նաև Հայասայի տեղադրությունը՝ այն համարելով առաջին թագավորությունը Հայաստանում և Արևելքի հզոր միապետություններից մեկը մ.թ.ա. XIV դարում<sup>39</sup>:

Այդ ժամանակաշրջանում հայ պատմագիտությունը նույնպես սկսել էր զբաղվել Հայասայի պատմության հարցերով:

Դեռևս 1924թ. Ն. Մարտիրոսյանն իր հոդվածներից մեկում հանդես եկավ այն տեսակետով, որի համաձայն խեթական աղբյուրներում հիշատակվող Հայասան խեթերի հետ սերտ հարաբերություններ է ունեցել, իսկ հայերի նախնիները, նրանց մշակույթի ազդեցությանը ենթարկվելով, մի շարք բառեր են փոխառել խեթերենից: Փաստորեն, Ն. Մարտիրոսյանն առաջինն էր, որ կարծիք հայտնեց Հայասայի՝ հայերի հնագույն հայրենիքը հանդիսանալու մասին՝ սկիզբ տալով Հայասա-Հայք նույնության փաստին: Այս ամենն այնուհետև արժարծվել է նաև Կ. Ռոթի և Պ. Կրեչմերի հոդվածներում<sup>40</sup>: Ավելի ուշ Ն. Մարտիրոսյանը զարգացրեց իր այս տեսակետը՝ հանդես գալով նոր հրապարակումներով<sup>41</sup>:

Ա. Խաչատրյանը և Զ. Տաշյանը մասնակի առումով անդրադարձել են Հայասայի պատմությանը՝ կարևորելով նրա նշանակությունը Հայաստանի և հայ ազգի պատմության համար<sup>42</sup>:

«Հայաստանի պատմություն» գիտական մեծ արժեք ներկայացնող մենագրության մեջ Ն. Ադոնցն անդրադարձել է նաև Հայասայի պատմությանը՝ խեթական վավերագրերի վերլուծության հիմքի վրա<sup>43</sup>:

Հայասա-Ազգիի մասին հիմնարար ուսումնասիրություն է համարվում Գ. Ղափանցյանի «Հայասան-հայերի բնօրրան» մենագրությունը: Այստեղ հեղինակը խոր անդրադարձ է կատարել Հայասայի պատմության, լեզվի, տեղադրության, մշակույթի և էթնիկական հարցերին<sup>44</sup>:

Հայասա-Ազգիին վերաբերող հետաքրքիր ուսումնասիրություն է կատարել նաև Զ. Մանանդյանը, որի մոտեցումները Հայասայի պատմության առանցքային շատ հարցերին տարբերվել են իր ժամանակակից շատ պատմաբանների տեսակետներից<sup>45</sup>:

Հայասա-Ազգիի պատմությանը, ներառյալ նրա պատմագրության, տեղադրության, սոցիալ-տնտեսական հարաբերությունների խնդիրներին անդրադարձել է Լ. Բարսեղյանը<sup>46</sup>:

<sup>39</sup> Cavaignac E., Le premier royaume d'Arménie, Revue Hittite et Asiatique (այսուհետև՝ RHA), 1934, № 17, p. 9-14. Նույնի, L'histoire politique de l'Orient de 1340 à 1230: succession des événements, RHA, 1935, № 20, p. 117-126.

<sup>40</sup> Մարտիրոսեան Ն., Հայերենի յարաբերութիւնը հեթիտերէնի հետ, Հանդես Ամսօրեայ (այսուհետև՝ ՀԱ), 1924, թիվ 9-10, էջ 453: Roth K., Die Bedeutung des Armenischen, ՀԱ, 1927, թիվ 11-12, էջ 741-750: Kretschmer P., Der Nationale Name der Armenier, ՀԱ, 1933, թիվ 7-8, էջ 429-432 (հայերեն համառոտ թարգմանությունը):

<sup>41</sup> Մարտիրոսյան Ն., Պրպտումներ փոքրասիական անուններու մասին, ՊԲՀ, 1961, թիվ 3-4, էջ 82-107: Նույնի, Նպաստ մը հեթ և հայ բառաքննության, ՊԲՀ, 1972, թիվ 2, էջ 163-186:

<sup>42</sup> Խաչատրյան Ա., Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 41-48: Տաշեան Զ., Հաթեր եւ Ուրարտեանք, Վիեննա, 1934: Նույնի, Թէ ի՞նչպէս կազմուցաւ հայ ազգը, ՀԱ, 1934, թիվ 1-2, էջ 28-31:

<sup>43</sup> Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 33-47 (թարգմանված 1946թ. հրատարակված ֆրանսերեն բնագրից):

<sup>44</sup> Капанцянц Г. и Хайаса — колыбелья армян Еревані 1948.я

<sup>45</sup> Манандян А. О некоторых исторических проблемах и географии древней Армении Еревані 1956, Яж 68-155.

<sup>46</sup> Բարսեղյան Լ., Խայասա-Ազգիի ու նրա մի քանի բնակավայրերի տեղադրման հարցի շուրջը, ՊԲՀ, 1963, թիվ 3, էջ 307-313: Նույնի, Հայասա-Ազգիի ռազմա-քաղաքական պատմությունից, Տեղեկագիր: Հասարակական գիտություններ (այսուհետև՝ ՏՀԳ), 1964, թիվ 7, էջ 73-79: Նույնի և Изя и Игориия древнейших племенных Яююзовья Армяняжогоянагорьяяя XV-XIII вв. Ядоянээж (Хайа Яаф Аззи) и Еревані

Հայասա-Ազգիի պատմությանն է անդրադարձել նաև Ի. Դյակոնովը՝ հիմնականում հայոց լեզվի, հայոց վաղնջական պատմության և հայ ազգի ցեղասերման հարցերի շրջանակներում<sup>47</sup>:

Առանձնահատուկ արժեք են ներկայացնում Վ. Խաչատրյանի աշխատությունները: Նա իր ուսումնասիրությունների ամփոփումը տվել է «Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում» աշխատության մեջ՝ վերլուծելով և մեկնաբանելով խեթական սկզբնաղբյուրները<sup>48</sup>:

Գ. Ջահուկյանը նույնպես իր ուսումնասիրություններում բազմիցս անդրադարձ է կատարել Հայասային՝ հիմնականում լեզվաբանական տեսանկյունից՝ տալով Հայասայի լեզվի և հինանատոլիական լեզուների փոխհարաբերությունները<sup>49</sup>:

Հայասային և ընդհանրապես Հայկական լեռնաշխարհի մյուս քաղաքական միավորներին վերաբերող սեպագիր աղբյուրների համակողմանի վերլուծությամբ կարևոր են Ա. Քոսյանի հեղինակած աշխատությունները: Դրանք առանձնանում են նաև նորահայտ սկզբնաղբյուրների օգտագործմամբ, Հայկական լեռնաշխարհի երկրների հետ խաթրիի հարաբերությունների նորովի մեկնաբանություններով: Կարևոր է նաև ընդգծել նրա՝ 2004թ. հրատարակված «Հայկական լեռնաշխարհի տեղանունները (ըստ խեթական սեպագիր աղբյուրների)» մենագրությունը<sup>50</sup>:

Հայ պատմաբաններից Հայասա-Ազգիի պատմությանն են անդրադարձել նաև Ե. Քասունին, Ս. Երենյանը, Ս. Պետրոսյանը, Յ. Ավետիսյանը և այլոք<sup>51</sup>:

Հայասա-Ազգիի պատմության, հնագիտության և մշակույթի հարցերը խեթագետների կողմից բազմիցս ուսումնասիրվել են և այժմ էլ ուսումնասիրվում են: Մասամբ կան ընդհանուր առմամբ թեմային անդրադարձել են՝ Ֆ. Կոռնելիուսը, Օ. Գըրնին, Ջ. Գարստանգը, Ջ. Յաքարը, Ա. Ունալը, Օ. Կառուբան, Թ. Բրայսը և այլք<sup>52</sup>:

## ԳԼՈՒԽ ԱՈՒՋԻՆ

---

1964.

<sup>47</sup> Дьяконов И. И. Предыстория армянского народа и Ереван. 1968. № 81-101.

<sup>48</sup> Хачатрян В. В. Язычные провинции Хеттской империи. Ереван. 1971. № 28-145. Սույնի, Хайа Яцыня Л. Գ. 1972 թիվ 8 ի էջ 32-41: Սույնի, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998:

<sup>49</sup> Джаукян Г. Г. Хайа Який язык и его отношение к индоевропейским языкам. Ереван. 1964. Սույնի, Հայասայի լեզվի հինանատոլիական ծագման վարկածը, ՊԲՀ, 1976, թիվ 1, էջ 89-110: Սույնի, Հայոց լեզվի պատմություն, Երևան, 1987, էջ 322-341: Սույնի, Оя отношения эайа Якогоя армянского языка. ՊԲՀ 1988, թիվ 1, էջ 60-79: ՊԲՀ 1988, թիվ 2, էջ 68-88: Սույնի, Լեզվական նոր տվյալներ հայոց նախաքրիստոնեական կրոնի և հավատալիքների մասին, ՊԲՀ, 1992, թիվ 1, էջ 14-27:

<sup>50</sup> Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999: Սույնի, Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, 2004:

<sup>51</sup> Քասունի Ե., Նախահայկական Հայաստան, Պէյրուք, 1950, էջ 76-116: Երենյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, ՊԲՀ, 1970, թիվ 2, էջ 27-56: Петросян С. С. Племенная Юозя Хайа Яф Азия. Я Ягемя двоичниэя противопоявления. Л. Գ. 1987, թիվ 3, էջ 77-87: Ավետիսյան Յ., Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Սիջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը մ.թ.ա. XVII-IX դդ., Երևան, 2002:

<sup>52</sup> Cornelius F., Zur hethitischen Geographie: die Nachbarn des Hethiterreiches, RHA, 1958, № 62, S. 1-17. Սույնի, Neue Arbeiten zur hethitischen Geographie, Anatolica, 1967, № I, S. 62-77. Garstang J., Gurney O., The Geography of the Hittite Empire, London, 1959. Gurney O., The Hittites, 1964. Yakar J., Beyond the Eastern Borders of the Hittite Empire: an Archaeological Assesment. In: Hittite and Other Anatolian and Near Eastern Studies in Honour of Sedat Alp, Ankara, 1992, p. 507-516. Սույնի, Recent Contributions to the Historical Geography of the Hittite Empire, Mitteilungen Veröffentlichung der Deutschen Orient-Gesellschaft (այսուհետև՝ MVDÖG), 1980, № 112, p. 75-94. Ünal A., Hettiter Devrinde Anadolu, I, Istanbul, 2002, Arkeoloji ve Sanat Yayinlari. Carruba O., Die Hajasa-Verträge Hattis, Documenta Asiae Minoris, Wiesbaden, 1988, S. 59-75. Bryce T., The Kingdom of the Hittites, Oxford, 1999.

## Հայասա-Ազգիի տեղադրությունը և տեղանունները

### 1. 1. Հայասա-Ազգիի պատմաաշխարհագրական դիրքը

Հայկական լեռնաշխարհի հնագույն պետական կազմավորումների պատմության վերաբերյալ կարևոր են խեթական սեպագիր աղբյուրները, որոնց՝ 1920-ական թվականներից հրապարակման շնորհիվ ուսումնասիրվել է մ.թ.ա. II հազարամյակում գոյություն ունեցած քաղաքական միավորների պատմությունը, ինչպես նաև էթնիկական, սոցիալական իրավիճակի և հոգևոր մշակույթի բազմաթիվ խնդիրներ:

Խեթական սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններից երևում է, որ դեռևս մ.թ.ա. XIV դարում, գուցե և ավելի վաղ շրջանում, Հայկական լեռնաշխարհում կազմավորվել էր մի պետական միավոր՝ թագավորություն, որին խեթերն անվանում էին Հայասա (խեթ. KUR URU i'ayaša՝ «Հայասա քաղաքի երկիր») կամ Ազգի (խեթ. KUR URU Az(z)i՝ «Ազգի քաղաքի երկիր»): Խեթա-հայասական ռազմաքաղաքական փոխհարաբերություններին վերաբերող սեպագիր տեքստերի տվյալների հիման վրա հետազոտողները քննել են Հայասա-Ազգիի ընդգրկած տարածքի և Հայկական լեռնաշխարհում նրա պատմաաշխարհագրական դիրքով պայմանավորված նշանակության հետ կապված խնդիրները:

Հայասա-Ազգիի տեղադրության հարցը կարևոր է Հայոց պատմության հնագույն շրջանի ուսումնասիրման առումով, քանզի շատ պատմաբանների կողմից այն ընդունվել է որպես Հայք-Հայաստան երկրի գոյության փաստ մ.թ.ա. II հազարամյակում: Սույն նույնացումը (Հայք-Հայասա) հանդիպել է նաև առարկությունների<sup>53</sup>, երբեմն նույնիսկ մերժվել է Հայասա-Ազգի երկրի առնչությունը Հայաստանի հետ<sup>54</sup>:

Հայասայի պատմության գիտական ուսումնասիրության գործում իր ավանդն ունի արևելագետ Յ. Ֆրիդրիխը: Նա դեռևս 1925թ. իր աշխատություններից մեկում Հայասա երկրի տեղադրությունը կապել էր Թեգարամա երկրից (ներկայիս Սալաթիայից հյուսիս-արևմուտք) հյուսիս-արևելք ընկած տարածքի, այսինքն՝ Բարձր Հայքի հետ: Փաստորեն, նա Հայասան տեղադրել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում: Հետագայում Յ. Ֆրիդրիխն առաջարկեց Հայասան տեղադրել Կասկա (Արևելապոնտական լեռների շրջանը) և Ալզի (Վերին Տիգրիսի ակունքների մոտ) երկրների միջև, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում<sup>55</sup>:

Ա. Գյոնցեն 1927թ. իր հոդվածներից մեկում Հայասա-Ազգին տեղորոշել է Տրապիզոնից արևելք՝ Պոնտոսի մերձափնյա շրջանում<sup>56</sup>: Այնուհետև, վերանայելով իր այդ տեսակետը, նա Հայասա-Ազգին տեղադրել է Արևմտյան Եփրատի և ճորոխի ավազաններում՝ մինչև Սև ծովի

<sup>53</sup> Дьяконов И. И. Предыстория армянского народа и Ереван. 1968. № 209-214.

<sup>54</sup> Ünal A., Hititler Devrinde Anadolu, I, Istanbul, 2002, s. 158.

<sup>55</sup> Friedrich J., Aus dem hethitischen Schriftum, Leipzig, 1925, H. I, S. 9, H. II, S. 21. Նույնի, Staatsverträge des iattischen Reiches in hethitischer Sprache, 2 T., 1930, S. 103-104.

<sup>56</sup> Goetze A., Zur Geographie des Hethiterreichs, Kleinasatische Forschungen, 1930, B. 1, H. 1, S. 108-114.

ափերը<sup>57</sup>:

Հայասան Սև ծովի ափերին տեղորոշող հետազոտողները կարծում են, որ այն գտնվում էր դրա հարավ-արևելյան ափերին, և նրանց հիմնական կռվանը Ազգի Արիպա քաղաքի տեղադրությունն է, որն ըստ Մուրսիլիս II-ի տարեգրության՝ «գտնվում էր ծովի մեջ» (խեթ. <sup>URU</sup> A-ri-ip-ša-aš Š[À A.A]B.BA<sup>58</sup>):

1931թ. է. Ֆոռերը կարծիք է հայտնել, որ Հայասա-Ազգին պետք է Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում տեղադրել, ինչն ընդունվել է արևելագետների մեծ մասի կողմից<sup>59</sup>: 1932թ. տպագրված իր մի հոդվածում Պ. Կրեչմերը, նշելով, որ Հայասա անունը նշանակում է Հայաստան (նրանից առաջ այդ կարծիքն է արտահայտել Կ. Ռոթը<sup>60</sup>), փաստորեն, համաձայնել է Հայասան Բարձր Հայքում տեղադրելուն՝ է. Ֆոռերի առաջարկած տեսակետի հետ<sup>61</sup>:

Հայասայի պատմության համար կարևոր աղբյուրների հրատարակությամբ հանդես է եկել ֆրանսիացի արևելագետ է. Կավենյակը: Վերահրատարակելով Սուպիլուլիումաս I-ի տարեգրություններն ու դաշնագրերը՝ նա փորձել է ճշտել Հայասայի տեղադրությունը՝ այն համարելով առաջին թագավորությունը Հայաստանում և Արևելքի հզոր միապետություններից մեկը: Է. Կավենյակը Հայասա-Ազգին տեղադրել է Վերին Եփրատի ավազանում<sup>62</sup>:

Իր ուսումնասիրություններում, որոնք հիմնականում վերաբերել են Խեթական պետության պատմական աշխարհագրությանը, Ֆ. Կոռնելիուսն անդրադարձել է նաև Հայասա-Ազգի պատմությանը: Նա նույնպես միացել է այն ուսումնասիրողներին, որոնք Հայասա-Ազգին տեղորոշել են Սև ծովի ափերին: Ֆ. Կոռնելիուսը Հայասա-Ազգին տեղադրել է Սև ծովի հարավ-արևելյան ափերին (ներկայիս Սամսուն քաղաքի մոտ): Իսկ Հայասայի գլխավոր քաղաքն, ըստ նրա, տեղադրված է եղել Քայլ (Կելկիտ) գետի ներքին ավազանում՝ Horoztepe (Հորոզթեփե) հնավայրի տեղում<sup>63</sup>:

Սակայն, այս տեսակետը վաղուց է մերժվել ուսումնասիրողների կողմից և Հայասա-Ազգի տեղադրումը Խաթթիից հյուսիս-արևելք հստակ երևում է Խեթական տեքստերի տվյալներից:

Ըստ Գ. Մելիքիշվիլի՝ Հայասա-Ազգին գտնվում էր Խեթական տերության հյուսիս-արևելյան մասում: Ըստ նրա, Խաթթիին տարածքային առումով առավել մոտ է գտնվել Ազգին, այդ պատճառով Խեթերը հաճախ Հայասա անվան փոխարեն օգտագործել են այդ տեղանունը: Այսպիսով, Գ. Մելիքիշվիլին Հայասան տեղորոշել է Արևմտյան Եփրատի վերին ավազանում,

<sup>57</sup> Goetze A., Kleinasien, München, 1957 (տե՛ս գրքի վերջում գետեղված քարտեզը).

<sup>58</sup> KBo IV 4 IV 5 (Götze A., Die Annalen des Muršiliš, MVAG, 1933, № 38, S. 132).

<sup>59</sup> Forrer E., ĩajasa-Azzi, Caucasia, 1931, № 9, S. 1-2.

<sup>60</sup> Roth K., Die Bedeutung des Armenischen, ՅԱ, 1927, թիվ 11-12, էջ 741-742:

<sup>61</sup> Kretschmer P., Der Nationale Name der Armenier, ՅԱ, 1933, թիվ 7-8, էջ 429, 431 (հայերեն համառոտ թարգմանությունը):

<sup>62</sup> Cavaignac E., L'extension de la zone des Gasgas a l'ouest, RHA, 1931, № 4, p. 101-110. Նույնի, Le premier royaume d'Arménie, RHA, 1934, № 17, p. 11-14. Նույնի, La place du Palâ et du Tumanna, RHA, 1936, № 22, p. 174-177.

<sup>63</sup> Cornelius F., Zur hethitischen Geographie: die Nachbarn des Hethiterreiches, RHA, 1958, № 62, S. 3. Նույնի, Neue Arbeiten zur Hethitischen Geographie, Anatolica, 1967, № I, S. 68.

որին սահմանակից են եղել Կասկա, Իսուվա և Վերին երկրները<sup>64</sup>:

Ի. Դյակոնովը սկզբնապես Հայաստան-Ազգին տեղորոշել է Վերին Եփրատի ավազանում<sup>65</sup>, սակայն իր հետագա աշխատություններից մեկում, համաձայն չլինելով այն կարծիքին, թե Հայաստան պետք է փնտրել ներկայիս Երզնկայի և Էրզրումի շրջակայքում, առաջարկեց տեղադրել այն Սև ծովի հարավ-արևելյան ափերին: Ազգին, ըստ նրա, գտնվում էր Պոնտոսում՝ Խարշիտ գետի ավազանում և տարածվում էր մինչև Փառնակիա, իսկ Հայաստան՝ ճորոխ գետի ավազանում՝ որպես կենտրոն ունենալով Բաբերդ քաղաքի շրջակայքը, որտեղից Հայաստանի իշխանությունը կարող էր տարածվել դեպի հարավ: Ազգի Արիպաս քաղաքը Ի. Դյակոնովը տեղորոշել է Սև ծովի ափերին՝ Փառնակիայի մոտ, իսկ Ազգի մյուս հայտնի կենտրոնը՝ Դուգգաման, նա տեղադրել է Լյուկոս (Գայլ) գետի ավազանում կամ Լյուկոս ու Խարշիտ գետերի ավազանների միջև ընկած լեռնանցքներում: Պախիսուվան նա տեղադրել է ներկայիս Կեմախից արևմուտք՝ Ջիմառայի մոտ: Ինգալավան, ըստ նրա, Հայաստան-Ազգի սահմանային բերդերից մեկն էր, սակայն, ի տարբերություն մի շարք հեղինակների, նա այն հին հայկական Անգեղ վայրում չի տեղորոշել: Ըստ Ի. Դյակոնովի՝ Կումմախան գտնվել է ներկայիս Կեմախի տեղում և Հայաստանի կազմում է ընդգրկվել միայն ժամանակավորապես՝ դրա առավել տարածման տարիներին<sup>66</sup>:

Հայաստան-Ազգի տարածվելը Արևելապոնտական լեռներից հյուսիս՝ Սև ծովի ափերին քիչ հավանական է և հենվել է միայն Արիպասի որևէ ջրային տարածքի ափին գտնվելու փաստի վրա, սակայն, այդ ջրային տարածքը կարող էր հանդիսանալ նաև Վանա լիճը (ծովը):

Ջ. Մելլարթը Հայաստան-Ազգին տեղադրել է Եփրատի մեծ ոլորանից մինչև Էրզրում ընկած տարածքում՝ հավանական համարելով նաև, որ այն տարածվել է Արաքսի հովտում՝ մինչև Արարատյան դաշտավայր, որտեղ գտնվող Մեծամոր հնավայրը նա համարել է Հայաստան-Ազգի մաս<sup>67</sup>:

Ֆ. Հաազը համաձայն էր այն տեսակետի հետ, որ Հայաստան-Ազգին առավելապես պետք է գտնվեր Երզնկայի, Տրապիզոնի և Էրզրումի միջև ընկած տարածքում<sup>68</sup>:

Նման տեղադրություն է առաջարկել նաև Ջ. Յաքարը, նշելով, որ Հայաստան-Ազգին գտնվել է խեթական Վերին երկրից արևելք (ներկայիս Թոքաթի և Սեբաստիայի մարզերի տարածքը)՝ ընդգրկելով Երզնկայի, Էրզրումի շրջանները, ինչպես նաև Վերին Գայլ և ճորոխ գետերի ավազանները: Վերին Գայլի ավազանը նա համարում էր այն վայրը, որտեղ արևելյան կասկական ցեղերը սահմանակցել են Հայաստան-Ազգի հետ: Ջ. Յաքարը, Հայաստանի տեղադրությունը ենթադրելով այդ տարածքներում, հյուսիսում այն հասցրել է մինչև Սև ծովի ափերը՝ Տրապիզոնի մոտ<sup>69</sup>:

<sup>64</sup> Меликишвили Г. А. Наириф Урарту и Гбилия. Идил 1954 г. № 81-82. я

<sup>65</sup> Дьяконов И. З. Хетты и фригийцы в Армении и Переднеазиатский Борник (այսուհետև՝ ПАСБ) 1961 թ. № 333-368 (տե՛ս հոդվածում գետեղված քարտեզը):

<sup>66</sup> Дьяконов И. З. Треды Гория армянского народа 1981-84.

<sup>67</sup> Mellaart J., Anatolian Trade with Europe and Anatolian Geography and Culture Provinces in the Late Bronze Age, AnSt, 1968, № XVIII, p. 201.

<sup>68</sup> Haas V., Die ältesten Nachrichten zur Geschichte des armenischen Hochlands. Xenia, Konstanz, 1985, S. 21-30.

<sup>69</sup> Yakar J., Hittite Involvement in Western Anatolia, AnSt, 1976, № 26, p. 117-128 (տե՛ս հոդվածում գետեղված քարտեզը՝ էջ 118):



Ի տարբերություն հայ պատմագիտության մեջ հայտնված տեսակետների՝ արևմտյան շատ գիտնականներ Հայաստանի պատմությանն անդրադարձել են որպես արևելագիտության մի մաս՝ այն չդիտելով հայոց պատմության տեսանկյունից: Այնինչ Հայաստան-Ազգի պատմության հարցերը կարևոր տեղ են զբաղեցնում հատկապես հայագիտության մեջ:

Հայ պատմագիտության մեջ առաջինը Հայաստանի պատմության հարցերով զբաղվել է հայտնի խեթագետ, Բ. Յրոզնու աշակերտ Ն. Մարտիրոսյանը: Նրա կարծիքով Հայաստան ասելով պետք է հասկանալ Հայաստան, և այն գտնվել է ներկայիս Դերսիմի և Խարբերդի շրջաններում: Մեծ Ծոփքի Անձիտ գավառը, որը համապատասխանում է ներկայիս Խարբերդի դաշտին, հանդիսացել է հայերի նախնիների՝ հայաների հայրենիքը՝ հայերի բնօրրանը: Իսկ հայասական ցեղերի միավորումով այնուհետև ստեղծվել է մի պետություն, որն ընդգրկել է Փոքր Հայքը և Բարձր Հայքի հարավ-արևմտյան մասը: Ն. Մարտիրոսյանը հավանական է համարել, որ Հայաստանի Արիպսա քաղաքը գտնվել է Ծոփք լճի ափին կամ Վանա լճի արևմտյան ափերին: Կունմախան, ըստ նրա, գտնվել է ներկայիս Կեմախի տեղում և հանդիսացել է Հայաստան-Ազգի սահմանամերձ և գլխավոր քաղաքներից մեկը: Ն. Մարտիրոսյանը նշում է, որ Հայաստանի դաշնակցային պետության մեջ են ներգրավվել Իսուվա (ըստ Ն. Մարտիրոսյանի՝ հետագայի Փոքր Ծոփքի տարածքում), Պալա (Ծոփքի Բալահովիտ գավառը), Իշմերիկա (սահմանակից է եղել Իսուվա-Ծոփքին և Ազգիին և համապատասխանել է ներկայիս Դերսիմին), Գաշգաշ (ըստ Ն. Մարտիրոսյանի՝ այս ժողովուրդն ապրել է Հալիսի ակունքներից մինչև Վերին Եփրատ ընկած տարածքում և նրա անվանումը մնացել է ճորոխի ակունքների մոտ գտնվող ներկայիս Կիսկիմ ավանի անվան մեջ) և Ազգի երկրները: Խեթական աղբյուրներում հիշատակված Մալազգիյան (ներկայիս Մալաթիայի մոտ) մերթընդմերթ գտնվել է խեթերի, ասորեստանցիների և հայասացիների ձեռքում<sup>70</sup>:

Խարբերդի դաշտը այդ ժամանակաշրջանում մասն է կազմել Հայկական լեռնաշխարհի մեկ այլ պետական կազմավորման՝ Իսուվայի, որը չի մտել Հայաստան-Ազգի կազմի մեջ, չնայած չի կարելի բացառել իսուվա-հայասական դաշնակցային հարաբերությունների գոյությունը որոշակի ժամանակահատվածում: Իսուվան և Հայաստան-Ազգին խեթերի կողմից տարբերակվել են որպես տարբեր *երկրներ*: Առավել ևս դժվար է պատկերացնել Հայաստանի ամրացված քաղաք Արիպսայի տեղորոշումը Իսուվայի (Ծոփքի) տարածքում, կամ Կասկա երկրի և Մալազգիյայի (Մալդիյա) գտնվելը Հայաստան-Ազգի կազմում:

Ա. Խաչատրյանն իր ուսումնասիրության մեջ շեշտել է, որ խեթերը Հայաստանի համար ունեին մի ընդհանուր անուն՝ Հայաստ, որի աշխարհագրական դիրքը նա որոշել է Կարինից Վան ընկած տարածքում: Արիպսա քաղաքը նա տեղադրել է Վանա լճի արևմտյան ափին: Հայաստ և Հայաստան բառերի նմանությունը հիմք ընդունելով՝ Ա. Խաչատրյանը նույնպես

---

Նույնի, Beyond the Eastern Borders of the Hittite Empire: an archaeological Assessment.-In: Hittite and Other Anatolian and Near Eastern Studies in Honour of Sedat Alp, Ankara, 1992, p.508-512.

<sup>70</sup> Մարտիրոսեան Ն., Հայերենի յարաբերութիւնը հեթիղերէնի հետ, ՀԱ, 1924, թիվ 9-10, էջ 453: Նույնի, Պրպտուններ փոքրասիական անուններու մասին, ՊԲՀ, 1961, թիվ 3-4, էջ 93-105:

շեշտել է, որ այն Հայաստան անվան հնագույն ձևն է<sup>71</sup>:

Հայասայի պատմությանն է անդրադարձել նաև Յ. Տաշյանը: Ըստ նրա՝ Հայասան Հայաստանի լեռնամասն էր կամ Արևմտյան Հայաստանը: Հայասայի մասն է կազմել Ազգին: Հայասան սահմանակցել է խեթերի Վերին աշխարհին (ըստ Յ. Տաշյանի՝ Փոքր Հայքի մի մասը և արևելյան Կապադովկիայի որոշ շրջաններ) և Իսուվա երկրին (Ծովքը, որը Յ. Տաշյանը տվել է նաև Շուվէ ձևով): Ըստ Յ. Տաշյանի՝ Իսուվան, Ալշեն (Աղծնիքը) և Հայասան հայ ազգի հիմնական բնակեցման վայրերն են եղել<sup>72</sup>:

Հայասայի պատմության հարցերին հանգամանորեն անդրադարձել է Ն. Ադոնցը: Նա նշել է, որ խեթական թագավոր Թուդխալիյաս III-ը Հայասայի դեմ կատարած իր երկրորդ արշավանքի ժամանակ (նրա հետ էր նաև իր որդին՝ Սուպալիլուլիումասը) ընդհարվել է նրա թագավոր Կարաննիսի հետ Կուլմախա քաղաքի մոտ: Կարաննիս թագավորի անունից Ն. Ադոնցը բխեցրել է հայկական Կարին քաղաքի անվանումը, իսկ Կուլմախայից՝ Դարանադյաց գավառի Կամախ անունը: Սա էլ հիմք է տվել նրան, որ Հայասայի աշխարհագրական դիրքը որոշի Վերին Եփրատի հովտում: Ըստ Ն. Ադոնցի՝ Կամախի հյուսիսում Հայասան սահմանակցել է Կասկա երկրին, որը տարածվել է Արևելապոնտական լեռների շրջանում՝ մինչև Հալիսի գետաբերանը: Կասկերի ցեղերն իրենց հաճախակի հարձակումներով անհանգստացրել են խեթերի Վերին երկիրն, ըստ հեղինակի՝ Խաթթիի հյուսիսային և հյուսիս-արևմտյան մասերը: Նա նույնպես նշել է, որ Հայասա և Ազգի անունները հոմանիշ են և մեջընդմեջ գործածվել են Մուրսիլիսի տարեգրության մեջ նույն տարածքի իմաստով: Ընդ որում, Ն. Ադոնցը տարանջատել է Ազգի, Ալշի և Իսուվա երկրները՝ գտնելով, որ դրանք առանձին են եղել: Նա Ազգի երկիրը տեղակայել է Դերսիմի շրջանում՝ Կուլմախա-Կամախ քաղաքի հարավում: Ազգիի երեք քաղաքները՝ Ինգալավան, Արիպսան, Դուգգաման, նա տեղադրել է Կուլմախա տանող ճանապարհների վրա: Իսուվայի թագավորությունը, ըստ նրա, գտնվել է Հայասայի հարավում՝ ստորին Արածանիի հովտում, և զբաղեցրել է Եփրատի և Խարպուտի միջև ընկած երկրամասը: Ալշի (կամ Ալգի) երկիրն, ըստ Ն. Ադոնցի, գտնվել է Իսուվայից արևելք:

Այսպիսով, ըստ Ն. Ադոնցի, Հայասա-Ազգի թագավորությունը գտնվել է Արևմտյան Եփրատի վերին հոսանքի ավերին՝ Դերսիմի զանգվածի շուրջը, և Իսուվա, Ալշե թագավորությունների հետ միասին ներկայացել է որպես Հայաստանում հայտնի առաջին քաղաքական կազմավորումներից մեկը<sup>73</sup>:

Հայասայի մասին հատուկ ուսումնասիրություն է կատարել Գ. Ղափանցյանը: Իր աշխատության մեջ նա պատկերացում է տվել Հայասայի ընդգրկած տարածքի մասին: Նա համաձայն էր այն մտքի հետ, որ Հայասա-Ազգի երկիրը զբաղեցրել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան մասը՝ ճորոխ, Եփրատ և Արաքս գետերի վերին հոսանքի շրջանները՝ համընկնելով Փոքր Հայքի արևելյան և Բարձր Հայքի տարածքներին: Նա Հայասա-Ազգիի կենտրոնում է դրել ներկայիս Կամախի, Երզնկայի, Դերջանի և Սպերի միջև ընկած տարածքը: Գ. Ղափանցյանը կարծում էր, որ Ազգին ընդգրկել է Հայասա-Ազգիի արևմտյան շրջանները, իսկ

<sup>71</sup> Խաչատրյան Ա., Հայաստանի սեպագրական շրջանի քննական պատմություն, Երևան, 1933, էջ 41-48:

<sup>72</sup> Տաշեան Յ., Հաթեր եւ Ուրարտեանք, Վիեննա, 1934, էջ 35-36, 167-174, 339-343:

Հայասան, հավանաբար, գրավել է արևելյան շրջանները՝ Դարանադին, Եկեղյացը, Դերջանը և Սպերը, միգուցե նաև Կարինի շրջանը: Գ. Ղափանցյանը Կունմախան տեղադրել է ներկայիս Կամախի տեղում՝ այն համարելով Հայասա-Ազգիի կենտրոնը, իսկ հիշատակված Ուրա բերդը՝ Կամախի մոտ գտնվող հին հայկական Անի ամրոցի տեղում: Գ. Ղափանցյանը կարծում էր, որ Արիպսան և Դուզգաման գտնվել են Հայասա-Ազգիի արևելյան մասում՝ առավել անվտանգ ու հեռու խեթական հարձակումներից՝ Կարինի մոտ գտնվող ճահճոտ վայրերում կամ ներկայիս Բերդակ բնակավայրի մոտ, կամ էլ Էրզրումից 15կմ հարավ-արևելք, որտեղ միջնադարում (ՎՊ.) հիշատակվել է Արաբիս գյուղը՝ հնարավոր համարելով, որ այդ բնակավայրի տեղում ճահիճ է եղել: Դեռևս հռոմեական ժամանակներից հիշատակվող Ազա քաղաքը (հայոց Սատաղ բնակավայրից արևմուտք), ըստ հեղինակի, հանդիսացել է Ազգի երկրամվան վերափոխված ձևը: Հայասայի Բիթառիզա (Պաթթեյարիկա) քաղաքը գտնվել է հետագայի Բթառիճի մոտ:

Հայասա-Ազգին Գ. Ղափանցյանը համարել է հայ-արմենների հնագույն օրրանը, որն արևմուտքում սահմանակցել է խեթական աշխարհի հետ, հավանաբար, հետագայի հռոմեական Ջիմարա-Կարահիսար գծով՝ հարևան լինելով Վերին երկրին, իսկ արևելքում նրա սահմանները հասել են մինչև Կարինի շրջանը՝ ընդգրկելով Կամախի, Երզնկայի, Դերջանի և Սպերի շրջանները: Արևմուտքից արևելք Հայասա-Ազգին տարածվել է մոտ 150-170կմ: Սակայն, ըստ հեղինակի, այն հավակնություններ է ցուցաբերել նաև ավելի արևմուտք և հարավ ընկած տարածքների վրա<sup>74</sup>:

Կունմախա քաղաքը խեթական սկզբնաղբյուրներում նշվել է որպես առանձին քաղաքական միավոր և եթե գտնվել է Հայասա-Ազգիի կազմում, ապա ժամանակավորապես և հետագայում անցել է խեթական գերիշխանության տակ: Քիչ հավանական է, որ այն Հայասայի կենտրոնն է եղել, հաշվի առնելով այդ քաղաքի աշխարհագրական դիրքը (խաթթիին մոտ գտնվելը) և խեթական աղբյուրներում այդպիսի տվյալների բացակայությունը:

Ըստ Ե. Քասունու՝ Հայասան մի հզոր պետություն է եղել, որը տարածվել է Արևմտյան Եփրատի ավազանից մինչև Վանա լիճ: Հայասայի արևմտյան մասում է գտնվել Ազգին, որը ենթակա է եղել Հայասային և ունեցել է իր թագավորը: Ազգին գտնվել է Բարձր Հայքում և իր մեջ է ընդգրկել ներկայիս Երզնկա քաղաքը և Արևմտյան Եփրատի վերին բազուկի ավազանը: Նա կարծիք է հայտնել, որ Ազգիի մայրաքաղաքը գտնվել է հետագայի Արծն քաղաքի տեղում: Ազգի-Հայասայի և Խուրրի-Միտաննի պետությունների միջև են գտնվել Իսուվա կամ Իսուա, Ալշե և Մեխրի երկրները: Ըստ Ե. Քասունու՝ Հայասայի հյուսիս-արևմուտքում գտնվել է Կասկա ցեղերի երկիրը, որը Փոքր Հայքից տարածվել է մինչև Պափլագոնիա: Իսկ Հայասային մոտ գտնվող խեթերի Վերին Աշխարհն, ըստ հեղինակի, հետագա Փոքր Հայքի մեծ մասն է ընդգրկել՝ Կապադովկիայի որոշ շրջաններով հանդերձ: Հայասացիների գրաված Սամուխա քաղաքը նա տեղորոշել է միջնադարյան Ծամնդավի մոտ: Կունմախա կամ Կամուխա քաղաքը Ե. Քասունին համարել է Հայասայի քաղաքներից մեկը և նույնպես տեղորոշել է Անի-Կամախի տեղում: Մուրսիլիսի տարեգրության մեջ հիշատակված Ինգալավա քաղաքը նա տեղորոշել է

<sup>73</sup> Ադրնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 35, 39-40, 44-46:

<sup>74</sup> Капанцянц Г. и Хайа Я. Аф колыбелья армян в Ереване, 1948, стр. 58-64.

միջնադարյան Անգեղ բերդի տեղում, իսկ Արիպսա քաղաքը՝ Վանա լճի ափին՝ Դատվանի կամ Խլաթի մոտ: Նա համակարծիք չէ այն հեղինակների հետ, որոնք Հայաստանի Դուզգամա քաղաքը տեղադրել են Դատվանի մոտ, այլ այդ քաղաքը տեղորոշել է Մանազկերտի մոտ և հավանական է համարել, որ այն հանդիսացել է պետության մայրաքաղաքը: Ազգիի Խալիմանա բնակավայրը նա տեղորոշել է Ծոփքում՝ Ialimbanan բնակավայրի տեղում<sup>75</sup>:

Այսպիսով, Ե. Քասունին նույնպես Հայասան տեղադրել է Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում՝ միևնույն ժամանակ կարծիք հայտնելով, որ իր հզորացման ժամանակ այն, հավանաբար, տարածվել է մինչև Մասիս սար և Ուրմիա լիճ<sup>76</sup>: Սակայն, Հայասա-Ազգիի կենտրոնների տեղորոշումը հետագայի Արծնի և Մանազկերտի մոտ ոչ մի փաստով հիմնավորված չէ, առավել հավանական է որպես մայրաքաղաք նշել խեթական տեքստերից հայտնի Հայասա քաղաքը:

Անդրադառնալով Հայասա-Ազգիի թագավորության պատմությանը՝ Հ. Մանանդյանը տվել է նաև դրա տեղադրությունը Վանա լճից արևմուտք և հյուսիս ընկած շրջաններում: Նա գտնում էր, որ Հայասայի հյուսիս-արևմտյան սահմանները հասնում էին մինչև Մեծուրի լեռները, այսինքն՝ մինչև ներկայիս Դերսիմի շրջանը, իսկ արևելքում՝ մինչև Վանա լճի հյուսիս-արևելյան ափերը: Հ. Մանանդյանը խեթական արձանագրություններում նշված Կունմախան կամ Կամուխան նույնացրել է հայկական Կամախի հետ (Դարանադյաց գավառում), սակայն, ի տարբերություն մյուս ուսումնասիրողների, որոնք նշել են, որ այդ բնակավայրը Հայասայի կազմում է գտնվել, նա այն չի մտցրել Հայասա-Ազգիի կազմի մեջ: Կունմախան և նրանից հարավ գտնվող Տանկուվան, ըստ նրա, գտնվել են խեթերին պատկանող սահմանամերձ շրջանում, որն ընդգրկվել էր խեթական արձանագրությունների հիշատակած Վերին երկրի կազմում: Խեթերի Վերին երկիրն, ըստ Հ. Մանանդյանի, Հայասա-Ազգիին սահմանակցել է ոչ թե արևմուտքից, այլ հյուսիսից և հյուսիս-արևմուտքից: Ուսումնասիրողների մեջ առաջինը Հ. Մանանդյանն էր, որ տարբեր աղբյուրներում հիշատակված Ալշի, Ալզի և Ազգի անվանումները միևնույն երկրին է վերագրել, իսկ երկիրը, ըստ նրա, կոչվել է Հայասա իր մայրաքաղաքի անվամբ (Հայասա), որը Սարգոն II-ի արձանագրության մեջ հիշատակվել է Ուայախ ձևով (ըստ Հ. Մանանդյանի՝ այդ քաղաքը գտնվում էր Վանա լճի հյուսիսային ափին): Ազգի անունն, ըստ նրա, ունեցել է թեմիական ծագում, որն սկզբնապես կրել է տեղի ժողովուրդը: Հ. Մանանդյանը Հայասային հարևան կասկերի ցեղերի բնակության հիմնական տարածքը համարել է ոչ թե Սև ծովի հարավային ափերը, այլ Վերին Եփրատից արևմուտք՝ ներկայիս Դիվրիդի (միջնադարյան Տեֆրիկե) և Արաբկիր քաղաքների շրջանները: Նա Հայասայի Ուրա ամրոցը տեղորոշել է հետագայի Խարբերդ բնակավայրի տեղում, որից արևմուտք գտնվել է Իսուվա երկիրը (հին հայկական Անձիտ գավառը), որը նույնպես, ըստ նրա, մտել է Հայասայի կազմի մեջ և հանդիսացել է նրա հարավ-արևմտյան սահմանամերձ շրջանը՝ Եփրատ գետով բաժանվելով հարևան Մելիտենեից: Ըստ Հ. Մանանդյանի՝ խեթական արձանագրության մեջ հիշատակված Ինգալավան հին հայկական Անզղ բնակավայրն է և Ուրա ամրոցի հետ մտել է Հայասայի կազմի

<sup>75</sup> Ն. Ադոնցը դեռևս 1946 թ. իր աշխատության մեջ Խալիմանա քաղաքի անունը համեմատել էր Ծոփքի Ιαλιμβάνων տեղամասի հետ (Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 44):

մեջ: Յ. Մանանդյանը Ազգի Արիսա քաղաքը տեղորոշել է Վանա լճի ափին, սակայն չի նշել Մուրսիլիսի տարեգրությունում Արիսայից հետո հիշատակված Դուզգամա քաղաքի գտնվելու վայրը<sup>77</sup>:

Յ. Մանանդյանի աշխատության մեջ նշված Ալզի և Ազգի երկրանունների նույնացումը պատմագրության մեջ չի ընդունվել, քանզի Ալզիի տեղադրությունը Իսուվայից (Ծոփքից) հարավ-արևելք հենվում է ինչպես խեթական, այնպես էլ ասորեստանյան տեքստերի վկայությունների և հետագայի հայկական Աղծնիքի հետ համադրման վրա:

Լ. Բարսեղյանն անդրադարձել է Յայասա-Ազգիի տեղադրման հարցերին, դրա ռազմա-քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմությանը: Նա շեշտել է, որ Յայասան և Ազգին թե՛ տարածքային, թե՛ քաղաքական առումով իրենցից ներկայացրել են միևնույն երկիրը: Յայասայի կենտրոնը՝ համանուն Յայասա քաղաքը, նա որոնել է Երզնկայի շրջանում՝ Խայիք կամ Խայեք գյուղի տեղում, որը գտնվում է Բաբերդից 40կմ հարավ-արևմուտք: Իսկ Ազգին տարածվել է Մնծուրի լեռների ստորոտներից մինչև Տուժիկի լեռները: Այն գտնվել է Յայասայից հարավ՝ մինչև Իսուվայի սահմանները, որը Լ. Բարսեղյանը համարել է Յայասա-Ազգիի կազմի մեջ մտնող երկիր: Նա Դուզգամա քաղաքը տեղադրել է Իսուվայում (ներկայիս Խարբերդի շրջանում): Դուզգամայից ոչ շատ հեռու գտնվող Արիսասան նույնպես գտնվել է Իսուվայում՝ Խարբերդից ոչ հեռու գտնվող Ծովք լճի (ներկայիս Գյոլջուկ) ափին և հանդիսացել է Յայասա-Ազգիի ամրացված բնակավայրերից մեկը՝ նրա հարավային սահմանի վրա: Իսկ Ինգալավա քաղաքը, որտեղից Արիսա քաղաքի դեմ արշավել է խեթական Մուրսիլիս II թագավորը, Լ. Բարսեղյանը տեղորոշել է հայկական աղբյուրներից հայտնի Անգեղտուն գավառում, որը գտնվել է Արևմտյան Տիգրիսի ակունքների շրջանում: Ըստ նրա՝ այստեղ հայտնի է եղել Ալլ գյուղը, որի տեղում գտնվել է Ինգալավա քաղաքը: Այսպիսով, Լ. Բարսեղյանը Յայասա-Ազգին հիմնականում տեղորոշել է Բարձր Յայքում և Փոքր Յայքում՝ նրա հարավային սահմաններն անցկացնելով պատմական Ծոփք նահանգով<sup>78</sup>:

Իսուվան գտնվել է խեթական պետության արտաքին քաղաքականության ոլորտում և նշվել որպես Յայկական լեռնաշխարհի ազդեցիկ երկրներից մեկը և եթե Արիսասան գտնվեր Իսուվայի հարավում, ապա այդ դեպքում այն ամբողջապես պետք է մտներ Յայասա-Ազգիի կազմի մեջ, որի հետ դժվար է համաձայնվել, սակայն, չբացառելով նաև Իսուվայի և Յայասայի քաղաքական և մշակութային կապերը:

Յայասա-Ազգիի պատմությանն է անդրադարձել նաև Ս. Երեմյանը: Նա նշել է, որ հայ ժողովրդի ձևավորման ընթացքն անցել է չորս հիմնական փուլ, և դրանցից յուրաքանչյուրը կապված էր պատմական Յայաստանի տարածքի չորս կենտրոնների հետ՝ Բարձր Յայք, Ծոփք,

<sup>76</sup> Քասունի Ե., Նախահայկական Յայաստան, Պէյրուք, 1950, էջ 76-78, 80-81, 91, 94, 97, 99, 102-106:

<sup>77</sup> Мананджян Я. З. О некоторых японских проблемах истории географии древней Армении и Ереване 1956, Яз 68-155.

<sup>78</sup> Բարսեղյան Լ., Խայասա-Ազգիի ու նրա մի քանի բնակավայրերի տեղադրման հարցի շուրջ, ՊԲՀ, 1963, թիվ 3, էջ 307-313: Նույնի, Из истории древнейшей племенной Юзюзовья Армянского нагорья XV-XIII вв. до н.э. (Хайаф Аф Аззи) и Ереване 1964, Яз 9-11. Նույնի, Յայասա-Ազգիի սոցիալ-տնտեսական հարաբերությունների մասին, ՏՀԳ, 1964, թիվ 6, էջ 101-106: Նույնի, Յայասա-Ազգիի ռազմա-քաղաքական պատմությունից, ՏՀԳ, 1964, թիվ 7, էջ 73-79:

Վանա լճի ավազան և Արարատյան դաշտավայր: Ամենահին և հիմնական օղակներից մեկն այս գործընթացում հանդիսացել է Հայասա-Ազգի ցեղային միությունը: Այն խեթական արձանագրություններում անվանվել է «Հայասա (կամ Խայասա) քաղաքի երկիր» կամ «Ազգի քաղաքի երկիր»՝ իր քաղաքային կենտրոնների անուններով: Ս. Երեմյանը Թիլ-Հայասա քաղաքը տեղադրել է հին հայկական Թիլ ավանի տեղում: Այս տեղորոշումը տալով՝ նա հանգել է այն մտքին, որ Հայասա երկրի կորիզը և նրա սկզբնական տարածքը եղել է հին հայկական Եկեղյաց գավառը՝ անտիկ դարաշրջանի Ակիլիսենեն, որը և համապատասխանել է Երզնկայի դաշտին: Թիլ ավանը տեղադրված է եղել այդ դաշտի կենտրոն Երիզա (Երզնկա) քաղաքից ոչ հեռու, որի տեղում գտնվելիս է եղել Հայասա երկրի մյուս կենտրոնը՝ Ազգի քաղաքը: Ս. Երեմյանը համաձայն չէր այն վարկածների հետ, որ Հայասա-Ազգի երկիրը գտնվել է Վանա լճից հյուսիս և արևմուտք ընկած տարածքներում կամ Սև ծովի մերձպոնտոսյան ափերին: Նա համաձայն էր Ն. Ադոնցի այն եզրակացությանը, որ Արիպսա քաղաքը պետք է տեղադրել ներկայիս Դենիզլի գյուղի տեղում՝ Դիվրիդի քաղաքից ոչ հեռու: Դենիզլի գյուղը գտնվել է ճահճոտ վայրում, որտեղ ենթադրվել է, որ նախկինում լիճ պետք է լիներ, որի մասին է վկայում նաև Գյուլբաղ լեռան անունը, որ նշանակում է «Լճի լեռ»: Ս. Երեմյանը Արիպսայի հետ հիշատակված Դուզգամա քաղաքը տեղադրել է ներկայիս Դոզան գյուղի տեղում, որն էր անտիկ Դագոնան: Այս բնակավայրերից բացի խեթական աղբյուրները Հայասա երկրում հիշատակել են Ուրան՝ «Հայասա երկրի գլխավոր ամրոցը», որի տեղադրման հարցում Ս. Երեմյանը համակարծիք էր Գ. Ղափանցյանի հետ, որն այն տեղադրել է Երզնկայի դաշտում: Ս. Երեմյանը գտնում է, որ այդ ժամանակաշրջանում պետք է գոյություն ունեցած լիներ նաև հին հայկական Դարանաղի գավառի ամրոց-քաղաքը Եփրատի ափին՝ Anniaca անվան տակ, որը կապ է ունեցել Հայասայի Աննիյաս թագավորի անվան հետ: Հեղինակը նշում է, որ Երզնկայի դաշտի խոշոր կենտրոններից է եղել Բիթառիզա քաղաքը, ներկայումս՝ Բթառիճ, որն այլ կերպ կոչվել է Պաթթեյառիկա, որի անունը երբեմն վերագրվել է ողջ Հայասա-Ազգի երկրին: Ըստ Ս. Երեմյանի՝ բուն Հայասա-Ազգին հյուսիսում սահմանակցել է Բալա (Պալա, Գայլ գետի վերին հոսանքի շրջանը) և Դումաննա (անտիկ Դոմանայի, հետագայի Թումնա գյուղի շրջանը՝ Բաբերդից արևմուտք, ճորոխ գետի հովտում) ցեղերի երկրներին:

Այսպիսով, Ս. Երեմյանը եզրակացնում է, որ Հայասա-Ազգի միության կենտրոնական շրջանները գտնվել են անտիկ աղբյուրներում հիշատակված Ակիլիսենենում, որն ընդգրկել է հին հայկական Եկեղյաց, Դարանաղի-Աղիվ ու Մուզուր գավառները, և այն խեթական Բարձր երկրից հյուսիս-արևմուտք է գտնվել՝ հայոց Բարձր Հայք աշխարհում՝ ընդգրկելով նաև բուն Փոքր Հայքը<sup>79</sup>:

Իր մի շարք աշխատանքներում Հայասա-Ազգի պատմությանն է անդրադարձել նաև Վ. Խաչատրյանը՝ իր ուսումնասիրություններն ամփոփելով «Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում» աշխատության մեջ: Իր աշխատություններում նա խեթական, ասսուրական, ուրարտական սեպագիր աղբյուրների և Մովսես Խորենացու «Հայոց պատմության»

<sup>79</sup> Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, ՊԲՀ, 1970, թիվ 2, էջ 29-33:

համապատասխան նյութի համեմատական վերլուծությամբ պարզել է, որ հայոց պետականության մասին առաջին վկայությունները վերաբերում են մ.թ.ա. XV դ. վերջերին:

Նա նույնպես նշել է, որ Հայասան հաճախ հանդես է գալիս Ազգի անվան փոխարեն: Հայասա-Ազգի երկրի մեջ են գտնվել Ինգալավա, Արիպսա, Դուզգամա, Ուրա քաղաքները: Ինգալավա քաղաքը հեղինակը նույնացրել է ճորոխ գետի ստորին հովտում գտնվող հայկական Նիզալ գավառի հետ՝ իր համանուն կենտրոնով: Արիպսան գտնվել է ճորոխ գետի միջին ավազանում՝ Սպերից քիչ դեպի հյուսիս-արևելք: Դուզգամա քաղաքը տեղադրվել է միջնադարի Ազոդ գավառում: Այս գավառի անվան մեջ, ըստ Վ. Խաչատրյանի, պահպանվել է Ազգի երկրի անունը: Հայասա-Ազգին ընկած է եղել ճորոխ գետի ավազանում՝ ձգվելով մինչև Սև ծով: Այն հարավում սահմանակցել է Բարձր երկրին (ըստ հեղինակի՝ Երզնկայի և Էրզրումի շրջաններ): Բարձր երկրի մեջ մտել են Խատենա, Խախանի և Իստիտինա գավառները: Խատենան իր Կունմախա քաղաքով, որը հետագայի Կամախն է, գտնվել է Եփրատի հովտում՝ ուլորանից մինչև Երզնկայի շրջանը: Իսկ Երզնկայի շրջանը Խախանին է եղել՝ Խախա (հայկ. Խախ), Դանկուվա (միջնադարի Սքնի, ներկայիս՝ Միտինի) և Բիտեյարիգա (հայկ. Բթայառիճ) քաղաքներով: Իստիտինան, ըստ նրա, ընկած է եղել Երզնկայի շրջանից անմիջապես դեպի արևելք՝ մինչև Եփրատի ակունքները: Իստիտինա գավառի բնակավայրերից են եղել Ջազիսան, որն Էրզրումի շրջանի Ջազան է: Իսկ Իստիտինայի Արժիյա քաղաքը միջնադարի հայկական Արժն է: Այդ շրջանում է գտնվել նաև Խալիմանա բնակավայրը, որը Վ. Խաչատրյանը հակված է նույնացնելու միջնադարի Մանյա այրք տեղանվան հետ: Կանուվարա բնակավայրը գտնվել է Իստիտինայի մեջ: Վ. Խաչատրյանն առաջարկել է այն նույնացնել Կարինի շրջանի միջնադարի հայկական Կան բնակավայրի հետ: Նա համարում է, որ Հայասա երկրի մեջ է մտել նաև Բարձր կոչված Նահանգը (Կունմախա քաղաքի շրջանը): Հաջորդ երկիրը, որը նույնպես մտել է Հայասայի կազմի մեջ, Պախտուվան է իր Արխիտա քաղաքով. այն հեղինակը նույնացրել է ժամանակակից Պախ բնակավայրի հետ: Այն գտնվել է Բյուրակնի լեռների արևմտյան մասում: Հայասայի կազմի մեջ, ըստ նրա, մտել է նաև Իսուվան (Արածանի գետի ստորին ավազանը): Տարածաշրջանի հաջորդ վարչաքաղաքական միավորը, որը Վ. Խաչատրյանի կարծիքով Հայասայի կազմի մեջ է մտել, Ծուխման է: Այն նա նույնացրել է ասսուրական արձանագրություններում վկայված Ծուխմու (Սուխմու) երկրի հետ, որը գտնվել է Բյուրակնի լեռների արևելյան հատվածում:

Վ. Խաչատրյանը նշել է, որ Հայասա թագավորության սահմանները հաճախ չեն ընդգրկել նշված բոլոր Նահանգները, որոնցից մի քանիսը մերթ ընդ մերթ նվաճվել են խեթական թագավորների կողմից և մտցվել խեթական պետության կազմի մեջ: Հայասան հարավից սահմանակից է եղել Տիգրիսի վերին ավազանի Ալգիյա (հայկ. Աղձնիք), իսկ հյուսիս-արևելքում Կասկա երկրին (Արևելապոնտական լեռների շրջան):

Այսպիսով, ըստ Վ. Խաչատրյանի, Հայասա երկիրն ընդգրկել է Ազգի, Կունմախա (Բարձր), Իսուվա, Պախտուվա և Ծուխմա Նահանգները և զբաղեցրել է Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածը՝ Հայկական Տավրոսի, Արևմտյան Եփրատ գետի և Սև ծովի

միջև<sup>80</sup>:

Հայ ժողովրդի ծագման հարցերի ընդհանուր համատեքստում Հայաստանի պատմությանն է անդրադարձել Մ. Գավուքճյանը: Ըստ նրա՝ Հայաստան-Ազգին հայկական-նահիրյան բազուն ցեղերից մեկն է հանդիսացել և գտնվել է Բարձր Հայքում: Այս ցեղային միությունն, ըստ նրա, կործանվել էր խեթական պետության անկումից առաջ: Մ. Գավուքճյանը նշել է, որ այս ցեղային միության քայքայումից հետո վերապրած հայաստական ցեղերի նոր կենտրոնն է հանդիսացել Խախա քաղաքը (հետագայի Եկեղյաց գավառի Խախ բնակավայրը)<sup>81</sup>:

Հայաստան-Ազգի պատմության, տեղադրության հարցերին է անդրադարձել նաև Ա. Քոսյանը: Նա նույնպես Հայաստան-Ազգին տեղադրել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում՝ Վերին Եփրատի ավազանում: Արևմուտքից այն սահմանակցել է Վերին երկրին, որն ընդգրկել է Հալիսի վերին հոսանքներից մինչև Վերին Եփրատի մեծ ոլորանն ընկած շրջանը: Ա. Քոսյանը խեթական արձանագրություններից հայտնի Կունմախան նույնպես նույնացրել է ժամանակակից Կենախի (հայկ. Անի-Կամախ) հետ: Սակայն, ի տարբերություն ուսումնասիրողների մեծ մասի, նա Կունմախան համարել է առանձին քաղաքական միավոր, որը չի մտել Հայաստանի կազմի մեջ և գտնվել է վերինեփրատյան տարածաշրջանի երկու առաջատար քաղաքական միավորների՝ Հայաստան-Ազգի և Իսուվայի անմիջական մերձակցությամբ: Ըստ Ա. Քոսյանի՝ մինչ այդ անհայտ Լիտտա, Տավատենա, Ուտկունիսա, Խուդդու, Պարտանտա, Իյանիննա, Լալատտա, Տախանիսարա, Ուկսու քաղաքները, հավանաբար, գտնվել են Հայաստանում<sup>82</sup>:

Հ. Ավետիսյանը ևս նշել է, որ Հայաստան-Ազգի պետական միավորը գտնվել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմուտքում: Նա Հայաստանի վիճահարույց Արիպսա քաղաքը հնարավոր է համարել տեղադրել Անի-Կամախ չհասած եփրատյան կղզիներից մեկի վրա<sup>83</sup>:

Այսպիսով, ուսումնասիրողների հիմնավորումները Հայաստան-Ազգի պատմաաշխարհագրական դիրքի վերաբերյալ որոշակի առումով տարբեր են: Ընդհանրացնելով խնդրո առարկա թեմային նվիրված մասնագետների աշխատությունները՝ մենք փորձեցինք ներկայացնել պատմագիտության մեջ եղած տարբեր կարծիքները, որոնք ըստ պատմաաշխարհագրական բովանդակության կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

ա) Հայաստան-Ազգին գտնվել է Վերին Եփրատի, Վերին Գայլի ու ճորոխի ավազաններում՝ ընդգրկելով Բարձր Հայքի և Փոքր Հայքի տարածքները [Ն. Մարտիրոսյան (Հայաստան-Ազգի

<sup>80</sup> Хачатрян В. В. «Географические провинции Хеттской империи и Ереван» 1971, № 128-132, 137-145. Նույնի, Хайа Яцьян Л. Հ. Գ. 1972, թիվ 8, էջ 32-35: Նույնի, Хайа Яцьян Наирян Л. Հ. Գ. 1973, թիվ 11, էջ 32-41: Նույնի, Наирян Армина Л. Հ. Գ. 1976, թիվ 8, էջ 62, 70: Նույնի, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 34-38:

<sup>81</sup> Գավուքճյան Մ., Հայ ժողովրդի ծագումը, Մոսկովա, 1982, էջ 66-72:

<sup>82</sup> Քոսյան Ա., Մ. ք. ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 71, 72, 84, 113, 159, 166: Նույնի, Նոր նյութեր խեթական տերության և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին, ՄՍԱԵԺ, 2001, XX, էջ 239: Նույնի, Անի-Կամախը խեթական դարաշրջանում, ՊԲՀ, 2002, թիվ 3, էջ 237-240: Նույնի, Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեքստերում, ՄՍԱԵԺ, 2003, XXII, էջ 254-259: Նույնի, խեթական KUB XXVI 62 սեպագիր տեքստը և Վերին Եփրատի ավազանի պատմական աշխարհագրության խնդիրները, ՄՍԱԵԺ, 2004, XXIII, էջ 472-484: Նույնի, Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 54, 58, 69, 79, 84, 93, 100, 101, 157:

<sup>83</sup> Ավետիսյան Հ., Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների



դաշնակցային պետության մեջ է ընդգրկել նաև Ծոփքի տարածքը), Ա. Գյոտցե, Է. Կավենյակ, Ֆ. Զաազ, Ջ. Յաքար, Զ. Տաշյան, Ն. Ադոնց, Գ. Ղափանցյան, Լ. Բարսեղյան (Հայասա-Ազգին հիմնականում տեղորոշել է Բարձր Հայքում, սակայն, նրա մեջ ընդգրկել է նաև Ծոփքի տարածքը), Ս. Երեմյան, Ա. Քոսյան, Զ. Ավետիսյան],

բ) Հայասա-Ազգին գտնվել է Սև ծովի ափերին և հիմնականում տեղորոշվել է Հայկական լեռնաշխարհից դուրս (այն սկզբնապես Սև ծովի հարավ-արևելյան ափերին էր տեղորոշել նաև Ա. Գյոտցեն, այնուհետև նա վերանայել է իր այդ տեսակետը: Ֆ. Կոռնելիուսը տեղորոշել է Հայասա-Ազգին Սև ծովի ափին գտնվող ներկայիս Սամսուն բնակավայրի մոտ: Ի.Դյակոնովը նույնպես առաջարկել է Հայասա-Ազգին տեղադրել Սև ծովի ափերին՝ Խարշիտ գետի ավազանում, սակայն նրա հարավային սահմանները հասցրել է մինչև ճորոխի ավազանը),

գ) Հայասա-Ազգին գտնվել է Վանա լճից հյուսիս և արևմուտք և ընդգրկել Արևմտյան Հայաստանի տարածքի մեծ մասը [Է. Ֆոռեր, Յ. Ֆրիդրիխ (առաջարկել է Հայասան տեղադրել Արևելապոնտական լեռների և Վերին Տիգրիսի ակունքների միջև), Ա. Խաչատրյան, Զ. Սանանդյան, Ե. Քասունի (կարծիք է հայտնել, որ իր հզորացման ժամանակ Հայասա-Ազգին տարածվել է մինչև Ուրմիա լիճը), Վ. Խաչատրյան (նշել է, որ Հայասա-Ազգին ընկած է եղել Հայկական Տավրոսի, Եփրատ գետի և Սև ծովի միջև), Ջ. Մելլարթ (Հայասա-Ազգին տեղորոշել է Բարձր Հայքից մինչև Արարատյան դաշտավայր ընկած տարածքում)]:

Քննելով մասնագետների կարծիքները Հայասա-Ազգիի պատմաաշխարհագրական դիրքի վերաբերյալ՝ կարելի է ասել, որ Հայասա-Ազգին գտնվել է Հայկական լեռնաշխարհում և արևմուտքից սահմանակից է եղել Խեթական տերությանը: Պատմաբանների մեծ մասը նշել է, որ Հայասա-Ազգին գտնվել է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան կողմում՝ կենտրոն նշելով հիմնականում Բարձր Հայքի տարածքը: Սակայն ակնհայտ է նաև, որ Հայասա-Ազգիի տարածքի մասին Խեթական սկզբնաղբյուրներում տվյալներ կան այնքանով, որքանով որ Խեթերը կարողացել են ներթափանցել Հայկական լեռնաշխարհի խորքերը: Մասնագետներն առավել հստակ ցույց են տվել Հայասա-Ազգիի հատկապես արևմտյան սահմանները, որոնք անցնում էին հիմնականում պատմական Փոքր Հայքի կամ Բարձր Հայքի տարածքով, որտեղ Հայասա-Ազգին սահմանակցել է Խաթթիի հետ, իսկ Արևելապոնտական լեռներով՝ կասկերի ցեղերի հետ: «Ծովի մեջ գտնվող» Արիպաս քաղաքը հարկավոր չէ Սև ծովի ափին փնտրել, քանզի A.AB.BA<sup>84</sup> գաղափարագիրը նշանակել է նաև լիճ:

Բնական է, որ ժամանակին Հայասան բացի արևմտյան հարևանից (Խեթական պետություն) ունեցել է որոշակի կապեր նաև հարավային և արևելյան երկրների հետ: Սակայն դրանց մասին որևէ գրավոր աղբյուր առայժմ հայտնի չէ, ինչն անհնար է դարձնում որոշել Հայասա-Ազգի պետության ընդգրկած տարածքները Հայկական լեռնաշխարհի արևելքում ու հարավում:

Հայկական լեռնաշխարհում Հայասա-Ազգիի տարածքային ընդգրկման խնդրի լուծմանը զգալիորեն նպաստելու է գալիս հնագիտական նյութի և Խեթական սեպագիր աղբյուրների

քաղաքական պատմությունը մ.թ.ա. XVII – IXդդ., Երևան, 2002, էջ 44, 81, 106:

<sup>84</sup> Friedrich J., Hethitisches Elementarbuch, II T., Heidelberg, 1946, S. 104.

տվյալների համադրումը: Լեռնաշխարհի ուշբրոնզեդարյան հնագիտական վայրերի ժամանակագրական շղթայի մեջ ընդհանրությունների դիտարկումով հնարավորություն է ընձեռվում համակարգված մոտեցմամբ քննարկել Հայասա-Ազգիի հուշարձանների պատմական նշանակության խնդիրը:

## 1. 2. Հայասա-Ազգիի բնակավայրերի տեղադրությունը

Ստորև նշվող ցանկում տրված են Հայասա-Ազգիի՝ խեթական աղբյուրներից հայտնի տեղանունները (KUR, URU, փUR.SAG): Ցանկում ներառված են Հայասա-Ազգիի կազմում գտնվող տեղանունները, ինչպես նաև անուններ, որոնց հայասական պատկանելիությունը ենթադրվում է:

Շատ տեղանունների կապակցությամբ տարբեր հեղինակների տված բացատրություններին և մեկնաբանություններին կարելի է վերապահումով մոտենալ, քանզի մենք չգիտենք, թե խեթերը այդ տեղանունները տվել են իրենց լեզվին համապատասխան, թե դրանք նույնությամբ վերցրել են տեղաբնիկներից: Բացի այդ, բոլոր տեղադրությունները կարելի է առաջարկել մոտովորապես, հաշվի առնելով այն, որ մեզ հազարամյակներ են բաժանում այդ ժամանակաշրջանից և շատ տեղանուններ չեն պահպանել իրենց նախնական անունները, կամ էլ տեղանվան եզակի հիշատակությունը թույլ չի տալիս առաջարկել որևէ հստակ տեղադրություն: Որոշ դեպքերում էլ ակնհայտորեն խեթական տեղանունները մասնագիտական գրականության մեջ ներկայացվել են որպես հայասական, որը հանգեցրել է սխալ մեկնաբանությունների: Հին տեղանունների հետ համադրվող ժամանակակից տեղանունները ներկայացվել են այնպես, ինչպես դրանք առկա են ուսումնասիրություններում:

### 1. Ազգի (KUR<sup>URU</sup> Az-zi, KUR<sup>KUR</sup> Az-zi, URU<sup>URU</sup> Az-zi, KUR<sup>URU</sup> A-az-zi )<sup>85</sup>

խեթական աղբյուրների հաղորդած վկայությունները ցույց են տալիս, որ թե՛ քաղաքական, թե՛ տարածքային առումով Հայասան և Ազգին իրենցից ներկայացնում էին միևնույն երկիրը: Այս համանմանությունը ակնհայտորեն երևում է խեթական թագավոր Սուրսիլիս II-ի տարեգրության մեջ, երբ հիշատակվում է, թե ինչպես խեթական զորքերի հրամանատար Նուվանցան Ազգի երկրի մարդկանց Կաննուվարա քաղաքի տակ հաղթեց: Նույն տարեգրության մեկ այլ տեղում խեթական թագավորն արձանագրել է, որ Նուվանցան Կաննուվարայի տակ հաղթել է Հայասա երկրի մարդկանց<sup>86</sup>: Այս համանմանությունը առաջին անգամ նկատել է Է. Ֆորերը<sup>87</sup>:

Ամենայն հավանականությամբ Ազգի անվամբ քաղաք գոյություն չի ունեցել, չնայած որ խեթական սկզբնաղբյուրներում բազմիցս Ազգի երկրանունը նշվել է նաև «քաղաք» շում.՝ URU

<sup>85</sup> Ազգի անվանաձևը գրվում է նաև Ազի ձևով, հավանական է համարվում, որ երկու z տառերի հաջորդականությունը այս անվան մեջ կարելի է գրել նաև մեկ տառով (RGTC, VI, S. 59; RGTC, VI/2, S. 19):

<sup>86</sup> KBo IV 4 II. KBo III 4 IV (Götze A., Die Annalen des Muršiliš, MVAG, 1933, № 38, S. 122-123).

<sup>87</sup> Forrer E., ĩajasa-Azzi, Caucasia, 1931, № 9, S. 4.

զաղափարագրով<sup>88</sup>:

Ուսումնասիրողներից շատերն Ազգին տարանջատել են Հայասայից՝ այն համարելով ինքնուրույն միավոր ու տարբեր տեղադրություններ են առաջարկել (մերձպոնտական շրջանում, ճորոխի ավազանում և այլուր)<sup>89</sup>: Ըստ Գ. Ղափանցյանի՝ Ազգի անունը պահպանվել էր Փոքր Հայքում՝ Անտոնինոս կայսեր երթուղում հիշատակվող Aza (Ազա) քաղաքի անվան մեջ<sup>90</sup>: Ըստ Վ. Խաչատրյանի՝ Ազգի անունը պահպանվել է ճորոխի ավազանի կենտրոնում գտնվող միջնադարի հայկական Ազորդ գավառի անվան մեջ<sup>91</sup>: Ա. Քոսյանն Ազգին Հայասա-Ազգի պետության՝ Խաթթիին սահմանակից շրջանն է համարում<sup>92</sup>:

Հաշվի առնելով վերը նշված փաստը (Հայասայի համանմանությունը Ազգիի հետ)՝ կարելի է շեշտել, որ Ազգին ընդգրկել է նույն տարածքը, ինչ որ Հայասան<sup>93</sup>:

2. Արիպսա (<sup>URU</sup>A-ri-ip-ša-a, <sup>URU</sup>A-ri-ip-ša-a-an, <sup>URU</sup>A-ri-ip-ša-aš)<sup>94</sup>

Արիպսա քաղաքը հիշատակվել է Մուրսիլիս II-ի տարեգրության մեջ՝ որպես Հայասա-Ազգիի ամրացված քաղաքներից մեկը: Խեթական արքան Հայասայի դեմ կատարած արշավանքի ընթացքում գրավել է Արիպսան, որն, ըստ տարեգրության՝ «ծովի մեջ էր գտնվում»<sup>95</sup>:

Խեթական բնագրում Արիպսայի տեղադրության այսպիսի նկարագրությունն առաջ է բերել տարբեր կարծիքներ: Ուսումնասիրողների մի մասը Հայասա-Ազգին տեղորոշել են Սև ծովի ափերին՝ ելնելով այն կարծիքից, որ այս քաղաքը գտնվել է Սև ծովի ափերին: Է. Ֆոռերն Արիպսան տեղադրել է Վանա լճի արևմտյան ափին՝ Կիզվան-դադ կոչվող վայրում<sup>96</sup>: Իսկ Ն. Ադոնցն Արիպսան համարել է Եփրատի ջրերից գոյացած ճահիճների մեջ գտնվող մի բերդ, որը գտնվել է Եփրատի և նրա վտակ Արաբկիր գետակի միացման կետում գոյություն ունեցող Դենիզլու բնակավայրի տեղում<sup>97</sup>: Գ. Ղափանցյանը կարծել է, որ Արիպսան և Դուզգաման գտնվել են Հայասա-Ազգիի արևելյան մասում, առավել անվտանգ ու հեռու խեթական հարձակումներից՝ Կարին-Էրզրումի մոտ գտնվող ճահճոտ վայրերում՝ կա'մ Բերդակ բնակավայրի մոտ, կա'մ էլ Էրզրումից 15կմ հարավ-արևելք, որտեղ միջնադարում (ՎԻդ.) հիշատակվել է Արաբեսս(ոս) (Արաբիս) գյուղը, հնարավոր համարելով, որ այդ բնակավայրի տեղում ճահիճ է եղել<sup>98</sup>: Լ. Բարսեղյանն Արիպսա քաղաքը տեղորոշել է Ծոփքի Ծովք լճի

<sup>88</sup> Ըստ Ն. Մարտիրոսյանի Ազգի երկրանունը առաջացել է հայերենի ազ-, ազն «ցեղ, սերունդ, տոհմ, գերդաստան» բառից (Մարտիրոսյան Ն., Նպաստ մը հեթ և հայ բառաքնության, ՊԲՀ, 1972, թիվ 2, էջ 171):

<sup>89</sup> Cornelius F., Neue Arbeiten zur hethitischen Geographie, Anatolica, 1967, № 1, S. 68. Дьяконова И.Э. Предыстория армянского народа в Ереване. 1968. № 83.

<sup>90</sup> Капанцян Г.Э. И.Я. Горикоф лингвистичекие работы. К началу истории армян. Древняя Малая Азия. № 1 (այսուհետև՝ ИЛР), Երևան, 1956, Կրճ 43-46.

<sup>91</sup> Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 35:

<sup>92</sup> Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, 2004, էջ 45:

<sup>93</sup> Բացառված չէ նաև, որ Ազգին հանդիսացել է Հայասա-Ազգի պետության արևմտյան՝ Խաթթիին առավել մոտ գտնվող սահմանային շրջանը:

<sup>94</sup> RGTC, VI, S. 37.

<sup>95</sup> KBo IV 4 IV 5 (Götze A., Die Annalen des Muršiliš, S. 132-133).

<sup>96</sup> Forrer E., ĩajasa-Azzi, S. 18.

<sup>97</sup> Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 46:

<sup>98</sup> ИЛР № 1 № 56, 59.

ափին<sup>99</sup>: Ըստ Վ. Խաչատրյանի՝ Արիպսան հետագայի Արաբ-կալե բերդն է՝ Սպերից քիչ դեպի հյուսիս-արևելք՝ ճորոխի ափին: Նա ստուգաբանել է Արիպսա անունը հայերենի առ՝ «կողքին, առջև» նախդիրով և ափ արմատի հետ<sup>100</sup>: Ա. Քոսյանը նույնպես հավանական է համարել Արիպսան տեղադրել Էրզրումի շրջանում՝ ճահճացած լճի կամ Թորթումի լճի մոտ<sup>101</sup>:

Արիպսայի տեղադրման հարցում զգալի պարզություն կարող է մտցնել Դուգգամա քաղաքի տեղորոշումը, որը հիշատակվել է նշված տարեգրության մեջ: Այն խեթական արքան գրավել է Արիպսայի նվաճումից հետո: Դուգգաման մեծ հեռավորության վրա չէր կարող գտնվել Արիպսայից: Այն հիշատակվել է նաև «Պախխուվացի Սիտայի» տեքստում, որն ակտիվ մասնակցություն է հանդես բերել տարածաշրջանում (Հայկական լեռնաշխարհի արևմտյան մաս) ծավալված քաղաքական ու ռազմական գործընթացներին<sup>102</sup>: Ըստ այդմ, կարելի է Արիպսան տեղորոշել այդտեղ գտնվող որևէ ջրային տարածքի (ամենայն հավանականությամբ լճի) ափին<sup>103</sup>: Հավանական է, որ Մուրսիլիս II-ը 10-րդ տարվա արշավանքի ժամանակ հայտնվել էր Վանա լճի ավազանում, որտեղ և գտնվել էր այս քաղաքը:

3. Արխիտա (<sup>URU</sup>Ar-Æi-ta, <sup>URU</sup>A-ar-Æi-i-ta, <sup>URU</sup>E-er-Æi-ta)<sup>104</sup>

«Պախխուվացի Սիտայի» տեքստում հիշատակված են Հայկական լեռնաշխարհի մի շարք երկրներ<sup>105</sup>: Հայասան անվանապես չի հիշատակվել, սակայն տեքստում հանդես են գալիս որոշ քաղաքներ, որոնք քիչ ավելի ուշ շրջանի աղբյուրից հայտնի են որպես Հայասա-Ազգիի բնակավայրեր: Համաձայն տեքստի՝ Պախխուվայի հակախեթական գործունեության շրջանում այդ երկրի դաշնակիցը Արխիտան է եղել:

Է. Ֆոռերն առաջինն էր, որ Արխիտա քաղաքանունը նույնացրել է Էրխիտայի հետ<sup>106</sup>: Գ.Ղափանցյանը շեշտել է, որ քաղաքի անունն առաջացել է խեթ. arÆa-«սահման» բառից և հավանական համարել, որ քաղաքի անունը նշանակել է «սահմանային»<sup>107</sup>: Վ. Խաչատրյանը նույնպես նշել է, որ Արխիտա քաղաքի անունը խեթերեն arÆa «սահման» բառի գործիական հոլովածն է և քաղաքը տեղորոշել է պատմական Հաշտյանք գավառի Երիզա (հայ. երեզ «եզր») ավանի տեղում<sup>108</sup>:

Այս քաղաքը հիշատակվել է նաև խեթա-հայասական պայմանագրի վերջում տրված աստվածների ցուցակում<sup>109</sup>: Հայասայի աստվածների շարքում հիշատակվում է «Արխիտա

<sup>99</sup> Բարսեղյան Լ., Խայասա-Ազգիի ու նրա մի քանի բնակավայրերի տեղադրման հարցի շուրջը, ՊԲՀ, 1963, քիվ 3, էջ 311:

<sup>100</sup> Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 35, 44:

<sup>101</sup> Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 39:

<sup>102</sup> KUB XXIII 72 (Քոսյան Ա., Նոր նյութեր խեթական տեղանունների և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին, ՄՄԱԵԺ, 2001, XX, էջ 240):

<sup>103</sup> Կարելի է համաձայնվել նաև այն հեղինակների հետ, ովքեր Արիպսան տեղորոշել են «Շամբ Կարնոյ» կամ «Ծովն Կարնոյ» Կարին-Էրզրումի մոտ գտնվող ճահճացած լճի մոտ:

<sup>104</sup> RGTC, VI, S. 31.

<sup>105</sup> KUB XXIII 72.

<sup>106</sup> Forrer E., i ajasa-Azzi, S. 8.

<sup>107</sup> ИЛРШ и ЯЗБ, сн. 1.

<sup>108</sup> Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 44:

<sup>109</sup> Այս պայմանագիրը համարվել է կնքված Խաթթիի արքա Թուդխալիյաս III-ի և Հայասայի արքա Կարաննիի միջև (մ.թ.ա. XIVդ. I կես) (Forrer E., i ajasa-Azzi, S. 5), կամ Սուպալիլուլիումաս I-ի և

քաղաքի Ամպրոպի աստվածը» ( ${}^D U tak-ša-an-na-aš$   ${}^{URU} Ar-Ēi-ta$ )<sup>110</sup>: Այս վկայության հիման վրա կարելի է նշել, որ Արխիտան հանդիսացել է Չայասայի պաշտամունքային կենտրոններից մեկը: Այն հիշատակված է նաև Խեթական տեղության հյուսիս-արևելյան շրջաններից և վերինեփրատյան երկրների առանձին բնակավայրերից հավաքագրված պայմանագրային զինծառայության զինվորների ցուցակում: Տեղանվան սկզբում a-e/i հերթագայությունը լուրջ խոչընդոտ չէ, քանի որ ցուցակում Արխիտան տրված է Երխիտա անվանաձևով ( ${}^{URU} ErĒita =$   ${}^{URU} ArĒita$ ): Խեթական տեղության հյուսիս-արևելյան և արևելյան շրջաններին հարող երկրների շարքում Արխիտա քաղաքը ( ${}^{URU} ErĒita$  ձևով) վկայված է Սալա քաղաքից հետո՝ Լիտտա և Տենիյա քաղաքներից առաջ<sup>111</sup>: Ա. Քոսյանն այս քաղաքը տեղորոշել է Կունմախայի և Պախխուվայի հարևանությամբ<sup>112</sup>:

Ինչպես երևում է, քաղաքը գտնվել է Չայական լեռնաշխարհի արևմտյան մասում, որտեղ էլ ծավալվել են «Պախխուվացի Միտայի» տեքստում հիշատակված դեպքերը:

#### 4. Արնիյա ( ${}^{URU} Ar-ni-ya$ )

Չայասայի Արնիյա քաղաքը նույնպես հիշատակվել է Խեթա-հայասական վերոհիշյալ պայմանագրի վերջում՝ աստվածների ցուցակում, որտեղ Չայասայի աստվածների ցուցակում հիշատակվել է «Արնիյա քաղաքի Ամպրոպի աստվածը» ( ${}^D U$   ${}^{URU} Ar-ni-ya$ )<sup>113</sup>: Արնիյա քաղաքը Չայասա-Ազգիի պաշտամունքային կենտրոններից մեկն էր: Ե. Ֆոռերն այն համեմատել է մ.թ.ա. 714թ. Սարգոնյան տարեգրությունում հիշատակված Արմարիլի նահանգի Արնիյա քաղաքի հետ, կամ հին հայոց Առնի քաղաքի հետ՝ Վանա լճի հյուսիսային ափին<sup>114</sup>: Ըստ Գ. Ջահուկյանի՝ այս տեղանվան հիմքում ընդհանուր փոքրասիական *Arn*-հիմքն է, իսկ ըստ Վ. Խաչատրյանի՝ Արնիյա բնակավայրը Սպերի Առնոսն է, որի մեջ առկա է հայերենի հնդեվրոպական ծագմամբ առն «վայրի խոյ» արմատը<sup>115</sup>: Սակայն հնարավոր է նաև, որ Արնիյա անվան հիմքում Ար դիցանունն ընկած լինի:

Աղբյուրների՝ ներկայումս հայտնի տվյալները հնարավորություն չեն ընձեռում Արնիյայի համար որևէ հստակ տեղադրություն առաջարկել:

#### 5. Գազու[...] ( ${}^{URU} Ga-zu-ú[?]$ )

Այս քաղաքը նույնպես հիշատակվել է վերոհիշյալ Խեթա-հայասական պայմանագրում: Այն Չայասա-Ազգիում Ունագաստաս աստծո պաշտամունքի կենտրոններից մեկն էր ( ${}^D U-na-ga-$

Խուկկանայի միջև (մ.թ.ա. XIVդ. կեսեր)я(ХачатрянЯВзяВояГочныеяпровинцияиХеттЯкойяимпериииЕреван1971, Я148), կամ էլ Մուրսիլիս II-ի և Աննիյայի միջև (մ.թ.ա. XIVդ. II կես) (Carruba O., Die Hajaserverträge Hattis, Documenta Asiae Minoris, Wiesbaden, 1988, S. 59-75), սակայն, վերջնականապես հարցը չի պարզվել և պայմանագրի այդ հատվածը մնացել է չթվագրված:

<sup>110</sup> KUB XXVI 39 I 32 (Forrer E., ĩajasa-Azzi, S. 6).

<sup>111</sup> KUB XXVI 62 IV 34 (Քոսյան Ա., Նոր տեղանուններ Խեթական սեպագիր տեքստերում, ՄՍԱԵԺ, 2003, XXII, էջ 256).

<sup>112</sup> Քոսյան Ա., Չայական լեռնաշխարհի տեղանունները, էջ 37:

<sup>113</sup> KUB XXVI 39 I 29 (Forrer E., ĩajasa-Azzi, S. 6).

<sup>114</sup> Forrer E., ĩajasa-Azzi, S. 8.

<sup>115</sup> Ջահուկյան Գ., Չայոց լեզվի պատմություն. Երևան, 1987, էջ 339: Խաչատրյան Վ., Չայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 44:

aš-ta-aš<sup>URU</sup>Ga-zu-ú(-)[-])<sup>116</sup>:

Ըստ Գ. Ղափանցյանի՝ Գազու քաղաքի անվանումը կարելի է համեմատել կասկական Գազգապա (Gazzapa) քաղաքի հետ ու Պոնտոսի Գազգիուրա ամրոցի հետ (հռոմեական ժամանակաշրջանում)<sup>117</sup>: Յ. Մանանդյանի կարծիքով Գազու քաղաքն իր անվամբ և տեղադրությամբ համապատասխանել է ներկայիս Չազո բնակավայրին (Բիթլիսից 60կմ հարավ-արևմուտք)<sup>118</sup>: Վ. Խաչատրյանը հավանական է համարել, որ այս քաղաքը հայերեն կոչվել է Գազ և իր հիմքում ունեցել է հայերեն գազ «աքցան» արմատը և այդպես է կոչվել տեղի բնական պաշտպանվածության հետևանքով<sup>119</sup>:

Նյութի սղությունն ու քաղաքանվան այս եզակի հիշատակությունը թույլ չեն տալիս առաջարկելու որևէ հստակ տեղադրություն:

6. Գասմիյախա (<sup>URU</sup>Ga-aš-mi-ya-Ēa)

Չայասա-Ազգիի պաշտամունքային կենտրոններից Գասմիյախան հայտնի է միայն Չայասայի աստվածների ցուցակում: Այն հանդես է գալիս որպես [...]խուխուս աստծո պաշտամունքի վայր ([...]-Ēu-Ēu-uš<sup>URU</sup>Ga-aš-mi-ya-Ēa)<sup>120</sup>: Գասմիյախայի հայասական այս աստծո անունից պահպանվել են միայն վերջին երեք սեպանշաները (-Ēu-Ēu-uš)<sup>121</sup>:

Աղբյուրների սակավ տվյալները հնարավորություն չեն ընձեռում Գասմիյախա քաղաքի համար առաջարկել որևէ տեղադրություն:

7. Դուգգամա (<sup>URU</sup>Du-ug-ga-am-ma-na, <sup>URU</sup>Du-ug-ga-ma, <sup>URU</sup>Du-ug-ga-a-ma, <sup>URU</sup>Du-uq-qa-am-ma, <sup>URU</sup>Du-uk-kam-ma-an, <sup>URU</sup>Du-uk-ka-ma-an, <sup>URU</sup>Du-uk-ka-am-ma-an)<sup>122</sup>

Չայասա-Ազգիի այս նշանակալի քաղաքը հիշատակվել է «Պախխուվացի Միտայի» տեքստում, Մուրսիլիս II-ի տարեգրություններում, Խաթթուսիլիս III-ի «Ինքնակենսագրությունում», ինչպես նաև խեթա-հայասական պայմանագրի տեքստում, որտեղ տրվել են Չայասայի պաշտամունքային կենտրոնները:

«Պախխուվացի Միտայի» տեքստում Դուգգամայից Աիսսին հանդես է գալիս որպես Պախխուվայի հետագա լոյալության երաշխավոր: Այսպիսով, Դուգգաման՝ որպես քաղաք, գոյություն է ունեցել դեռևս Արնուվանդաս I-ի օրոք (մ.թ.ա. XIVդ. սկիզբ) և խեթերի կողմից դիտվել է որպես դաշնակից քաղաք<sup>123</sup>:

Մուրսիլիս II-ն իր տարեգրություններում ներկայացրել է, որ արշավելով դեպի Չայասա՝

<sup>116</sup> KUB XXVI 39 I 31 (Forrer E., ĩajasa-Azzi, S. 6).

<sup>117</sup> ИЛР~~VI~~<sup>III</sup> иЯ~~46~~<sup>35</sup>, сн. 2.

<sup>118</sup> Манандяня Яз~~и~~<sup>и</sup> Оя некоторы~~я~~<sup>я</sup> Япорны~~я~~<sup>я</sup> проблема~~я~~<sup>я</sup> иЯ~~г~~<sup>г</sup>ориния ия география~~я~~<sup>я</sup> древнейя Армения~~и~~<sup>и</sup> Ереван, 1956, Я. 103.

<sup>119</sup> Խաչատրյան Վ., Չայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 43:

<sup>120</sup> KUB XXVI 39 I 34 (Forrer E., ĩajasa-Azzi, S. 6). Ըստ Ն. Մարտիրոսյանի՝ այս քաղաքը համապատասխանում է Կասմա բնակավայրին՝ Տիվրիկի և Բինկյանի միջև, Զիմառայի մոտ (Մարտիրոսյան Ն., Պրպտուններ փոքրասիական անուններու մասին, ՊԲՀ, 1961, թիվ 3-4, էջ 98):

<sup>121</sup> Ըստ Գ. Ղափանցյանի, այս աստծո անունը պետք է հնչեր որպես Կարխուխու (կամ Կարխոխո), kar կամ ka-ar բացակայող մասի ավելացման դեպքում (ИЛР~~VI~~<sup>III</sup> иЯ~~35~~<sup>35</sup>): я

<sup>122</sup> RGTC, VI, S. 435-436.

<sup>123</sup> Քոսյան Ա., Նոր նյութեր խեթական տերության և Չայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին, էջ 240-242:

գրավել է Արիպաս և Դուզգամա քաղաքները: Խեթական զորքը գրավել է Դուզգաման Արիպասն և վաճելուց հետո, ուստի, ինչպես վերը նշվեց, այս քաղաքները մոտ են գտնվել իրար<sup>124</sup>:

Հայասայի աստվածների շարքում հիշատակվում է «Դուզգամայի Բալթաիգ աստվածը» (<sup>D</sup>Ba-al-ta-ik <sup>URU</sup>Du-ug-ga-am-na)<sup>125</sup>: Այս վկայության հիման վրա դժվար չէ ենթադրել, որ Դուզգաման հանդիսացել է Հայասայի ոչ միայն քաղաքական, այլ նաև պաշտամունքային կենտրոններից մեկը:

Մասնագիտական գրականության մեջ փորձ է արվել տեղորոշել Դուզգամա քաղաքը. այն համեմատվել է անտիկ Դագոնայի հետ, Փոքր Հայքում<sup>126</sup>, Վանա լճի ափին գտնվող Դատվանի հետ<sup>127</sup>, Մանազկերտի հետ (Ե. Քասունին կարծիք է հայտնել, որ այն Հայասայի մայրաքաղաքն է եղել)<sup>128</sup> և այլն: Դուզգամա քաղաքի անունը Գ. Ջահուկյանը բխեցրել է խեթերենի dukk-/dugg- «տեսանելի լինել» բայարմատից<sup>129</sup>: Վ. Խաչատրյանը գտնում է, որ այդ տեղանվան մեջ առկա է -ama(r) (-awar) բայահիմքերից գոյական կազմող խեթական ածանցը, որը բառերի տրական հոլովաձևում դառնում է -amana: Դուզգաման, ըստ Վ. Խաչատրյանի, Թորթումի շրջանի պատմական Հայ գյուղի անվան խեթերեն թարգմանությունն է (հայել «տեսնել»)<sup>130</sup>: Ա. Քոսյանն առավել հավանական է համարել քաղաքի մոտավոր տեղադրությունը Երզնկայից հյուսիս կամ հյուսիս-արևելք<sup>131</sup>:

Նշենք, որ Դուզգամայի տեղադրությունը պետք է պայմանավորված լինի Արիպասայի տեղադրության հետ:

#### 8. Իյանիննա (<sup>URU</sup>I-ya-ni-in-na)

Այս քաղաքը նշվել է Հայասայի Ուրա սահմանային քաղաքի մոտ գտնվող բնակավայրերի ցուցակում<sup>132</sup>: Սակայն մասնագետների մի մասը հակված է տեքստում հիշատակված այս Ուրան նույնացնելու Դաշտային Կիլիկիայի համանուն քաղաքի հետ (տե՛ս Ուրա քաղաքի մասին հատվածը): Ցուցակում բացի Իյանիննայից հիշատակվել են նաև <sup>URU</sup>Ukšu, [...]-u, [?]-x-x-riu, [...-t/š]ata, [...]-mitta, <sup>URU</sup>iuddu, [...-i]šta, <sup>URU</sup>Lalatta բնակավայրերը<sup>133</sup>:

#### 9. Ինգալավա (<sup>URU</sup>In-ga-la-wa)

Ինգալավա քաղաքը հիշատակվում է միայն Մուրսիլիս II-ի «Տասնամյա տարեգրությունում»: Տասներորդ տարվա տարեգրության մեջ նկարագրվել է արշավանքը դեպի Հայասա-Ազգի: Շարժվելով դեպի Ազգի՝ Մուրսիլիս II-ն իր բանակի զորատեսն անցկացնում է

<sup>124</sup> Götze A., Die Annalen des Muršiliš, S. 132-137.

<sup>125</sup> KUB XXVI 39 I 32-33 (Forrer E., ĩajasa-Azzi, S. 6).

<sup>126</sup> Արոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 45: Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, ՊԲՀ, 1970, թիվ 2, էջ 31:

<sup>127</sup> Forrer E., ĩajasa-Azzi, S. 19-20.

<sup>128</sup> Քասունի Ե., Նախահայկական Հայաստան, Պէյրոս, 1950, էջ 104:

<sup>129</sup> Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, էջ 335:

<sup>130</sup> Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 35, 44:

<sup>131</sup> Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 99:

<sup>132</sup> KUB XXVI 29+KUB XXXI 55 (Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 58).

<sup>133</sup> Kammenhuber A., Keilschrifttexte aus Boğazköy (KBo XVI), Orientalia, 1970, № 39, 4, S. 557. øæÛ³Ý ²., Ýbí.

³ßË., չհ 116-117:

Ինգալավա քաղաքում.

57. ma-aE-Ea-an-ma Ea-me-eš-Ea-an-za ki-ša-at nu I-NA KUR<sup>URU</sup> Az-zi

58. da-a-an KAS-ši nam-ma pa-a-un nu-za I-NA<sup>URU</sup> In-ga-la-wa

59. A-NA ÉRIN<sup>MEŠ</sup> ANŠU.KUR.RA<sup>iIA</sup> ú-w-a-tar i-ya-nu-un...<sup>134</sup>

«Հենց որ գարունը բացվեց, դեպի Ազգի երկիր երկրորդ անգամ ճանապարհ ընկա և Ինգալավա քաղաքում հետիոտն զորքերի և մարտակառքերի զորատես անցկացրեցի...»:

Այնուհետև խեթական արքան, խորանալով Հայաստան-Ազգիի տարածքում, գրավում է Արիպսա և Դուզգամա քաղաքները:

Պատմագրության մեջ կարծիք է հայտնվել, որ Ինգալավան Հայաստան-Ազգիի քաղաքներից մեկն է եղել և գտնվել է հին հայկական Անգեղ տուն գավառում, առաջարկվել են նաև այլ տեղադրություններ: Է. Ֆոռերն Ինգալավան փնտրել է Անգեղ տուն գավառի Անգղ ամրոցի տեղում, սակայն նշել է, որ այն չի գտնվել Հայաստանի կազմում՝ չբացառելով նաև, որ Ինգալավան կարող էր գտնվել նաև Վերին Եփրատի հովտում<sup>135</sup>: Ե. Կավենյակը նույնպես Ինգալավան տեղորոշել է Ինգիլայի՝ հին հայկական Անգեղ տան տարածքում<sup>136</sup>: Գ. Ղափանցյանը հնարավոր է համարում, որ Ինգալավան մինչև արշավանքի սկիզբն արդեն Հայաստան-Ազգիից գրավվել էր<sup>137</sup>: Զ. Գարստանգի և Օ. Գըրնիի աշխատության մեջ Ինգալավան տեղորոշվել է Գայլ (Լյուկոս) գետի հովտում գտնվող անտիկ Սեգալուլա քաղաքի տեղում<sup>138</sup>: Ըստ Ն. Մարտիրոսյանի՝ Ինգալավան Ծոփքի Անգեղ տեղանունն է (ներկայիս Ակլ)<sup>139</sup>: Ըստ Ս. Երենյանի՝ Հայաստանի Ինգալավա-Թարխիզամա քաղաքը գտնվել է հետագայի Թորղանի տեղում՝ Եկեղյաց գավառում<sup>140</sup>: Ն. Ադոնցն Ինգալավա քաղաքը փնտրել է Կունմախա տանող ուղիների վրա՝ Եփրատի արևմտյան ափին<sup>141</sup>: Հ. Մանանդյանը համաձայնել է Է. Ֆոռերի այն տեսակետի հետ, որ Ինգալավան հետագայի Ինգիլենեն է, հին հայկական Անգեղ տունը, ներկայիս Եզիլը: Այդ քաղաքն, ըստ Հ. Մանանդյանի, Հայաստան-Ազգիի բնակավայրերից է եղել և նվաճվել էր խեթերի կողմից<sup>142</sup>: Վ. Խաչատրյանն Ինգալավան համեմատել է ճորոխի ստորին հովտի հայկական Նիգալ գավառի համանուն կենտրոնի հետ՝ գտնելով, որ հայաստական այդ քաղաքի անունը կազմված է հայերենի հնդեվրոպական նիգ «դռան ետևի սողնակ» և ալ-բ «խորք, խորունկ տեղ» արմատներից: Խեթերն, ըստ նրա, այդ անվան «ի» հնչյունը դրափոխել են՝ ավելացնելով իրենց լեզվի –awa(r) ածանցը<sup>143</sup>: Ըստ Ա. Քոսյանի՝ Ինգալավան կարող էր գտնվել կամ Հայաստանի սահմանակից տարածքում, կամ էլ հենց Հայաստանի սահմանամերձ

<sup>134</sup> KBo IV 4 III 57-59=2Bo TU 58 (Götze A., Die Annalen des Muršiliš, S. 130-131).  
<sup>135</sup> Forrer E., ֆajasa-Azzi, S. 13-14.  
<sup>136</sup> Cavaignac E., Le premier royaume d'Armenie, RHA, 1934, № 17, p. 12.  
<sup>137</sup> ИАР<sup>1</sup> 1954.  
<sup>138</sup> Garstang J., Gurney O., The Geography of the Hittite Empire, London, 1959, p. 39.  
<sup>139</sup> Ծ<sup>3</sup>ն<sup>3</sup>Կ<sup>3</sup>ն<sup>3</sup>Ա<sup>3</sup>Յ<sup>3</sup> Ը<sup>3</sup>.. ãñááóՄ<sup>3</sup>Յ<sup>3</sup> ñ ÷ ãùñ<sup>3</sup>Է<sup>3</sup>Շ<sup>3</sup>Ի<sup>3</sup>Յ<sup>3</sup> Յ<sup>3</sup>Յ<sup>3</sup>áóՅ<sup>3</sup>Յ<sup>3</sup>ñáó Մ<sup>3</sup>Է<sup>3</sup>Շ<sup>3</sup>Յ<sup>3</sup>, լճ 90-91:  
<sup>140</sup> օñ»Մ<sup>3</sup>Յ<sup>3</sup> Է<sup>3</sup>.. Ը<sup>3</sup>Մ<sup>3</sup> Ա<sup>3</sup>áՕáñ!Շ<sup>3</sup> Ի<sup>3</sup>½Մ<sup>3</sup>áñՄ<sup>3</sup>Յ<sup>3</sup> Á<sup>3</sup>Յ<sup>3</sup>Á<sup>3</sup>óùÁ, լճ 31:  
<sup>141</sup> շ<sup>3</sup>áՅ<sup>3</sup>ó Ը<sup>3</sup>.. Ը<sup>3</sup>Մ<sup>3</sup>Է<sup>3</sup>Շ<sup>3</sup>Յ<sup>3</sup> ă<sup>3</sup>ñ<sup>3</sup>Մ<sup>3</sup>áá<sup>3</sup>Մ<sup>3</sup>áóՅ<sup>3</sup>, լճ 45:  
<sup>142</sup> МанандянЯ.Э.О некоторыхЯ.порныхЯ.проблемаЭ.Я.ГориниЯ.географияЯ.древнейЯ.АрменииЯ. 99.  
<sup>143</sup> Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 34, 42-43:



որևէ շրջանում<sup>144</sup>:

Հարկ է նշել, որ Մուրսիլիսի տարեգրությունում չի նշվել, որ նա անցել է Եփրատ գետը և առաջացել Իսուվայի տարածքով, եթե ընդունենք, որ Ինգալավան գտնվել է Անգեղ տուն գավառում: Ըստ տեքստի՝ քաղաքն, ամենայն հավանականությամբ, գտնվել է հայաստանական սահմանային գոտում:

Ըստ այդմ, կարելի է առաջարկել քաղաքի տեղադրությունը Վերին Եփրատի ավազանում, որտեղից ճանապարհ էր բացվում դեպի Հայաստան-Ազգի պետության խորքերը:

10. Լալատտա (<sup>URU</sup>La-la-at-ta)

Հիշատակվել է Հայաստանի սահմանամերձ Ուրա քաղաքի մոտ գտնվող բնակավայրերի ցուցակում<sup>145</sup>:

11. Լախա (<sup>iUR.SAG</sup>La-Ēa-a)

Լախա լեռնանունը հանդես է գալիս խեթական արքա Սուպպիլուլիումաս I-ի արձանագրությունում.

22. ... ar-Ēa wa-ar-nu]-ut <sup>URU</sup>Zu-uĒ-Ēa-pa-an-ma-kán URU-an

23. [Ēu-u-ma-an-da-an ar-Ē] a wa-ar-nu-ut NAM.RA <sup>MEŠ</sup>-ma-kán

24. ....I-N]A <sup>URU</sup>i-a-ya-ša i-ya-at-ta-at

25. ....]x-at na-an IŠ-[T]U <sup>iUR.SAG</sup>La-Ēa-a

...այրեց Ծուխապա քաղաքը, ամբողջովին քաղաքն այրեց, գերիները (փախստականները).....դեպի Հայաստան գնացին..... և նրան Լախա լեռներից...<sup>146</sup>:

Խեթական բանակն արշավանքի ժամանակ ներխուժել էր Իսուվա, այնուհետև ռազմերթը շարունակելով՝ հասել էր Ծուխապա երկիրը: Այն նվաճելուց հետո խեթական արքան արշավել է դեպի Հայաստան:

Ծուխապան Իսուվայի հարևանությամբ էր և սահմանակից է եղել Հայաստանին, որտեղ և գտնվել են Լախա լեռները (կամ լեռը): Հավանաբար, այս լեռները Իսուվայից հյուսիս-արևելք են գտնվել<sup>147</sup>:

12. Լախիրիլա (<sup>URU</sup>La-Ēi-ir-Ēi-la)

Այս քաղաքի մասին հիշատակություն է պահպանվել է KUB XXVI 39 I տեքստում, որտեղ Լախիրիլան ներկայացվել է որպես [...u/տ]անուս աստծո պաշտամունքի վայր ([<sup>D</sup>...-š/t]a-an-nu-uš <sup>URU</sup>La-Ēi-ir-Ēi-la)<sup>148</sup>: Հայաստանի բնակավայրերի շարքում այն նշվել է երրորդը և հանդիսացել է Հայաստան-Ազգի պաշտամունքային կենտրոններից մեկը:

<sup>144</sup> Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 110:

<sup>145</sup> KUB XXVI 29,6 (Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 69, 117).

<sup>146</sup> KUB XXXIV 23 I 25 (Güterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, 3, p. 83).

<sup>147</sup> Վ. Խաչատրյանը կարծիք է հայտնել, որ Լախա լեռները ներկայիս Բյուրակնյա կամ Հայկական Պար լեռներն են (Хачатрян В. В. ВоЯточные провинции ХетТЯкой империи. Я. 141. Նույնի, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 58):

<sup>148</sup> KUB XXVI 39 I 28 (Forrer E., ĩajasa-Azzi, S. 6). Վ. Խաչատրյանն այս աստծո անունը վերականգնել է որպես [Iz-zi-iš-t]a-an-nu-uš (Хачатрян В. В. ВоЯточные провинции ХетТЯкой империи. Я. 148): Գ. Ղափանցյանն առաջարկել է Լախիրիլա քաղաքի անունը թարգմանել որպես «Լախիրի հյուղ» (ИЛР. Я. 148):

Դժվար է Լախիդիսիա քաղաքի համար որևէ հատուկ տեղադրություն առաջարկել, քանի որ նյութը շատ սուղ է, և որևէ այլ տեքստում այս քաղաքանունը չի հիշատակվել:

13. Լիտտա (<sup>URU</sup>Li-it-ta)<sup>149</sup>

Հիշատակվել է Խեթական տերության հյուսիս-արևելյան շրջաններից և վերինեփրատյան երկրների առանձին բնակավայրերից հավաքագրված պայմանագրային զինծառայության զինվորների ցուցակի տեքստում: Պայմանագրի տեքստում ներկայացվել են հինգ տեղանուններ հետևյալ հաջորդականությամբ՝ <sup>URU</sup>īa-x-[.....], <sup>URU</sup>ša-a-la, <sup>URU</sup>E-er-Ei-ta, <sup>URU</sup>Li-it-ta, <sup>URU</sup>Te-mi-ya: Լիտտա քաղաքը ցուցակում տրվել է Հայասայի Արխիտա (տեքստում տրվել է Երխիտա ձևով) և Տեմիյա (որը, թերևս նույնն է, ինչ այլ տեքստերից հայտնի Տիմիյան, ժամանակակից Ջիմին՝ Երզնկայից քիչ հարավ-արևելք) քաղաքների միջև<sup>150</sup>: Ա. Քոսյանը այս քաղաքը հնարավոր է համարում տեղորոշել հռոմեական աղբյուրներում վկայված Olotoedariza (տարընթերցումներից մեկը՝ Lytararizon, գտնվել է Նիկոպոլիսից-Սատաղ ճանապարհի վրա) բնակավայրի տեղում<sup>151</sup>:

Լիտտա քաղաքն, ըստ երևույթին, գտնվել է Վերին Եփրատի ավազանում, ներկայիս Ջիմին քաղաքից արևելք՝ Հայասա-Ազգիի սահմանային արևմտյան մասում:

14. Խալիմանա (<sup>URU</sup>īa-li-ma-na-a)

Հայասական այս քաղաքը հիշատակվում է Մուրսիլիսի տարեգրությունում: Իր արշավանքի ընթացքում գրավելով Հայասա-Ազգիի Արիպաս և Դուգզամա քաղաքները՝ Մուրսիլիս II-ը վերադառնում է Խաթթի, սակայն հաջորդ տարի՝ իր թագավորության տասնմեկերորդ տարում, նա կրկին արշավում է Հայասա այնտեղ խեթական գերիշխանությունն ամրապնդելու համար: Հայասայի բնակիչները խեթական արքային ընդառաջ են ուղարկում Խալիմանա քաղաքից Մուտտիին: Նրան հաջողվում է բանակցությունների միջոցով թույլ չտալ, որպեսզի խեթական արքան կրկին ներխուժի Հայասա-Ազգի<sup>152</sup>:

Ե. Ադոնցն այս քաղաքանունը համեմատել է Ծոփքի *Ιαλιμβάνων* բնակավայրի հետ<sup>153</sup>: Գ. Ղափանցյանը կարծիք է հայտնել, որ Մուտտին կարող էր հանդես գալ նաև որպես Հայասա-Ազգիի թագավոր, որը փոխարինել էր խեթերից պարտություն կրած Աննիյասին<sup>154</sup>: Եթե այդ կարծիքը ճիշտ է, ապա կարելի է ենթադրել, որ Խալիմանան այդ ժամանակ հանդիսացել է Հայասա-Ազգիի քաղաքական կենտրոնը:

Սակայն նյութի սղությունը թույլ չի տալիս առաջարկելու որևէ կոնկրետ տեղադրություն Խալիմանա քաղաքի համար:

15. Խարսալասա (<sup>URU</sup>īA]R-ša-la-ša-an, <sup>URU</sup>īAR-ša-la-aš-ši)

Խարսալասա քաղաքանունը հիշատակվել է Երկու անգամ՝ ինվենտարային և

ՔՅ60, ռ. 1):

<sup>149</sup> Ertem H., Coğrafya Adlari Dizini, Ankara, 1973, s. 87. RGTC, VI, S. 249.

<sup>150</sup> KUB XXVI 62 IV 35 (Քոսյան Ա., Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեքստերում, էջ 256).

<sup>151</sup> Քոսյան Ա., Խեթական KUB XXVI 62 սեպագիր տեքստը և Վերին Եփրատի ավազանի պատմական աշխարհագրության խնդիրները, ՄՄԱԵԺ, 2004, XXIII, էջ 276:

<sup>152</sup> KBo IV 4 IV 44, 50 (Götze A., Die Annalen des Muršiliš, S. 138-141).

<sup>153</sup> Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 44:

գուշակային խեթական տեքստերում: Ինվենտարային տեքստում հիշատակվել է *Æuwaši* կոչվող սրբավայրում պահվող <sup>URU</sup> *īaršalašši* քաղաքի Ամարոպի աստծո արձանը, իսկ գուշակային տեքստի նպատակն է եղել պարզել Հայասա-Ազգիի դեմ կազմակերպված (կամ կազմակերպվող) արշավանքի ընթացքը<sup>155</sup>: Հնարավոր է նաև, որ <sup>URU</sup> *īAR-ša-la-aš-ši-ն* նույնական չէ [<sup>URU</sup> *īA*]R-ša-la-ša-an բնակավայրի հետ<sup>156</sup>:

Այս քաղաքը գտնվել է Հայասայի սահմանային Ուրա քաղաքի մոտ:

16. Խուդդու (<sup>URU</sup> *īu-ud-du*)

Խեթական տեքստում հիշատակվել է որպես Հայասայի Ուրա քաղաքի մոտ գտնվող բնակավայրերից մեկը: Տեքստն իրենից ներկայացնում է «միջին խեթական փուլի» (մ.թ.ա. XVդ. վերջ - XIVդ. սկիզբ) պայմանագիր՝ կնքված Ուրա քաղաքի հետ<sup>157</sup>:

17. Կամ... (<sup>URU</sup> *Kam* [...])

Այս քաղաքանունը հանդիպում է հայասական աստվածների ցուցակում: Այն հանդիսացել է Տարունուս աստծո պաշտամունքի վայրը (<sup>D</sup>Ta-a-ru-u-mu-uš <sup>URU</sup> *Kam*-[...])<sup>158</sup>: Քաղաքի անվան մեջ պակասում են մի քանի սեպանշաններ, ինչը դժվարություն է ստեղծում տեղանունն ամբողջովին վերականգնելու համար:

Այս քաղաքը նույնացվել է խեթական սկզբնաղբյուրներից հայտնի Կունմախայի (*KUR* <sup>URU</sup> *KummaEa*)՝ հետագայի Կամախի հետ: Ն. Ադոնցն այս պակասավոր տեղանունը վերականգնել է *Kam(uEa)*<sup>159</sup>: Ըստ Ն. Մարտիրոսյանի՝ խեթական արձանագրությունների մեջ պահպանված Կունմախան ներկայիս Քեմախն է՝ պատմական Դարանադյաց գավառի Կամախը: Նա համարել է, որ այդ քաղաքը հանդիսացել է Հայասա-Ազգիի սահմանամերձ և գլխավոր քաղաքներից մեկը<sup>160</sup>: Հ. Մանանդյանն այս տեղանունը համեմատել է եփրատյան Կամախի հետ, սակայն նշել է նաև Բիթլիսից Տկմ հեռու գտնվող ժամանակակից Կամախ գյուղը՝ որպես հավանական տեղադրություն այդ բնակավայրի համար<sup>161</sup>:<sup>Ե</sup>

Եթե <sup>URU</sup> *Kam* [...] քաղաքանունը հնարավոր է վերականգնել <sup>URU</sup> *KummaEa*, ապա կարելի է ենթադրել, որ Կունմախա քաղաքը պայմանագրի կնքման պահին գտնվել է Հայասայի կազմում:

Դեռևս Թուրքիայից III-ի հայասական արշավանքի ընթացքում Կունմախայի մոտ հանդիպել էին խեթական և հայասական զորքերը:

42. nu ma-aE-Ea-an A-BI A-BI-YA I-NA KUR <sup>URU</sup> *īa[-ya-ša a]-ar[-aš(?)]*

43. nu-uš-ši <sup>m</sup>Kar(?) -an-ni-iš LUGAL KUR <sup>URU</sup> *īa-ya-ša*[...]

<sup>154</sup> ИАР, т. 1, № 74.

<sup>155</sup> RGTC, VI, S. 90. RGTC, VI/2, S. 32 (Քոսյան Ա., Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեքստերում, էջ 254-255).

<sup>156</sup> Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 54:

<sup>157</sup> KUB XXVI 29+KUB XXXI 55 (Քոսյան Ա., նշվ. աշխ., էջ 58, 117).

<sup>158</sup> KUB XXVI 39 I 29 (Forrer E., *īajasa-Azzi*, S. 6).

<sup>159</sup> Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, էջ 46:

<sup>160</sup> Մարտիրոսյան Ն., Պրպտուններ փոքրասիական անուններու մասին, էջ 94-95:

<sup>161</sup> Манандян Я. И. Некоторые из порных проблем истории географии древней Армении. Я. 76.

44. /ŠA-PA/L(?)<sup>URU</sup> Kum-ma-Ēa za-aĒ-Ēi-y [a...

Երբ պապս Չայասսա երկիր եկավ, նրան Կարաննիսը՝ Չայասսայի արքան ... Կունմախայի տակ ճակատամարտ...<sup>162</sup>:

Արծանագրությունը կազմել է տվել Մուրսիլիս II-ը՝ նշելով, որ իր պապը՝ Թուդխալիյաս III-ը, շարժվել է Չայասսա և այնտեղ Կունմախա քաղաքի մոտ հանդիպել է Չայասսայի Կարաննիս արքայի զորքերի հետ և ճակատամարտ տվել: Չետագայում քաղաքը նորից անցել է խեթական գերիշխանության ներքո և նշվել է որպես առանձին քաղաքական միավոր<sup>163</sup>:

18. Չայասսա (KUR<sup>URU</sup> i-a-ya-ša, KUR<sup>URU</sup> i-a-a-ya-ša-aš, KUR<sup>URU</sup> i-a-ya-ša-za, <sup>URU</sup> i-a-a-ya-ša, <sup>URU</sup> i-a-ya-ša-aš, <sup>URU</sup> i-a-a-ya-ša-an, <sup>URU</sup> i-a-ya-ša-an, <sup>URU</sup> i-a-ya-ša, <sup>URU</sup> i-a-ya-ša-az, <sup>URU</sup> i-a-i-ya-ša)<sup>164</sup>

Մ.թ.ա. XIV-XIIIդդ. խեթական սկզբնաղբյուրներում հիշատակվել է Չայասսա երկիրը՝ երբեմն հանդես գալով Ազգի անվամբ: Արծանագրություններում Չայասսան գրվել է և՛ որպես երկրանուն, և՛ որպես քաղաքանուն: Խեթական սեպագիր աղբյուրներում URU «քաղաք, բնակավայր» շումերերեն գաղափարագիրը դրվել է նաև որոշ երկրների անունների առջև, մինչդեռ այդ երկրներում համանուն քաղաքներ չեն եղել: Սակայն, ամենայն հավանականությամբ, Չայասսա-Ազգիում Չայասսա անվամբ քաղաք գոյություն է ունեցել և հանդիսացել է թագավորության քաղաքական և պաշտամունքային կենտրոնը:

Խեթական սեպագիր տեքստերում տվյալներ չկան այն մասին, որ խեթական արքաներից որևէ մեկի օրոք Չայասսա քաղաքը նվաճվել է, չնայած որ նրանք բազմիցս ներխուժել են Չայական լեռնաշխարհի արևմտյան շրջանները, ինչը վկայում է այն մասին, որ քաղաքը հեռու է մնացել խեթական զորքերի արշավանքների երթուղիներից: Ամենայն հավանականությամբ, երկրի մայրաքաղաքը գտնվել է առավել անվտանգ և անհասանելի արևելյան շրջաններում: Խեթա-հայասական պայմանագրի վերջում տրված աստվածների ցուցակում, հայասական քաղաքների շարքում առաջինը հիշատակվել է Չայասսա քաղաքը, որպես երկրի գլխավոր աստվածության պաշտամունքի կենտրոն<sup>165</sup>:

Չայասսա տեղանունը մասնագետների մեծ մասի կարծիքով *haya* ցեղանվան բացատրության գլխավոր կրկանն է: Առաջին անգամ Ն. Սարտիրոսյանը հայտնեց այն կարծիքը, որ Չայասսան հայ ազգի հնագույն հայրենիքն է եղել, իսկ Չայասսայի բնակիչները հայերի նախնիներն են հանդիսացել<sup>166</sup>: Կ. Ռոթն, իսկ այնուհետև ավելի հիմնավոր ու համոզիչ կերպով Պ. Կրեչմերը նույնպես ցույց են տվել, որ Չայասսա երկիրը նույնն է, ինչ որ Չայքը կամ Չայաստանը<sup>167</sup>: Գ. Ղափանցյանը Խայեք (Բաբերդից հարավ-արևմուտք) բնակավայրի անունը բխեցնում է Չայասսա տեղանունից<sup>168</sup>: Ս. Երեմյանը Թիլ-Չայասսա քաղաքը տեղադրել է հին

<sup>162</sup> Güterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, JCS, 1956, № 10, 2, p. 66.

<sup>163</sup> Houwink ten Cate Ph. H. J., The Records of the Early Hittite Empire (C. 1450-1380 B. C.), Leiden, 1970, p. 75. Քոսյան Ա., Անի-Կամախը խեթական դարաշրջանում, ՊԲՉ, 2002, թիվ 3, էջ 225-241:

<sup>164</sup> RGTC, VI, S. 63-64. RGTC, VI/2, S. 22.

<sup>165</sup> KUB XXVI 39 I 26 (Forrer E., i ajasa-Azzi, S. 6).

<sup>166</sup> Մարտիրոսեան Ն., Չայեքենի յարաբերութիւնը հեթոդերենի հետ, ՉԱ, 1924, թիվ 9-10, էջ 453:

<sup>167</sup> Roth K., Die Bedeutung des Armenischen, ՉԱ, 1927, թիվ 11-12, էջ 741-750: Kretschmer P., Der Nationale Name der Armenier, ՉԱ, 1933, թիվ 7-8, էջ 429-432 (հայերեն համառոտ թարգմանությունը):

<sup>168</sup> ԱՄՔԱ, 1941.

հայկական թիվ ավանի տեղում (Երզնկայից ոչ հեռու)<sup>169</sup>: 3. Մանանդյանը նշել է, որ երկիրը Հայասսա է կոչվել իր մայրաքաղաքի անվամբ (Հայասսա), որը Սարգոն II-ի արձանագրությունում հիշատակված է եղել Ուայաիս ձևով և գտնվել է Վանա լճի հյուսիսային ափին<sup>170</sup>: 4. Խաչատրյանն ավելի հիմնավոր կերպով ապացուցել է, որ Հայասսա տեղանվան հիմքում հայ էթնոնիմն է ընկած: Ըստ նրա, խեթերը օտար արմատին, որը հարևան Ժողովրդի ինքնանունն է, ավելացրել են իրենց ածանցը (-aša)<sup>171</sup>:

19. Պախխուտեյա (<sup>URU</sup>Pa-a~~Ē~~-~~Eu~~-u-te-ya)

Այս բնակավայրը նույնպես հիշատակվել է KUB XXVI 39 I տեքստում, որտեղ տրվել է հայասական աստվածների ցուցակն իրենց պաշտամունքի կենտրոններով: Ըստ այդ ցուցակի՝ Պախխուտեյան հանդիսացել է Հայասսա-Ազգիի պաշտամունքային կենտրոններից մեկը, որտեղ պաշտել են Ամպրոպի աստծուն (<sup>D</sup>U <sup>URU</sup>Pa-a~~Ē~~-~~Eu~~-u-te-ya)<sup>172</sup>:

Ըստ Վ. Խաչատրյանի՝ Պախխուտեյան ժամանակակից Պախ բնակավայրն է և գտնվել է Բյուրակնի լեռների արևմտյան հատվածում: Նա Պախխուտեյան նմանեցնում է Պախխուվա քաղաքի հետ<sup>173</sup>, որն, ինչպես վերը նշվեց, հիշատակվել է «Պախխուվացի Միտայի» տեքստում (KUB XXIII 72): Ըստ այդ տեքստի՝ Պախխուվան գտնվել է Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում, սահմանակից է եղել Իսուվայի և Հայասայի տարածքներին:

Ինչ վերաբերում է Պախխուվա և Պախխուտեյա անունների նմանությանը, ապա, ամենայն հավանականությամբ, այս քաղաքները տարբեր են եղել, սակայն գտնվել են նույն տարածաշրջանում (Հայկական լեռնաշխարհի արևմտյան մասում):

Ըստ Զ. Գարստանգի և Օ. Գըրնիի՝ Պախխուվան գտնվել է ներկայիս Դիվրիդի բնակավայրի տեղում<sup>174</sup>: Գ. Ջահուկյանը նշել է, որ Pa~~Ē~~uteia անվան –teja մասնիկը խորիերենի teja «մեծ» բառից է առաջացել, և այս քաղաքը հանդիսացել է Պախխուվա երկրի կենտրոնը: Պախխուտեյա անվան առաջացումը նա կապել է հայերեն «փախ, փախուստ» բառի հետ, կամ խեթերենի par~~Ē~~-«քշել» բառից<sup>175</sup>:

20. Պատտեու (<sup>URU</sup>Pa-a-at-te-u-[...])

Հայասական աստվածների ցուցակում Հայասսա քաղաքից հետո հիշատակվել է Պատտեու[...] քաղաքի աստվածուհին (<sup>D</sup>IŠ<sup>TAR</sup> <sup>URU</sup>Pa-a-at-te-u-[...])<sup>176</sup>: Ընդ որում, այս աստվածուհին հանդես է գալիս որպես Հայասայի պանթեոնի գլխավոր աստվածություններից մեկը: Քաղաքանվան վերջում բացակայում է մի քանի սեպանշան: Մասնագետների մի մասն ընդունել են, որ այս քաղաքի անվանումը կարելի է վերականգնել որպես Պաթթեյարիզա

<sup>169</sup> Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, ՊԲՀ, 1970, թիվ 2, էջ 30:

<sup>170</sup> Манандян Я. О некоторых японских проблемах и географии древней Армении. 1972, № 103.

<sup>171</sup> Хачатрян В. Хайацци. 1972, № 8, стр. 38:я

<sup>172</sup> KUB XXVI 39 I 30 (Forrer E., ĩajasa-Azzi, S. 6).

<sup>173</sup> Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 36:

<sup>174</sup> J. Garstang and O. Gurney, The Geography of the Hittite Empire, London, 1959, p. 35.

<sup>175</sup> Джаукян Г. О соотношении айкаякогоя армянского языка. 1988, № 1, էջ 77:

<sup>176</sup> KUB XXVI 39 I 26.

(նույնանուն քաղաք գոյություն է ունեցել նաև Խաթթիում)<sup>177</sup>: Իր աշխատության մեջ Է. Ֆոռերը կարծիք է հայտնել, որ այս քաղաքանունը չէր կարող նույնացվել խեթական տեքստում հիշատակված Պաթթեյարիզայի հետ, նա այն համեմատել է ներկայիս Բթառիճի հետ (Կամախից 16կմ հյուսիս-արևմուտք)<sup>178</sup>: Ըստ Գ. Ղափանցյանի՝ -ri-ga (կամ -rig) վանկերով լրացվելու դեպքում Patteu- քաղաքանունը նույնանուն կղառնա Pittiariga-ի հետ, որը ներկայիս Բթառիճն է՝ Երզնկայից ոչ հեռու<sup>179</sup>: Իսկ ըստ Ն. Մարտիրոսյանի՝ այս քաղաքի անունը համապատասխանում է Երիզայից (Երզնկայից) արևելք գտնվող Բիտարիք կամ Բիտտերիճ տեղանվանը<sup>180</sup>: Ըստ Ա. Քոսյանի՝ Patteu- քաղաքանվան վնասված մասի վերականգնումը և համադրումը խեթական տեքստերի Պիտտիարիզայի հետ արդարացված չէ, և Պիտտիարիզա քաղաքը չէր կարող գտնվել Հայասսայի տարածքում<sup>181</sup>:

21. Պարտանտա (<sup>URU</sup>Pár-ta-an-ta)

Խեթական պայմանագրային տեքստում նշվել է որպես Ուրա քաղաքի մերձակայքում գտնվող բնակավայր<sup>182</sup>:

22. Պարրայա (<sup>URU</sup>Pár-ra-y[a]?)<sup>183</sup>

Հայասական այս քաղաքը Գագու քաղաքի հետ միասին սեպագիր աղբյուրում հիշատակվել է որպես Ունագաստաս (<sup>D</sup>Ú-na-ag-ga-aš-ta-aš <sup>URU</sup>Pár-ra-ya) աստծո պաշտամունքի վայր<sup>184</sup>, ինչը խոսում է այն մասին, որ այս աստվածության պաշտամունքը տարածված է եղել Հայասա-Ազգիում:

Ըստ Հ. Մանանդյանի՝ Պարրայա քաղաքի անունը նման է ասորեստանյան աղբյուրներից հայտնի Բառի տեղանվանը, որն, ըստ նրա, հետագայի հայկական Բերկրի բնակավայրն է՝ Վանա լճի հյուսիս-արևելյան կողմում<sup>185</sup>:

Աղբյուրների՝ ներկայումս հայտնի տվյալների համաձայն առայժմ այսքանը կարելի է ասել Պարրայայի տեղադրության մասին:

23. Պիտտիարիզա (<sup>URU</sup>Bít-ti-ya-ri-ga, <sup>URU</sup>Pí-it-ti-ya-ri-ik, <sup>URU</sup>Pít-te-ya-ri-ga)<sup>186</sup>

Պիտտիարիզա (Պաթթեյարիկա) քաղաքը հիշատակվում է Վերին Եփրատի ավազանի մի խումբ երկրների հետ խեթական մայրաքաղաք Խաթթուսասում Արնուվանդաս I-ի կնքած պայմանագրում (մ.թ.ա. XIVդ. սկիզբ) «Պախխուվացի Միտայի» տեքստում: Պիտտիարիզայից Արիխպիցցին, Դուգգամայից ոմն Աիսսի և մեկ այլ քաղաքի (անվանումը չի պահպանվել) ներկայացուցչի հետ միասին հանդես են գալիս որպես Պախխուվայի հետագա լոյալության երաշխավոր: Պիտտիարիզան խեթական կողմից դիտվել է որպես վստահելի քաղաքական

<sup>177</sup> RGTC, VI, S. 319-320. RGTC, VI/2, S. 127.

<sup>178</sup> Forrer E., *İ ajasa-Azzi*, S. 7.

<sup>179</sup> *ИЛР* №1, Янв 59, 91-92.

<sup>180</sup> Մարտիրոսյան Ն., Պրպտուններ փոքրասիական անուններու մասին, էջ 96-97:

<sup>181</sup> Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 79:

<sup>182</sup> KUB XXVI 29. KUB XXXI 55,3 (Քոսյան Ա., նույն տեղում, էջ 79).

<sup>183</sup> Ertem H., *Coğrafya Adlari Dizini*, s. 108.

<sup>184</sup> KUB XXVI 39 I 33 (Forrer E., *İ ajasa-Azzi*, S. 6).

<sup>185</sup> Манандяня ЯзюянекоторыеяЯпорныяяпроблемаэяЯгорияияягеографияядревнейяАрменияиЯ104.я

<sup>186</sup> Ertem H., *Coğrafya Adlari Dizini*, s. 112.

միավոր Դուզգամայի հետ միասին<sup>187</sup>:

Ըստ Ս. Երենյանի՝ Երզնկայի դաշտի խոշոր կենտրոններից է եղել Բիթառիզա քաղաքը (ներկայիս Բթառիճ, Ալթըն-Թեփեի ավերակներից ոչ հեռու), որ այլ կերպ կոչվել է Պաթթեյարիկա, և այս անունը երբեմն վերագրվել է ողջ Հայասա-Ազգի երկրին<sup>188</sup>: Հ. Մանանդյանը նույնպես ենթադրել է, որ Պաթթեյարիկա քաղաքի անունը կարելի է համեմատել ներկայիս Բթառիճ գյուղի անվան հետ (Երզնկայի դաշտում), և այդ տարածքը մտել է Խեթական տերության կազմի մեջ: Իսկ հայասական Պիթթեյարիկան, ըստ նրա, կարող էր գտնվել Բերդակ ամրոցի տեղում՝ Խարբերդից 10 կմ հյուսիս<sup>189</sup>: Վ. Խաչատրյանը ևս Պիթթեյարիկան տեղորոշել է Բթառիճ գյուղի տեղում՝ Երզնկայից հարավ-արևելք, և տեղանվան հիմքում է դրել է հայերենի հնդեվրոպական բուժ «հաստ, գուլ, թավ» և առիճ «գյուղ, շեն» արմատները<sup>190</sup>:

Սակայն, Պիտտիյարիզան խեթական աղբյուրներում հանդես է գալիս որպես խեթական կողմից նշված պայմանագրերի կնքմանը վկա աստվածությունների պաշտամունքի վայր, որից էլ կարելի է եզրակացնել, որ այն հանդիսացել է Խաթթիի քաղաքներից մեկը:

24. Տախ(ա)նիսարա (<sup>URU</sup>Ta~~Æ~~-~~Æ~~a-ni-ša-ra, <sup>URU</sup>Ta~~Æ~~-ni-ša-ra)

Այս քաղաքանունը տրվել է մի գուշակային տեքստում, որի նպատակն է եղել պարզել Ազգիի դեմ կազմակերպված (կամ կազմակերպվող) արշավանքի ընթացքը: Տեքստում հիշատակվել են մի շարք տեղանուններ ինչպես Հայասա-Ազգիի, այնպես էլ դրան սահմանակից խեթական տարածքում: Գտնվել է Հայասայի Ուրա սահմանային քաղաքի մոտ<sup>191</sup>:

25. Տամատա (<sup>URU</sup>Ta-ma-at-ta)

Տամատա քաղաքը հանդիսացել է Տերիտտիտունիս աստծո պաշտամունքի կենտրոնը Հայասա-Ազգիում (<sup>D</sup>Te-ri-it-ti-tu-u-ni-i[š?] <sup>URU</sup> Ta-ma-at-ta)<sup>192</sup>:

Նյութի սղությունն ու քաղաքանվան այս եզակի հիշատակությունը թույլ չեն տալիս առաջարկելու որևէ հստակ տեղադրություն:

26. Տավատենա (<sup>URU</sup>Ta-wa-te-na)

Հայասայի Տավատենա քաղաքի մասին տեղեկություն կա խեթական մի գուշակային տեքստում, որի նպատակն էր պարզել Հայասայի-Ազգիի դեմ կազմակերպված (կամ նախապատրաստվող) արշավանքի հնարավոր ընթացքը<sup>193</sup>:

Տավատենա քաղաքը գտնվել է Հայասայի Ուրա սահմանային քաղաքի շրջակայքում և, ամենայն հավանականությամբ, հանդիսացել է հայասական այդ ամրացված սահմանային գոտու ամրոցներից մեկը:

27. Ուկսու (<sup>URU</sup>Uk-šu-u)

«Միջին խեթական» փուլի (մ.թ.ա. XVդ. վերջ - XIVդ. սկիզբ) մի պայմանագրում տրված

<sup>187</sup> KUB XXIII 72 (Քոսյան Ա., Նոր նյութեր Խեթական տերության և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին, էջ 240-242).

<sup>188</sup> Երենյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, էջ 31:

<sup>189</sup> Мананджян Я. З. О некоторых япторных проблемах истории географии древней Армении Я105.

<sup>190</sup> Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 43, 78:

<sup>191</sup> KUB XLIX 11 III 7, KUB XLIX 11 II 20 (Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 93).

<sup>192</sup> KUB XXVI 39 I 30-31 (Forrer E., i ajasa-Azzi, S. 6).

Ուրա սահմանային քաղաքի մերձակայքում գտնվող բնակավայրերից մեկն է<sup>194</sup>:

28. Ուտկունիսա (<sup>URU</sup>Ud-ku-ni-ša [ ])

Հիշատակվել է միայն խեթական վերոհիշյալ գուշակային տեքստում<sup>195</sup>: Ուտկունիսան տրվել է Տավատենա, Խարսալասա քաղաքանունների հետ և նույնպես գտնվել է Ուրա քաղաքի մոտ:

29. Ուրա (<sup>URU</sup>U-ra-aš, <sup>URU</sup>U-ra-a, <sup>URU</sup>U-ra-an)

Խեթական Մուրսիլիս II թագավորի «Տասնամյա տարեգրության» յոթերորդ տարվան վերաբերող մասում կարդում ենք. «<sup>URU</sup>U-ra-aš ku-iš URU-aš [ŠA KUR <sup>URU</sup>] (A-az-zi Ea-an-te-ez-zi-iš) a-ú-ri-iš e-eš-ta na-aš-kán na-ak-ki-i pe-e-di [a-ša](-an-za...))» «և Ուրա քաղաքը, որն Ազգի երկրի առաջին սահմանային ամրոցն է, այն մի զառիվայր (դժվարամատչելի) տեղում էր»<sup>196</sup>:

Հայասա-Ազգիի թագավոր Աննիյան ավերել էր խեթական Դանկուվա քաղաքը, ինչին ի պատասխան՝ Մուրսիլիս II-ն արշավում է դեպի Հայասա-Ազգի և գրավում նրա սահմանային Ուրա քաղաքը<sup>197</sup>:

Գ. Ղափանցյանը ենթադրել է, որ Ուրան, հավանաբար, հետագայի Կամախի մոտ գտնվող Անի ամրոցն է, որի անունը տվել է Աննիյա թագավորը<sup>198</sup>: Իսկ Գ. Ջահուկյանը Ուրա քաղաքանունը բացատրել է հինանատոլիական լեզուների հիմքի վրա, ըստ որի ura-ն նշանակել է «մեծ»<sup>199</sup>: Հ. Մանանդյանը տեղորոշել է Ուրա քաղաքը Ծոփքի Անձիտ գավառի Հոռե-բերդի (Խարբերդ) տեղում<sup>200</sup>: Ըստ Վ. Խաչատրյանի՝ Ուրա տեղանունն իր մեջ ունի հայերեն ուռ «ճյուղ, ընձյուղ» արմատը, և այդ քաղաքը գտնվել է Բաբերդի մոտ (Ուռեն բնակավայրը)<sup>201</sup>: Ըստ Ա. Քոսյանի՝ Ուրա քաղաքը գտնվել է Խաթթին և Հայասան միմյանց կապող ճանապարհներից մեկի վրա՝ Գայլ գետի հոսանքի մերձակցությամբ<sup>202</sup>:

Խեթական տեքստերում տվյալներ կան նաև Ուրա քաղաքի մոտ գտնվող Խարսալասա, Տավատենա և Ուտկունիսա քաղաքների մասին<sup>203</sup>: Հավանաբար, Ուրա քաղաքն իր շրջակա բնակավայրերով կազմել է Հայասա-Ազգիի արևմտյան սահմանային ամրացված շրջանը:

Ըստ այդմ, կարելի է առաջարկել քաղաքի տեղադրությունը Կունմախայից արևելք՝ հավանաբար, հետագայի Եկեղյաց գավառում, որտեղից ճանապարհ էր բացվում դեպի Հայկական լեռնաշխարհի կենտրոնական գավառները:

30. Քաղկուսա/Քադմասա (Qa?-ad-ku/ma-ša/ta?)

Այս քաղաքանվան ընթերցումը կասկածելի է, քանի որ բավականին դժվարընթեռնելի

<sup>193</sup> RGTC VI/2, S. 167 (Քոսյան Ա., Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեքստերում, էջ 259).

<sup>194</sup> KUB XXVI 29,2 (Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 100).

<sup>195</sup> RGTC VI/2, S. 182 (Քոսյան Ա., Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեքստերում, էջ 259).

<sup>196</sup> Götze A., Die Annalen des Muršiliš, S. 98-99.

<sup>197</sup> Նույնանուն խեթական քաղաք է գոյություն ունեցել նաև Խաթթինում (Houwink ten Cate Ph. H. J., The Records of the Early Hittite Empire (C. 1450-1380 B.C.), Leiden, 1970, p. 68. RGTC, VI, S. 458. RGTC, VI/2, S. 179):

<sup>198</sup> ИЛР, 1981, № 52.

<sup>199</sup> Джаукян Г. Э. Хай-Який язык и его отношение к индоевропейским языкам в Ереване 1964, № 81.

<sup>200</sup> Манандян Я. О некоторых японских проблемах в географии древней Армении 1991.

<sup>201</sup> Խաչատրյան Վ., Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, էջ 43:

<sup>202</sup> Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 101:



է<sup>204</sup>: Ա. Քոսյանը մի շարք նկատառումներից ելնելով այս դժվարընթեռնելի քաղաքանունը առաջարկել է վերականգնել [<sup>URU</sup>.....-a]n-zé-na<sup>205</sup>:

Քաղկուսան հանդիսացել է Հայասա-Ազգիի պաշտամունքային կենտրոններից մեկը. այստեղ պաշտել են Ջազգա աստծուն (<sup>D</sup>Za-ag-ga-(-)[...] [<sup>URU</sup>]Qa?-ad-ku/ma-ša/ta?):

Քաղկուսա քաղաքի համար որևէ տեղադրություն առաջարկելու հնարավորություն չի տալիս քաղաքանվան եզակի հիշատակությունը և նյութի անբավարար լինելը:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### Հայասա-Ազգիի քաղաքական պատմությունը (մ.թ.ա. XIV-XIIIդդ.)

#### 2.1. Ռազմաքաղաքական փոխհարաբերությունները Հայասա-Ազգիի և Խաթթիի միջև (մ.թ.ա. XIV դար)

Մ.թ.ա. XIVդ. սկզբից Հայկական լեռնաշխարհի քաղաքական քարտեզի վրա ի հայտ է գալիս խեթական սկզբնաղբյուրներից հայտնի Հայասա-Ազգի պետությունը: Այդ ժամանակաշրջանի պատմությունը լուսաբանող խեթական տեքստերից է այսպես կոչված «Պախխուվացի Միտայի» տեքստը<sup>206</sup>: Այս վավերագրում տրվել է Հայկական լեռնաշխարհի քաղաքական միավորների հետ խեթական պետության կնքած ժամանակագրորեն ամենավաղ պայմանագիրը:

«Պախխուվացի Միտայի» տեքստը պատկանում է խեթական այն արձանագրությունների թվին, որոնք վերջին տասնամյակներին են ստացել իրենց ճշգրիտ թվագրումը: Այս տեքստը կազմվել է խեթական արքա Թուդխալիյասի և նրա որդի Արնուվանդասի կողմից, որոնք սովորաբար նույնացվել են մ.թ.ա. XIIIդ. երկրորդ կեսին իշխած Թուդխալիյաս IV-ի և նրա որդի Արնուվանդաս III-ի հետ: Մի շարք համոզիչ ապացույցների հիման վրա այժմ այս տեքստը վերաթվագրվել է մ.թ.ա. XIVդ. սկզբով՝ Արնուվանդաս I-ի կառավարման առաջին տարիներին<sup>207</sup>:

Ըստ «Պախխուվացի Միտայի» տեքստի՝ Հայկական լեռնաշխարհի Պախխուվա երկիրը երկար ժամանակ անհնազանդություն էր դրսևորել, և նրա ղեկավարները (Ուսապա, Միտա, Պիզգանա և այլն) ոչ միայն խախտել էին խեթական արքային տված լոյալության երդումը, այլև գրավել էին խեթական քաղաքներ: Խեթական արքան Պախխուվայից պահանջել էր իրեն

<sup>203</sup> Քոսյան Ա., Նոր տեղանուններ խեթական սեպագիր տեքստերում, էջ 254, 259:

<sup>204</sup> KUB XXVI 39 I 28 (Forrer E., ĩ ajasa-Azzi, S. 6).

<sup>205</sup> Քոսյան Ա., Հայասայի աստվածները (KUB XXVI 39), ՄՍԱԵԺ, 2005, XXIV, (գտնվում է տպագրության փուլում):

<sup>206</sup> KUB XXIII 72 (Sayce A., Hittite and Moscho-Hittite, RHA, 1930, № 1, f.1, p. 1-8. Gurney O., Mita of Pahhuwa, Annals of Archaeology and Anthropology (այսուհետև՝ AAA), 1948, № 28, p. 32-48. Hoffner H., A Join to the Hittite Mita-text, JCS, 1976, № 28, p. 60-62).

<sup>207</sup> Houwink ten Cate Ph. H. J., The Records of the Early Hittite Empire (C. 1450-1380 B.C.), Leiden, 1970, p. 63. Քոսյան Ա., խեթական պետությունը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ.թ.ա. XV դարում, ՊԲՀ, 2000,

հանձնել Միտային: Պախտուվան հնագանդեցնելու փորձերից հետո խեթական արքան մայրաքաղաք Խաթուսաս էր կանչել Հայկական լեռնաշխարհի երկրների ներկայացուցիչներին: Տեքստն իրենից ներկայացնում է խեթական արքայի վերջնագիրը Պախտուվայի ավագներին, ինչպես նաև պարունակում է արևելյան երկրների հետ կնքվող «կոլեկտիվ լոյալության պայմանագիրը»<sup>208</sup>:

«Պախտուվացի Միտայի» տեքստում Հայասա-Ազգին չի հիշատակվել, սակայն այստեղ հանդես են գալիս որոշ քաղաքներ, որոնք ավելի ուշ շրջանի խեթական աղբյուրներից հայտնի են որպես այդ երկրի բնակավայրեր՝ Դուզգաման, Պիտտիյարիզան և Արխիտան: Դուզգամացի Աիսսին պիտտիյարիզացի Արիխպիցցիի հետ միասին հանդես է գալիս որպես Պախտուվայի հետագա լոյալության երաշխավոր: Իսկ Արխիտան հանդիսացել է Պախտուվայի դաշնակիցն ընդդեմ Խաթթիի: Պախտուվայի հետ միացած՝ Արխիտան հարձակվել էր Կունմախայի բնակավայրերի վրա, իսկ խեթական զորքի հարձակման ընթացքում արխիտացիներն ապաստանել էին Պախտուվայում:

Արնուվանդաս I-ի հաջորդ Թուդիսալիյաս III-ի (մ.թ.ա. 1360-1344թթ.) կառավարման շրջանի վերաբերյալ սկզբնաղբյուրներում (որոնք գրի է առել նրա թոռը՝ Մուրսիլիս II-ը) հանդիպում են առաջին տեղեկությունները Խաթթիից արևելք՝ Հայկական լեռնաշխարհում կազմավորված Հայասա-Ազգի պետության մասին, որն անմիջապես ակտիվ ռազմա-քաղաքական հարաբերությունների մեջ է մտել Խաթթիի հետ:

Այսպիսով, Հայասա-Ազգի պետության կազմավորումը պետք է տեղի ունենար մ.թ.ա. XIV դ. սկզբներին՝ «Պախտուվացի Միտայի» տեքստի իրադարձություններից հետո ընկած ժամանակահատվածում՝ Արնուվանդաս I-ի և Թուդիսալիյաս III-ի կառավարման շրջանում<sup>209</sup>:

Խաթթիի հզորությունը և պետության միասնականությունը պահպանելու համար խեթական միապետներն անընդհատ պատերազմներ են վարել իրենց հարակից երկրների դեմ, որոնց շարքում էր նաև Հայասա-Ազգին: Այդ պատճառով էլ առաջին տեղեկությունները Հայասայի վերաբերյալ ունեն ռազմական հաղորդագրությունների բնույթ: Այսպես, Թուդիսալիյաս III-ի օրոք խեթերն արշավել են դեպի Հայասա-Ազգի, որի համար, ամենայն հավանականությամբ, պատճառ էր հանդիսացել այն, որ Հայասան ռազմական համագործակցության մեջ է եղել Խաթթիի վտանգավոր հյուսիսային թշնամիների՝ կասկերի հետ:

2. ma-aE-Ēa-a[n-m]a A-BU-YA i-y[a-...
3. nu nam-ma <sup>LÚ</sup>KÚR <sup>URU</sup>ı̄a-ya-ša I-N[A KUR ..... Ú-UL]
4. ú-e-mi-ya-zi nu A-BU-YA A-NA <sup>LÚ</sup>KÚR [<sup>URU</sup>ı̄a-ya-ša EGIR-an-da]
5. i-ya-at-ta-at na-an-ša-an nam-ma Ú-U[L ú-e-mi-ya-zi]

---

թիվ 3, էջ 161:  
<sup>208</sup> Houwink ten Cate Ph. H. J., նշվ. աշխ., էջ 65-66: Քոսյան Ա., Նոր նյութեր խեթական տեքստերի և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին, ՄՄԱԵԺ, 2001, XX, էջ 241:  
<sup>209</sup> Քոսյան Ա., նշվ. աշխ., էջ 242:

6. nu <sup>LÚ</sup>KÚR <sup>URU</sup>Ga-aš-ga pa-a-an-ku-un ÉRIN<sup>MEŠ</sup> ŠU-TI I-NA [ŠÀ. KUR<sup>TI</sup>]
7. IK-ŠU-UD nu-uš-ši DINGIR<sup>MEŠ</sup> kat-ta-an ti-i-e-er [<sup>D</sup>UTU <sup>URU</sup>PÚ-na]
8. <sup>D</sup>U <sup>URU</sup>ıa-at-ti <sup>D</sup>U KARASŠ <sup>D</sup>IŠTAR LÍL nu <sup>L</sup>[<sup>Ú</sup>KÚR]
9. pa-an-ga-ri-it BA.ÚŠ LÚ<sup>MEŠ</sup> ŠU.DIB-an-na me[-ek-ki-in IŠ-BAT]
10. na-an EGIR-pa I-NA <sup>URU</sup>Ša-mu-Ēa ú-wa-te[-et]<sup>210</sup>

2. Իսկ երբ հայրս զն[աց ...

3. և Յայասա երկրի թշնամուն [... երկրուն չ]

4. հանդիպեց և հայրս դեպի թշնամական Յայասա ետ

5. գնաց և նրան հետո չ[հանդիպեց],

6. իսկ թշնամի Կասկա երկրի բոլոր զորաջոկատներին [երկրներուն]

7. հպատակեցրեց և նրան աստվածներն օժանդակեցին՝ Արիննայի Արևի աստվածուհին,

8. Խաթթիի Ամպրոպի աստվածը, քանակի Ամպրոպի աստվածը, Դաշտի աստվածուհին: Եվ թշնամին

9. մեծ քանակությամբ սպանվեց, շատ գերիներ նա վերցրեց,

10. և նա ետ Սամուխա քաղաք վերադարձավ:

Այս արձանագրությունում նշվել է, որ հայասական զորքը հանդես է եկել իր երկրի տարածքից դուրս՝ փաստորեն նախահարձակ լինելով: Կասկա և Յայասա երկրների դեմ արշավանքը ղեկավարել է Թուդխալիյաս III-ի որդին՝ Սուպպիլուլիումասը, որը չհանդիպելով այդ երկրում (երկրի անունը բաց է թողնված) Յայասայի զորքին՝ այնտեղ հանդիպել է Կասկա երկրի զորքերին և հաղթել նրանց:

Խեթերը դեպի Կասկա և Յայասա երկրներ արշավելու համար որպես հենակետ օգտագործել են Վերին երկիրը<sup>211</sup> (Սամուխան հանդիսացել է Վերին երկրի կենտրոնը՝ Վերին Յալխսի ավազանում<sup>212</sup>), որտեղ նրանք նաև զորահավաք են անցկացրել և զորք են պահել այդ երկրների դեմ:

Ըստ Փոքր Ասիայի Մաշատ-հույուք բնակավայրից (խեթ. <sup>URU</sup>Tapigga) հայտնաբերված մի տեքստի, խեթական արքան Տապիգգայում գտնվող մի բարձրաստիճան պաշտոնյայի հանձնարարում է գնալ Վերին երկիր և զորք հավաքագրել Յայասա արշավանք կազմակերպելու համար, որպեսզի այդ երկիրը «կարգի բերվեր»:

1. [... ..] x x [... ..]

<sup>210</sup> BoTU 34=KUB XIX 11 (Güterbock H., The Deeds of Suppiluliuma as told by his Son, Mursili II, JCS, 1956, № 10, 2, p. 62-63).

<sup>211</sup> Վերին երկիրը (խեթ. KUR <sup>URU</sup>UGU<sup>TI</sup>) գտնվել է Խեթական տերության հյուսիս-արևելքում՝ Յալխսի վերին հոսանքներից մինչև Վերին Եփրատի մեծ ոլորանն ընկած տարածքում՝ հյուսիսում հասնելով մինչև Գալլ գետի ավազանը: Արևելքում այն սահմանակցել է Յայասա-Ազգիին (տես՝ RGTC, VI, S. 293-294):

<sup>212</sup> Garstang J., Gurney O., The Geography of the Hittite Empire, London, 1959, p. 36.

2. [.....]x x n[u] SI[GI<sub>5</sub>-i]n ŠEŠ<sup>m</sup>Ta-pa-li-ja
3. [pa-ra-a ne-e]E-Æu-un nu a-pé-e-da-ni KUR-e a-pa-a-aš
4. [.....] x ša-ra-a I-NA KUR.UGU i-it
5. [a-pé-e]d-[d]a-n[i] ud-da-ni-i EGIR-an ti-ya
6. [.....] x-ni ú-[w]a-ši nu-ut-ta ku-e ku-e wa-aš-túl x x [...]
7. [.....] x x KUR-[y]a-[a]z a[n]-da II-ŠU III-ŠU
8. [.....] p[e?]e? [...] x<sup>GIŠ</sup>TUKUL [K]UR-ya-az
9. [pa-ra-a pí-Æu-te-š]i
10. [.....] x [k]i-[i]t pa-an-d[a]-la-az-pát EGIR-an ti-ya
11. [.....] x x k[i-i]t pa-an-ta-la-za-pát
12. [... a-ša-a]n-du ú-wa-ši I-NA KUR<sup>URU</sup> i<sup>1</sup>a-a-ya-š[a]
13. [pa-a-i-ši] n[a-a]t-kán pé-e-di Ea-an-da-a-an-te-eš
14. [a-ša-an-du.....-a]t-ta ú-iz-zi EG[IR?] <sup>D</sup>UTU<sup>ŠI</sup>
15. [ti-ia-az-zi] [n]u-[z]a ú-wa-ši ERÍN<sup>MEŠ.i.LA</sup> ni-ni-in-ku-wa-an-z[i]
16. [pa-a-i-š]i
17. [ÉRÍN<sup>MEŠ</sup> KUR.KU]R<sup>MEŠ</sup> KUR.UGU<sup>TIM</sup> KUR<sup>URU</sup> Iš-Æu-pí-it-ta
18. [... KUR<sup>iUR.S</sup>]AGŠ Ša-ka[d]-du-nu-wa KUR<sup>URU</sup> Ša-na-Æu-it-t[a]
19. [.....]x KUR [U]<sup>RU</sup>Tu-u-pa-az-zi-ya
20. [KUR<sup>URU</sup> La-Æ]u-u-wa-za-an-ti-ya KUR<sup>URU</sup> I-šu-wa
21. [.....]x-ya [k]u-[i]t ku-it ŠA KUR.UGU<sup>TIM</sup>
22. [ÉRÍN<sup>MEŠ.i.LA</sup> N] na-aš Æu-u-ma-an-du-uš ni-ni-i[k]
23. [.....]x K[UR.K]UR<sup>i.LA</sup> wa-a-tar-na-aÆ im-ma
24. [.....]x u-wa-mi <sup>D</sup>UTU<sup>ŠI</sup> Ea-at-ra-a-mi
25. [...n]i?-ni?-i[k?]-zi QA-TAM-MA e-ep-ši
26. [.....]x na-[aš-t]a an-tu-uÆ-šu-uš
27. [.....p]a-r[a]-a ne-[eÆ-Æi]<sup>213</sup>

1. [.....] x x [.....]
2. [.....]x x Այ[ժմ] (ամեն ինչ) [ա[վ] է: Տապալիյայի եղբորը ես
3. [այնտեղ ուղարկեցի: Եվ այդ երկիրն
4. [.....] x դեպի Վերին երկիր գնա,
5. [այ]դ բանը նրանց առջև դիր:

<sup>213</sup> Alp S., Hethitische Briefe aus Maşat-Höyük, TTKY, № VI/34, 1991, S. 298-301. Քոսյան Ա., Նոր նյութեր խեթական տերության և Հայկական լեռնաշխարհի երկրների փոխհարաբերությունների մասին, էջ 234 - 235:

6. [.....] դու կ[զ]աս: Եվ ինչ էլ որ լինի, մեղքը քեզ x x [...
7. [.....] x x երկրում երկու անգամ, երեք անգամ
8. [.....] վերցնել? [...] x երկրից գենք
9. [կբերես]:
10. [.....] x այդ? պահից նորից օգնիր:
11. [.....] x x այդ? պահից
12. դու պիտի [...] լին]ես: Դու կգաս: Հայաս[ա] երկիր
13. [դու կգնաս]: Ե[վ դ]ու այդ վայրը կարգի
14. [կբերես: ...Եվ] դու կգաս (ու) Արևիս ետ(ևում)
15. [կկանգնես]: Եվ դու կգնաս՝ զորքերը հավաքելու
16. [կգնաս]:
17. [Ձորքերը երկր]ների՝ Վերին երկրի, Իսխուպիտտա քաղաքի երկրի,
18. Սակադդունուվա [լեռ]ան երկրի, Սանախուիտտա[ա] քաղաքի երկրի,
19. [.....]x, Տուպացցիյա քաղաքի երկրի,
20. [Լախ]ուվացանտիյա [քաղաքի երկրի], Իսուվա քաղաքի երկրի,
21. [.....]x և [ինչ] որ կան, Վերին երկրի
22. [զորաջոկատ]ները, բոլորը շարժման մեջ դ[իր]
23. [.....]x երկրների՝ հրամայիր այդպես
24. [.....]x ես կգամ: Ես՝ Արևս կգրեմ:
25. [...] նա շ[արժմ]ան[ի] մեջ կդնի: Դու պարզապես վերցրու:
26. [.....]x Եվ մարդիկ
27. [.....ես] կու[ղարկեմ]:

Տեքստը թվագրվել է KUB XXIII 72-ից հետո ընկած ժամանակաշրջանով, այսինքն՝ դեպքերը տեղի են ունեցել Թուդխալիյաս III-ի օրոք:

Այս արձանագրություններում չի նշվել Հայասայի թագավորի անունը, սակայն այս դեպքերից հետո խեթական աղբյուրներում հիշատակվել է Հայասայի արքա Կարաննին, որից առաջ՝ «Խուկկանայի պայմանագրում», հիշատակվել է հայասացի Մարիյան:

Ըստ Է. Ֆոռերի՝ Հայասայում Մարիյա անունով երկու անձնավորություն է գոյություն ունեցել: Առաջինը դեռևս Թուդխալիյաս III-ի օրոք հրավիրվել էր Խաթթիի մայրաքաղաք ու սպանվել, իսկ երկրորդը Խուկկանայի փեսան ու զորավարն է եղել<sup>214</sup>: Ի. Դյակոնովը գտնում է, որ Մարիյա անունը կրել են երկու անձնավորություններ՝ մեկը Հայասայի թագավորն է դարձել Թուդխալիյասի ժամանակ, իսկ մյուսին նա համարել է Խուկկանայի հետ զուգահեռ իշխող Ազգիի տիրակալ: Այնուհետև Մարիյան էր դարձել Հայասայի թագավոր, որին հաջորդել էր

<sup>214</sup> Forrer E., *İajasa-Azzi*, S. 3.

ԱՆՆիյան<sup>215</sup>: Ըստ Վ. Խաչատրյանի՝ Marija անունը հանդիսացել է Հայաստանի թագավորների տիտղոսը և Հայաստան-Ազգիի առաջին հզոր թագավորն է կրել այդ անունը<sup>216</sup>: Ընդ որում, Մարիյան Թուրքիայի III-ի ժամանակակիցն է եղել, իսկ նրանից հետո Կարաննին է հաստատվել գահին, այնուհետև՝ Խուկկանան<sup>217</sup>: Մարիյա անունը հանդիպում է նաև Մուրսիլիս II-ի օրոք՝ ԱՆՆիյա անվան հետ զուգահեռ<sup>218</sup>: Հավանաբար, այս հատվածը մասն է կազմել Մուրսիլիս II-ի՝ ԱՆՆիյայի հետ կնքած պայմանագրի, որում նա կան նորից հիշատակել է Թուրքիայի III-ի պալատում տեղի ունեցած դեպքը, կան էլ ԱՆՆիյայից բացի Հայաստանում իշխել է Մարիյա անվամբ մեկը, որին հարկ է համարել հիշատակել Մուրսիլիս II-ը:

Պայմանագիրը կնքվել է Սուպպիլուլիումաս I-ի և Հայաստանի արքա Խուկկանայի միջև: Պայմանագրի մի հատվածում տվյալներ կան այն մասին, որ դեռևս Թուրքիայի III-ի օրոք Խաթթիի մայրաքաղաք հրավիրված Մարիյան սպանվել էր արքայի պալատում: Դրա համար պատճառ էր հանդիսացել վերջինիս կողմից խեղճան արքունիքում ընդունված բարոյական չափանիշների խախտումը:

### III.

45. ŠA É.GAL<sup>LIM</sup> MUNUS ma-a-na-aš EL.LUM ma-a-na<-aš><sup>MUNUS</sup> SUĪUR.LÁ
46. nu-uš-ši ma-ni-in-ku-wa-an le-e ti-ya-ši nu-uš-ši ma-ni-i[n-ku-]wa-an
47. le-e pa-a-i-ši me-mi-ya-an-na-aš-ši le-e me-ma-at-ti
48. ÌR-KA-ya-aš-ši GÉME-KA ma-ni-in-ku-wa-an le-e pa-iz-[zi]
49. na-an-za-an me-ek-ki uš-ga-aĒ-Ēu-ut ŠA É.GAL<sup>LIM</sup> ku-wa[-pí MUNUS ú-iz-zi]
50. na-aš-ta KAS-az ar-Ēa me-ek-ki wa-at-ka-aĒ-Ēu-ut
51. nu-uš-ši KAS-an ar-Ēa tu-u-wa tar-na nu-za ki-i ŠA [É.G(AL<sup>LIM</sup>)]
52. [A-]WA-AT MUNUS me-ek-ki a-ru-ma uš-g[(a-aĒ-Ēu-ut)]
53. <sup>m</sup>Ma-ri-ya-aš ku-iš e-eš-ta na-aš ku-e-da-ni ud-d[a-ni-i še-er (BA.ÚŠ)]
54. Ú.UL<sup>MUNUS</sup> SUĪUR.LÁ i-ya-at-ta-at a-pa-a-ša-an-kán a[n-da a-uš-z]i
55. A-BI<sup>D</sup> UTU<sup>ŠI</sup>-ma-kán im-ma<sup>GIŠ</sup> AB-az ar-Ēa a-uš-z[i na-an-kán] IŠ.BAT
56. zi-ik-wa-kán a-pu-u-un an-da ku-wa-at a-u[(š-ta)]
57. na-aš a-pé-e-da-ni ud-da-ni-i še-er BA.ÚŠ nu [ku-e-da-ni ud-da-ni-y]a
58. še-er an-tu-uĒ-ša-aš Ēar-ak-ta nu-za zi-ik-ka [me-ek-ki uš-g(a-aĒ-Ēu-)]ut<sup>219</sup>

### III.

45. Պալատական կինը, եթե նա ազատ (ազնվագարն) է, եթե նա ստրկուհի է,

<sup>215</sup> Дьяконова И. В. Пределы территории армянского народа в Ереване в 968 и 991-92.

<sup>216</sup> Մարիյա անձնանունը նշվել է նաև Սաշատ-հուլյուքից գտնված նամակներից մեկում, որպես խեղճան մի պաշտոնյայի անուն (Alp S., Hethitische Briefe aus Maşat-Höyük, ТТКУ, 1991, № VI/34, S. 206-209):

<sup>217</sup> Хачатрян В. В. Марийаф титуляэайа Яякиэя царейи. Древний Восток 1988, я № 5, Яя 57-62. Նույնի, Հայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 48-49:

<sup>218</sup> Carruba O., Die Hajasa-Verträge Hattis, Documenta Asiae Minoris, Wiesbaden, 1988, S. 71-72.

46. և նրան մոտ չզնաս և նրա մոտ
47. չզնաս և ոչ մի խոսք չփոխանակես նրա հետ:
48. Լինի դա քո ստրուկը կամ ստրկուհին, չմոտենաս
49. և նրան շատ չնայես: Դեմք որ պալատական կինը գա՝
50. դու ճանապարհից դուրս արի,
51. և նրա ճանապարհից հեռու մնա: Իսկ այն պալատական կնոջ
52. գործը, որի պատճառով պետք է շատ զգույշ լինել,
53. Մարիյան, որ կար, նա այդ գործի պատճառով մահացավ,
54. Արդյո՞ք, նա չզնաց ստրկուհու մոտ, չէր նայել նրան:
55. Սակայն, հայրս՝ Արևը, այդ պահին պատուհանից դուրս էր նայել և նրան տեսել:
56. Ինչու՞ դու նայեցիր:
57. Եվ նա այդ բանի համար մահացավ և այդ գործի
58. պատճառով մարդը զոհվեց և դու պետք է շատ զգույշ լինես:

Այս դեպքը Սուպպիլուլիումաս I-ը, հավանաբար, հիշատակել է պայմանագրում որպես զոհուշացում՝ ցանկանալով հուսկկանային անխոհեմ քայլերից ետ պահել:

Խաթթին Թուդխալիյաս III-ի կառավարման ընթացքում հայտնվել էր ծանր կացության մեջ: Բոլոր կողմերից նրա կենտրոնական շրջանների վրա էին հարձակվել թշնամի ուժերը, ավերվել էր նույնիսկ մայրաքաղաք Խաթթուսաը<sup>220</sup>: Թուդխալիյաս III-ից մեծ ջանքեր են պահանջվել կորցրած տարածքները ետ գրավելու համար: Այդ պայքարում նրան օգնում էր որդին՝ արքայազն Սուպպիլուլիումասը: Խաթթիի հյուսիս-արևելքում թշնամի երկիր էր մնում Զայասա-Ազզին, որի զորքերն ավերելով Վերին երկրները, Սամուխա քաղաքը սահման էին դարձրել Զայասայի և Խաթթիի միջև<sup>221</sup>: Ջախջախելով կասկական ցեղերի ուժերը՝ Թուդխալիյաս III-ն արքայազն Սուպպիլուլիումասի հետ այնուհետև շարժվել է դեպի Զայասա: Կարաննի արքան իր զորքով դեմ է ելել խեթական ուժերին, և Կուլմախա քաղաքի տակ ճակատամարտ է տվել նրանց<sup>222</sup>: Զավանաբար, Վերին երկրներից ետ քաշված հայասական զորքը դեռևս իր ձեռքում է պահել Կուլմախա երկիրը, որը հետագայում նորից անցել է խեթական տիրապետության ներքո՝ գտնվելով մի կողմից Իսուվայի (հարավից), մյուս կողմից՝ Զայասայի միջև<sup>223</sup>: Ըստ ամենայնի՝ Կուլմախայի ճակատամարտն ավարտվել է հայասական զորքի պարտությամբ և Կուլմախայի նկատմամբ խեթական վերահսկողության հաստատմամբ:

Թուդխալիյաս III-ին հաջորդած Սուպպիլուլիումաս I-ի օրոք (մ.թ.ա. 1344-1322թթ.) սկսվեց Խաթթիի նոր վերելքը: Կարաննիից հետո խեթական աղբյուրները որպես Զայասայի թագավոր հիշատակել են հուսկկանային, որի հետ էլ խեթական արքան դաշնագիր էր կնքել:

<sup>219</sup> KBo V 3 (Friedrich J., Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, 2 T., 1930, S.126-129).

<sup>220</sup> KBo VI 28 (CTH 88).

<sup>221</sup> KBo VI 28 I 11-12 (Bryce T., The Boundaries of Hatti and Hittite Border Policy, Tel Aviv, 1986, № 13, p. 89).

<sup>222</sup> KUB XIX 11 IV 38-44 (Güterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, p. 66).

<sup>223</sup> Քոսյան Ա., Անի-Կամախը խեթական դարաշրջանում, ՊԲՀ, 2002, թիվ 3, էջ 237:

Ըստ Սուլպաիլուլիումասի տարեգրության<sup>224</sup> խեթական արքան Իսուվայից շարժվել է դեպի Ծուխապա երկիր, ավերել այն և մտել Հայասա՝ Լախա լեռների շրջանը և վերադարձել Իսուվա:

I.

18. ....] e-eš-ta A-BU-YA-ma-za
19. ....me-n]a-aĒ-Ēa-an-da kat-ta-wa-tar kat-ta
20. ....KUR U<sup>1</sup>RU<sup>2</sup>Zu-uĒ-Ēa-pa pa-it na-an ar-Ēa
21. ....-z]a a-ra-aĒ-za-an-da e-eš-ta
22. ....ar-Ēa wa-ar-nu]-ut URUZu-uĒ-Ēa-pa-an-ma-kán URU-an
23. [Ēu-u-ma-an-da-an ar-Ē]a wa-ar-nu-ut NAM.RA<sup>MEŠ</sup>-ma-kán
24. ....I-N]A<sup>URU</sup> i-a-ya-ša i-ya-at-ta-at
25. ....] x-at na-an IŠ-[T]U<sup>iUR.SAG</sup>La-Ēa-a
- 26.....]-ir<sup>225</sup>

I.

18. ....] կար: Եվ հայրս
19. ....ընդ]դեմ, վրեժխնդրության նպատակով
20. ....երկիր ք]աղաք Ծուխապա գնաց: Եվ նրա
21. ....] շուրջը ինչ կար
22. ....այրե]ց: Քաղաք Ծուխապան, քաղաքը
23. [ամբողջը այ]րեց և տարագիրները
24. ....] դեպի Հայասա գնացին
25. ....] x-at և նրանց Լախա լեռներից
- 26.....]-ir:

Փաստորեն, Սուլպաիլուլիումաս I-ին հաջողվել էր և՛ հարավից, և՛ արևմուտքից ընդհուպ մոտենալ Հայասայի տարածքներին և վտանգ ստեղծել նրա համար: Այսպիսի ծանր կացության մեջ, երբ երկիրը կանգնած է եղել խեթական ներխուժման վտանգի առաջ, հավանական է, որ տեղի է ունեցել գահակալի փոփոխություն, և իշխանության է եկել Խուկկանան, հավանաբար, ոչ առանց խեթական միջամտության<sup>226</sup>: Այս ամենից հետո խեթական արքան շտապել է օգտվել ընձեռնված հնարավորությունից և դաշինք է կնքել նոր գահակալի հետ, որպեսզի անվտանգ

<sup>224</sup> Այս տեքստերի գիտական ուսումնասիրությունը և համահավաք ներկայացումը տվել է Յ. Գյուտերբոկը (Güterbock H., The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, JCS, 1956, № 10, 2-4):

<sup>225</sup> KUB XXXIV 23 (Güterbock H., նշվ. աշխ., № 10, 3, էջ 83-84).

<sup>226</sup> Ն. Ադոնցը կարծել է, որ Մարիյայի մահը Հայասայում առաջ էր բերել խռովություններ և դրա հետևանքով խեթական արքան միջամտել էր, որպեսզի հեռացվի օրինավոր ժառանգը՝ հօգուտ Խուկկանայի, որը խռովությունների ժամանակ Խաթթիի կողմնակիցն է եղել (Ադոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 37):



դարձնի հայասական սահմանը:

Խուկկանան պարտավորվել էր բացի Սուպպիլուլիումաս I-ից, նրա ժառանգորդ որդուց կամ մյուս որդիներից և եղբայրներից, չճանաչել որևէ այլ մեկի, եթե նրանք իշխանության գլուխ կանգնեին Խաթթիում: Նա պետք է միայն օրինական ժառանգներին պաշտպաներ: Սուպպիլուլիումասը դրա փոխարեն խոստանում էր նույն ձևով վարվել Խուկկանայի, նրա որդու և ժառանգի հետ: Նրանց որդիները միմյանց հետ կապվելու էին միևնույն փոխադարձ պարտավորությամբ: Երկու կողմերն էլ հանձն էին առնում միմյանց ռազմական աջակցություն ցույց տալ թշնամիների դեմ: Նրանք պարտավոր էին նաև մեկը մյուսին նախազգուշացնել իրենց դեմ հայտնաբերված դավադրությունների մասին: Պայմանագրում Սուպպիլուլիումասը չի թաքցնում, որ Չայասան դեռ պահում է այն հողերը, որ գրավել էր Խաթթիից և որ Խուկկանայի երկրում կային նաև տարագիր խեթեր: Դաշնագրի մի կետը Խուկկանային պարտավորեցնում է տարագիրներին վերադարձնել և դուրս գալ գրավված խեթական մարզերից:

Խաթթիի արքան իր քրոջը կնության է տալիս Խուկկանային: Միևնույն ժամանակ Սուպպիլուլիումասը պահանջում է, որպեսզի Խուկկանան կին չառնի իր ազգակիցներից: Նպատակը թերևս մեկն էր՝ խեթուհին լինել նրա միակ կինը՝ ապահովելով խեթական ներկայությունը հայասական արքունիքում: Միևնույն ժամանակ Սուպպիլուլիումասը դրանով փորձում էր գահի ժառանգման հարցը լուծել հօգուտ իր քրոջ՝ Չայասա-Ազգիի առաջին տիկնոջ ապագա որդու<sup>227</sup>:

«Խուկկանայի պայմանագիրը» խեթա-հայասական հարաբերությունների ամենավառ դրսևորումներից մեկն է հանդիսացել: Պայմանագրում որպես գերակայող միտում հանդես է եկել միմյանց միջև հաստատված խաղաղությունը և օրինականությունը պահպանելու պայմանը, ինչն այդ պահին շատ կարևոր է եղել երկու երկրների համար: Դաշնագիրն արտացոլել է տվյալ ժամանակահատվածում միջազգային հարաբերություններում առկա մի շարք կարևոր դրույթներ՝ կապված տարածաշրջանում ուժերի դասավորվածության հետ:

Սուպպիլուլիումաս I-ը ցանկանում էր նաև Չայկական լեռնաշխարհի երկրները դիվանագիտական ճանապարհով կտրել Խաթթիի գլխավոր ախոյանից՝ Միտաննիից և ռազմական աջակցություն ստանալ այդ երկրներից: Դրան է միտված եղել խեթական արքայի պահանջը ճանաչել միայն իր իշխանությունը և զորքեր տրամադրել իրեն, եթե որևէ երկիր թշնամական գործողություններ ձեռնարկի ընդդեմ Խաթթիի<sup>228</sup>:

Գոյություն ունի մի գուշակային տեքստ, որի մեջ խեթական արքան (ամենայն հավանականությամբ Սուպպիլուլիումաս I-ը) գուշակային հարցում է անում, որի միջոցով փորձում է տեղեկանալ Ազգիի արքա Խուկկանայի ապագա լոյալության մասին իր և իր սերունդների հանդեպ<sup>229</sup>: Դրանից հետո խեթական արքան հարավում անցել է նվաճողական նոր գործողությունների ընդդեմ Միտաննիի և Եգիպտոսի: Սուպպիլուլիումաս I-ը նամակ է հղել Եգիպտական փարավոնին, որտեղ հիշատակել է իր կատարած նվաճումները նամակի

<sup>227</sup> Friedrich J., Staatsverträge des Hatti-Reiches in hethitischer Sprache, 2 T., S.124-129. Carruba O., Die Hajasaverträge Hattis, S. 59-75. CTH 42.

<sup>228</sup> Friedrich J., նշվ. աշխ., էջ 106-109, 116-117:

առաքմանը նախորդող շրջանում: Տեքստի վնասված ենթատեքստում պահպանվել են Հայասան և Ալզին<sup>230</sup>: Սակայն, խեթա-հայասական դաշինքը կարճ է տևել: Ավելի ուշ՝ Սուպպիլուլիումասի տարեգրության մեջ, Հայասան նորից հիշատակվել է որպես թշնամի երկիր<sup>231</sup>:

Հարևան երկրները սկսում են թշնամանալ խեթական տերության հետ դեռևս Սուպպիլուլիումաս I-ի կենդանության վերջին տարիներին, երբ համաճարակ էր տարածվել խաթթիում: Այնուհետև թշնամիների թիվը գնալով աճում է՝ պայմանավորված այդ արքայի և նրա հաջորդ գահակալի՝ Արնուվանդաս II-ի (մ.թ.ա. 1322-1321թթ.) մահով: Իսկ երբ խեթական գահը փոխանցվում է դեռահաս Սուրսիլիսին, քաղաքական իրավիճակը երկրում չի կարգավորվում<sup>232</sup>:

Խաթթիին թշնամացած երկրներն էին Կասկան, Միտաննին, Հայասան, Արծավան և այլն: Սուրսիլիս II-ը (մ.թ.ա. 1321-1295թթ.) իր տարեգրություններում հաղորդել է այն մասին, որ թշնամի երկրները, նրանց թվում նաև Հայասա-Ազգին, հարձակվել էին խեթական տարածքների վրա և ավերել դրանք: Հավանաբար, Հայասա-Ազգիի և Կասկայի միջև գոյություն է ունեցել դաշինք, քանզի այդ երկու երկրների ռազմական ընդհարումները խաթթիի հետ հաճախ ժամանակագրորեն համընկել են: Սուրսիլիս II-ին հաջողվում է պարտության մատնել Արծավա (Փոքր Ասիայի արևմուտքում) և Կասկա երկրներին: Կասկերի Տիբիյա երկրի արքա Պիխիտունիային պարտության մատնելուց հետո միայն Սուրսիլիս II-ն իր իշխանության յոթերորդ տարում ուշադրությունը կենտրոնացրել է Հայասա-Ազգիի վրա:

### III.

93. nam-ma-za ma-a~~Ē~~-~~Ē~~a-an KUR<sup>URU</sup>Ti-pí-ya tar-a~~Ē~~-~~Ē~~u-un nu A-NA<sup>m</sup>An-ni-ya LUGAL<sup>URU</sup>Azzi

94. LÚ *TE4-MA* u-i-ya-nu-un nu-uš-ši ~~Ē~~a-at-ra-a-nu-un ku-it-ma-an-wa A-BU-YA

95. I-NA KUR<sup>URU</sup>Mi-it-ta-an-ni e-eš-tu nu-wa-ták-kán ĪR<sup>MEŠ</sup>-YA ku-i-e-eš an-da ú-e-er

### IV.

1. [nu-wa-ra-aš-mu EGIR-pa pa-a-i.....]<sup>233</sup>

### III.

93. Այնուհետև, երբ Տիբիյա երկիրը նվաճեցի (հպատակեցրի), Աննիյայի՝ Ազգիի թագավորի մոտ

94. պատվիրակ (դեսպանորդ) ուղարկեցի, և նրան ես գրել էի. «Այն ժամանակ, երբ հայրս

95. Միտաննի երկրում էր, ծառաներս, որ քեզ մոտ եկան

### IV.

1. [իմձ ետ վերադարձրու.....]

Այսպիսով, արդեն Սուպպիլուլիումասի վերջին տարիներին խեթա-հայասական պայմանագիրը խախտվել էր հենց Աննիյայի կողմից, որը հրաժարվել էր իր նախորդի՝ Խուկկանայի կողմից հանձն առած պարտավորություններից ու հայասացիները զենք էին բարձրացրել խաթթիի դեմ և իրենց մոտ ընդունել խեթահպատակ փախստականներին:

<sup>229</sup> KUB XVIII 2 (CTH 579. Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, 2004, էջ 136-137).

<sup>230</sup> KUB XIX 20 (CTH 154. Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, էջ 137).

<sup>231</sup> Güterbock H., նշվ. աշխ., № 10, 4, էջ 113-114:

<sup>232</sup> Götze A., Die Annalen des Muršiliš, MVAG, 1933, № 38, S. 14-21.

III.

1. [.....] .... [.....]
2. [.....]-ta na-aš ú-it [nu I-NA KUR<sup>URU</sup> Da-an-ku-wa]
3. [i-ya-at-ta-at na-an GUL-a $\bar{E}$ -ta na-an IŠ[-TU NAM.RA<sup>MEŠ</sup>]
4. [GUD UDU ša-ra-a da-a-aš na-an-kán I-NA<sup>URU</sup> ĩa-ya-ša kat[-ta-an-da pe-e-da-]a-aš
5. [GIM-an-ma-at <sup>d</sup>UTU<sup>ŠI</sup> iš-ta-ma-aš-šu-un] nu-uš-ši  $\bar{E}$ a-at-ra-a-nu-un [....]
6. [.....] a-pí-ya-wa-mu-kán  $\acute{U}$ -UL ku[-it-ki .....-]jir LÚ<sup>MEŠ</sup> URU<sup>?</sup> Iš-te?-te?-na?-ya-wa-mu-kán UL ku-i-e-eš-ka [ x ]
7. [.....zi-ik-ma-wa] ú-it nu-wa I-NA KUR<sup>URU</sup> Da-[an-ku-wa]
8. [i-ya-at-ta-at-ti nu-wa-ra-an GUL-a] $\bar{E}$ -ta nu-wa-ra-an IŠ-TU [NAM.RA<sup>MEŠ</sup>]
9. GUD UDU ša-ra-a da-at-ta nu-wa-ra-an-kán] I-NA KUR<sup>URU</sup> ĩa-ya-ša kat[-ta-an-da pe-e-da-a-aš]
10. [EN KU](R<sup>URU</sup> Az)[-zi-ma-mu.....] ki-iš-ša-an EGIR-pa [ $\bar{E}$ a-at-ra-a-iš]
11. [ku-it-ma-wa-mu zi-ik] ( $\bar{E}$ a-at-re-eš)-ki-ši nu-wa-mu-kán ma-a-an [NAM.RA<sup>MEŠ</sup>]
12. [an-da ú-e-er] (an-da-ya ku-e-iš-ka? ú-w)[a-an-te-eš nu-wa-ra-aš pa-ra-a  $\acute{U}$ -UL]
13. [pi-ya-u-e-ni](ma-a-an-ma-wa ša-a)[n- $\bar{E}$ i](-eš-ki-ši-ya?)[.....]..[....am-mu-uk-ma]
14. (ki-iš-ša-an EGIR-pa  $\bar{E}$ a-a)t-ra-a-nu-un am-mu-uk-wa ú-wa-nu-[un nu-wa-ká](n)
15. (A-NA ZAG KUR-KA pí-ra-an) [tu]-uz-zi-ya-nu-un nu-wa KUR-KA  $\acute{U}$ -UL wa-al-a $\bar{E}$ - $\bar{E}$ u-un
16. [nu-wa-ra-at am-mu-uk IŠ-T]U NAM.RA GUD UDU  $\acute{U}$ -UL da-a $\bar{E}$ - $\bar{E}$ u-un
17. (nu-wa zi-ik) [A-NA <sup>d</sup>UTU<sup>ŠI</sup> šu-]ul-le-e-et nu-wa ú-it KUR<sup>URU</sup> Da-an-ku-wa
18. [GUL-a $\bar{E}$ -ta na-at dan-na-at-ta-a $\bar{E}$ -]ta nu DINGIR<sup>MEŠ</sup> am-m(e-e-da)-az ti-an-du
19. [nu-wa DI-eš-šar am-me-e-](da-az)  $\bar{E}$ a-an-na-an-du
20. [a-pa-a-aš-ma-mu ku-it i-da-a-la]-u-wa A-WA-TE<sup>MEŠ</sup> me-mi-iš-ki-u-an da-a-iš
21. [nu-uš-ši am-mu-uk ku-ru-](ri-ya)-a $\bar{E}$ - $\bar{E}$ u-un nu-uš-ši pa-a-un nu<sup>URU</sup> U-ra-aš ku-iš URU-aš
22. [ŠA KUR<sup>URU</sup>](A-az-zi  $\bar{E}$ a-an-te-ez-zi-iš) a-ú-ri-iš e-eš-ta na-aš-kán na-ak-ki-i pe-e-di
23. [a-ša](-an-za nu ku-iš ke-e TUP-PA<sup>iI.A</sup>) x x x-ya iš-ta-ma-aš-zi nu u-ya-ad-du
24. (nu a-ši<sup>URU</sup> U-ra-an URU-an) [a-uš-du ma-a $\bar{E}$ - $\bar{E}$ a-an-na-aš ú-]e-da-an-za e-eš-ta<sup>234</sup>

III.

1. [.....] .... [.....]
2. [.....]-ta և նա եկավ [և Դանկուվա երկիրը]
3. [զնաց և այն գր]ավեց: Եվ [զերիներ],
4. [[խոշոր և ճանր եղջերավոր անասուն վերցրեց և նրանց] Հայասա երկիր տա[րավ]
5. [երբ այդ մասին Արևս լսեցի], նրան գրեցի [....]

<sup>233</sup> KBo III 4=2Bo TU 48 (Götze A., նշվ. աշխ., S. 96-97).

<sup>234</sup> KUB XIV 17=2BoTU 56 (Götze A., նշվ. աշխ., S. 94-98).

6. [.....] այնուհետև ինձ ոչի[նչ .....]-ir: Եվ Իստիտինա? քաղաքի մարդիկ ով (էլ) որ չ[ x ]
7. [.....Բայց դու ] եկար և դեպի Դա[նկուվա] երկիր
8. [գնացիր և գր]ավեցիր և այնտեղից [գերիներ]
9. [խոշոր և մանր եղջերավոր անասուններ վերցրեցիր և] և Հայասա երկիր տա[րար]:
10. [Սակայն տերը (Ազ)[գի երկրի ինձ.....] ինչ պատասխան [գրեցիր]:
11. [Այն ինչ դու ինձ] (գրեց)իր: [Գերիները] ինձ հետ
12. [եկան] (և ով որ? եկ)[ավ, նրան չեմ]
13. [տա?]: (Բայց եթե հարձակվեցիր?)[.....]..[....Ես]
14. (նորից) ուղարկեցի նամակ: Եվ ես եկ[ա և]
15. (քո երկրի սահմանի մոտ) [բա]նակեցի, բայց քո երկրի վրա չհարձակվեցի:
16. [Եվ ես ] գերիներին, խոշոր և մանր եղջերավոր անասուն չվերցրեցի:
17. (Իսկ դու) [Արևիս բ]արկացրեցիր, եկար և Դանկուվա երկրի վրա
18. [հարձակվեցիր և այն ամայացրեցիր]: Եվ աստվածները թող ինձ հետ լինեն,
19. [թող դատեն և ին](ձ) առաջնորդեն:
20. [Նա ինձ թշնամակ]ան բառեր գրեց:
21. [Եվ ես բա](ր)կացա և գնացի դեպի նա: Եվ Ուրա քաղաքը, որն
22. (Ազգի) [երկրի] առաջին սահմանային ամրոցն է, այն մի գառիվայր (դժվարամատչելի) տեղում էր գտնվում:
23. (Եվ ով որ այս նամակները) x x x-ya լսի, թող գա
24. (և Ուրա քաղաքը) [տեսնի, երբ նա] կանգուն էր:

Սկզբնապես փորձելով հարցը խաղաղությամբ լուծել՝ Մուրսիլիս II-ը նամակներ է ուղարկել Հայասա-Ազգի՝ Աննիյայից պահանջելով ետ վերադարձնել դեռևս Սուպպիլուլիումասի ժամանակ Հայասայում ապաստանած խեթահպատակներին և Իստիտինա ու Դանկուվա (Վերին երկրներ) խեթական երկրներից վերցրած գերիներին: Աննիյայից մերժում ստանալով՝ Մուրսիլիս II-ը հարձակվում է Հայասա-Ազգիի սահմանային Ուրա քաղաքի վրա:

Սակայն, հետագայում խեթական արքան ստիպված է լինում կրկին արշավել դեպի Հայասա-Ազգի:

#### IV.

7. [..... LÚ<sup>MES</sup> URU ïa]-ya-ša-ma GIM-an
8. [..... iš-ta-ma-aš-ši-ir<sup>D</sup>UTU<sup>ŠI</sup>-wa ú-iz-zi
9. [nu-mu-kán LÚ TE4-MA me-na-aE-Ēa-a]n-da pa-ra-a ne-i-e-er
10. [nu-mu wa-tar-na-aE-Ēi-ir BE-]LÍ-NI-wa-kán ku[-it x]
11. [.....n]u-wa-ra-at na-aE[-šar-ri-ya-an-ta-at]

12. [...]-wa-kán [...]<sup>235</sup>

IV.

7. [...] Երբ Հայաստանի մարդիկ

8. [...] լսեցին, որ Արևը գալիս է,

9. [ինձ ընդառաջ պատվիրակ(դեսպանորդ) ուղարկեցին]:

10. [Եվ ինձ հաղորդեցին: Ինչու է մե]ր տերը

11. [...] վախեցան

12. [...]-wa-kán [...]

Ըստ «Մուրսիլիսի տարեգրության» ութերորդ տարվա իրադարձությունների՝ հայասացիները, լսելով Մուրսիլիսի արշավանքի պատրաստությունների մասին, նրա մոտ դեսպան են ուղարկում՝ համաձայնվելով կատարել Խաթթիի արքայի պահանջները: Մուրսիլիս II-ը առժամանակ հետաձգում է իր նախատեսած արշավանքը և զբաղվում Կունմանիի Խեպատ աստվածուհուն նվիրված տոնախմբություններով: Սակայն հաջորդ տարի Մուրսիլիսը նորից է հայասացիներից պահանջում վերադարձնել գերիներին, բայց մերժում է ստանուն Աննիայից: Նա ցանկանում էր գերիների փոխանակում կատարել. հրաժարվում էր վերադարձնել խեթական գերիներին, քանի դեռ չէր ստացել իր հպատակ տարագիրներին<sup>236</sup>: Դեռ ավելին, օգտվելով հարմար առիթից, որ Մուրսիլիս II-ը գտնվում էր Խաթթիի հարավում, Աննիան վերստին հարձակվում է Իստիտինա երկրի վրա և պաշարում Կաննուվարա խեթական քաղաքը: Խեթական մի բանակ Նուվանցա զորահրամանատարի գլխավորությամբ շտապ կարգով օգնության է հասնում Կաննուվարա քաղաքին: Հայասացիները, որոնք ռազմի դաշտ էին հանել 700 մարտակառք և 10.000 հետևազոր, Կաննուվարա քաղաքի տակ տեղի ունեցած ճակատամարտում պարտություն են կրում: Նույն տարվա վերջին Հայաստանի վրա կրկին արշավելու մտադրությամբ Մուրսիլիս II-ը Կարգամիսից շարժվում է դեպի Թեգարամա (գտնվում էր Կունմանիի [անտիկ Կոմմագենե] և Վերին երկրի միջև և տեղորոշվել է ներկայիս Գյուրյուն բնակավայրի տեղում<sup>237</sup>): Այստեղ, լսելով իր զորահրամանատարների խորհուրդը, նա առժամանակ հետաձգում է իր նախատեսած արշավանքը<sup>238</sup>:

Իր թագավորության հաջորդ՝ 10-րդ տարում, Մուրսիլիս II-ը սկսում է իր ռազմերը դեպի Հայասա-Ազգի:

III.

57. ma-a~~E~~-~~E~~a-an-ma ~~E~~a-me-eš-~~E~~a-an-za ki-ša-at nu I-NA KUR<sup>URU</sup> Az-zi

58. da-a-an KAS-ši nam-ma pa-a-un nu-za I-NA<sup>URU</sup> In-ga-la-wa

59. A-NA ÉRIN<sup>MEŠ</sup> ANŠU.KUR.RA<sup>iLA</sup> ú-wa-a-tar i-ya-nu-un LÚ<sup>MEŠ URU</sup> Az-zi-ma

60. <sup>d</sup>UTU<sup>ŠI</sup> ku-it ka-ru-ú ~~E~~u-ul-li-iš-ki-nu-un

<sup>235</sup> 2BoTU 56 (Götze A., նշվ. աշխ., S. 102-103).  
<sup>236</sup> Götze A., նշվ. աշխ., էջ 102-107:  
<sup>237</sup> Garstang J., Gurney O., The Geography of the Hittite Empire, p. 47.  
<sup>238</sup> Götze A., նշվ. աշխ., էջ 115-127:

61. <sup>m</sup>Nu-u-wa-an-za-ša-aš GAL.GEŠTIN ŠA-PAL <sup>URU</sup>Kán-nu-wa-ra Æu-u[l-li-iš-ki-i]t
62. nu-mu-za nam-ma UD.KAM<sup>iLA</sup> za-aÆ-Æi-ya-u-wa-an-zi Ú-UL [ku-wa-at-ka]
63. Æa-an-da-al-li-i-e-er nu-mu-za-kán MÚ.KAM-za wa-al-Æu[-u-wa-an-zi]
64. zi-ik-ki-ir MÚ.KAM-za-wa-aš[-ši-kán] an-da [Æa-at-ke-eš-nu-um-me-ni]
65. ma-aÆ-Æa-an-ma <sup>D</sup>UTU<sup>ŠI</sup> [me-mi-a]n iš-[ta-ma-aš-šu-un]
66. LÚ<sup>MEŠ URU</sup>Az-zi-wa[-ták-kán] MÚ.KAM-za ŠA(G) K[ARAŠ<sup>iIA</sup>]
67. GUL- aÆ-Æu-u-wa-an-z[i] zi-ik-kán-zi [ x ]
68. nu-za <sup>d</sup>UTU<sup>ŠI</sup> KARAŠ<sup>iIA</sup> iš-Æi-ú-ul-la-aÆ-Æu-un [KARAŠ<sup>iIA</sup>]
69. ma-aÆ-Æa-an UD.KAM-ti pu-tal-li-ya-an-da i-ya-at-ta-[ri]
70. MÚ.KAM-az-ma-at-kán še-e-na-aÆ-aš QA-TAM-MA e-eš-zi
71. nu ma-aÆ-Æa-an LÚ<sup>MEŠ URU</sup>Az-zi e-ni-iš-ša-an pa-aÆ-ša[-nu-wa-an.....]
72. a-ú-e-er nu nam-ma (.....)<sup>239</sup>

III.

57. Հենց որ գարունը բացվեց, դեպի Ազգի երկիր
58. երկրորդ անգամ ճանապարհ ընկա և Ինգալավա քաղաքում
59. հետիոտն զորքերի և մարտակառքերի զորատես անցակացրեցի: Բայց Ազգիի մարդիկ
60. Արևիս դեմ արդեն կռվել էին,
61. Խուվանցան մեծ մառնապետը Կաննուվարա քաղաքի մոտ հաղթել էր]:
62. Եվ ինձ հետ այնուհետև ցերեկով կռվել [բոլորովին]
63. չհամարձակվեցին և ինձ գիշերը հարվածել]
64. որոշեցին: Գիշերը [մրանց] կ[ճնշենք]
65. Իսկ երբ Արևս [այդ լուր]ը [լսեցի],
66. Ազգիի մարդիկ գիշերով զ[որքերի] կենտրոնին
67. էին նախատեսում հարվածել [ x ]:
68. Եվ Արևս զորքերը միավորեցի: [Զորքերը]
69. գիշերը ցերեկվա նման մարտական վիճակով գնացին:
70. Գիշերն այդ կերպ դարանում մնացին:
71. Եվ, երբ Ազգիի մարդիկ այդ պաշտպանությունը.....]
72. տեսան, այնուհետև (.....)

IV.

4. nu I-NA <sup>URU</sup>A-ri-ip-ša-a an-da[-an za-aÆ-Æi-ya i-ya-an-ni-ya-nu-un]
5. a-ši-ma-kán <sup>URU</sup>A-ri-ip-ša-aš Š[À A.A]B.BA ki-it-ta-ri

<sup>239</sup> KBo IV 4=2BoTU 58(Götze A., նշվ. աշխ., էջ 130-132).

6. nam-ma-aš-ši URU-ri-a-še-eš-šar ku-it na-aš ïUR.SAG<sup>NÀ</sup>pe-e-ru-nu[-uš Æar-kir]
7. nam-ma-at me-ek-ki pár-ku nu-kán KUR-e ku-it Æu-u-ma-an ša-ra-a pa-a[-an]
8. e-eš-ta na-an ÉRIN<sup>MEŠ</sup>pa-an-ku-uš Æar-ta na-an<sup>D</sup>UTU<sup>ŠI</sup>za-aÆ-Æi-ya-nu-u[n]
9. nu-mu<sup>D</sup>U NIR.GÁL BE-LÍ-YA<sup>D</sup>UTU<sup>URU</sup>A-ri-in-na GAŠAN-YA<sup>D</sup>U<sup>URU</sup>ïa-at-ti
10. <sup>D</sup>LAMMA<sup>URU</sup>ïa-at-ti<sup>D</sup>U KARAŠ<sup>D</sup>IŠTAR LÍL DINGIR<sup>MEŠ</sup>-ya Æu-u-ma-an-te-eš
11. pi-ra-an Æu-u-i-e-er ŠA 1-EN GAL-ya Ú-UL pa-it
12. [nu-]kán<sup>URU</sup>A-ri-ip-ša-a-an za-aÆ-Æi-ya-az kat-ta da-aÆ-Æu-un
13. [n]a-an<sup>URU</sup>ïa-at-tu-ši Æu-u-ma-an-ti-i ša-a-ru-ù-i ma-ni-ya-aÆ-Æu-un
14. [nu]-za ÉRIN<sup>MEŠ</sup> ANŠU.KUR.RA<sup>ïïIA</sup> ŠA BI-IR-TI IŠ-TU NAM.RA<sup>ïïIA</sup> GUD UDU-ya
15. [me]-ek-ki ú-e-mi-ya-at nu<sup>D</sup>UTU<sup>ŠI</sup>a-pe-e-da-ni-pát UD-ti
16. [A-]NA<sup>URU</sup>A-ri-ip-ša-a-pit še-e-šu-un
17. lu-uk-kat-ta-ma I-NA<sup>URU</sup>Du-uk-ka-am-ma an-da-an za-aÆ-Æi-ya i-ya-an-ni-ya-nu-un
18. ma-aÆ-Æa-an-ma-mu-kán LÚ<sup>MEŠ</sup>URU<sup>URU</sup>Du-uk-ka-am-ma me-na-aÆ-Æa<-an>-da a-ú-e-ir
19. na-at-mu me-na-aÆ-Æa-an-da ú-e-ir na-at-mu GÌR<sup>MEŠ</sup>-aš kat-ta-an
20. Æa-a-li-i-e-er nu-mu me-mi-ir BE-LÍ-NI-wa-an-na-aš ŠA<sup>URU</sup>A-ri-ip-ša-a
21. i-wa-ar<sup>URU</sup>ïa-at-tu-ši ša-a-ru-u-wa-an-zi le-e ma-ni-ya-aÆ-ti
22. nu-wa-an-na-aš BE-LÍ-NI an-da a-ra-an-da ar-nu-ut nu-wa-an-na-aš<sup>URU</sup>ïa-at<tu>-ši
23. ar-Æa pe-e-Æu-te nu-wa-an-na-aš-za ÉRIN<sup>MEŠ</sup> ANŠU.KUR.RA<sup>ïïIA</sup> i-ya nu nam-ma<sup>D</sup>UTU<sup>ŠI</sup>
24. <sup>URU</sup>Du-uk-ka-ma-an URU-an [ša-]a-ru-u-wa-an-zi Ú-UL tar-na-aÆ-Æu-un
25. na-an-kán IŠ-TU NAM.RA x x-Æ-Æu-un NAM.RA<sup>URU</sup>Du-uk-kà-ma
26. 3 LI-IM NAM.RA I-NA É[LUGAL] ku-in ú-wa-te-nu-un
27. na-an-za-an ÉRIN<sup>MEŠ</sup> ANŠU.KUR.R[A<sup>ïïIA</sup>] i-ya-nu-un
28. ma-aÆ-Æa-an-ma LÚ<sup>MEŠ</sup>URU<sup>URU</sup>Az-zi a-ú-e-er URU.DIDLI<sup>ïïIA</sup> BÀD-kán ku-it za-aÆ-Æi-ya-az
29. kat-ta da-aš-ki-u-wa-an te-eÆ-Æu-un nu LÚ<sup>MEŠ</sup>URU<sup>URU</sup>Az-zi ku-i-e-eš
30. URU.DIDLI<sup>ïïIA</sup> BÀD<sup>NÀ</sup>pe-e-ru-nu-uš ïUR.SAG<sup>MEŠ</sup>-uš pár-ga-u-e-eš na-ak-ki-i
31. AŠ-RI<sup>ïïIA</sup> EGIR-pa Æar-kir na-at na-aÆ-ša-ri-ya-an-da-ti nu-mu LÚ<sup>MEŠ</sup> ŠU.GI KUR<sup>TI</sup>
32. me-na-aÆ-Æa-an-da ú-e-er na-at-mu GIR<sup>MEŠ</sup>-aš kat-ta-an Æa-a-li-i-e-er
33. nu-mu me-mi-ir BE-LÍ-NI-wa-an-na-aš le-e ku-it-ki Æar-ni-ik-ti
34. nu-wa-an-na-aš-za BE-LÍ-NI ÌR-an-ni da-a nu-wa A-NA BE-LÍ<-NI> ÉRIN<sup>MEŠ</sup>  
ANŠU.KUR.RA<sup>ïïIA</sup>
35. pe-eš-ki-u-wa-an ti-i-ya-u-e-ni [NAM.R]A<sup>URU</sup>ïa-at-ti-ya-wa-an-na-aš-kán ku-iš
36. an-da nu-wa-ra-an pa-ra-a pi-i-y[a-u-]e-ni na-aš nam-ma<sup>D</sup>UTU<sup>ŠI</sup> Ú-UL
37. Æar-ni-in-ku-un na-aš-za ÌR-an-ni da-aÆ-Æu-un na-aš-za ÌR-aÆ-Æu-un

38. nu-mu MU.KAM-za ku-it še-ir te-e-pa-u-e-eš-ša-an-za e-eš-ta nu nam-ma
39. KUR<sup>URU</sup> Az-zi Ú-UL da-ni-nu-nu-un nu LÚ<sup>MEŠ URU</sup> Az-zi li-in-ga-nu-nu-un
40. nam-ma<sup>URU</sup> ı̄a-at-tu-ši ú-wa-nu-un nu<sup>URU</sup> ı̄a-at-tu-ši
41. gi-im-ma-an-da-ri<-ya>-nu-un ....<sup>240</sup>

IV.

4. Եվ Արիպասա քաղաքը գրավելու համար շարժվեցի]:
5. Այդ Արիպասա քաղաքը ծ[ովի մե]ջ էր գտնվում:
6. Նրա բնակչությունը հեռացել էր, և զբաղեցրել էր ժայռոտ լեռը,
7. հեռվից այն շատ բարձր էր երևում: Եվ ողջ երկիրը վեր էր բարձրացել:
8. Եվ այն զորքերը ամբողջովին ավերեցին: Եվ նրան Արևս հարվածեցի:
9. Եվ ինձ՝ Ամարոպի հզոր աստվածը՝ իմ տերը, Արիննայի Արևի աստվածուհին՝ իմ տիրուհին, Խաթթիի Ամարոպի աստվածը,
10. Խաթթիի Հովանավոր աստվածը, Բանակի Ամարոպի աստվածը, Դաշտի Իշտար աստվածուհին, բոլոր աստվածները
11. առաջնորդում էին և ինձ հետ էին և ինձ չլքեցին:
12. Եվ Արիպասա քաղաքին հարվածեցի, նվաճեցի
13. և Խաթթուսաս քաղաք ամբողջ ավարը ուղարկեցի:
14. Եվ զինվորները, կառամարտիկները ամրոցում գերիներ, խոշոր և մանր եղջերավոր անասուն
15. շատ գտան: Եվ ես՝ Արևս այդ օրը
16. Արիպասայում գիշերեցի:
17. Հաջորդ օրը դեպի Դուգգամա քաղաք արշավեցի՝ այն նվաճելու համար:
18. Երբ Դուգգամա քաղաքի մարդիկ ինձ տեսան իրենց առջև,
19. Նրանք ինձ ընդառաջ եկան, և իմ ոտքերի առջև
20. ծունկի եկան և ինձ ասեցին՝ մեր տե՛ր, մեզ Արիպասա քաղաքի
21. նման Խաթթուսաս քաղաքի համար ավարի չմատնես:
22. Մեզ, մեր տե՛ր, ամբողջովին մի ավարառի, այլևս մեզ Խաթթուսաս քաղաքի համար
23. մի՛ տար: Մեզ՝ որպես զինվորներ, կառամարտիկներ՝ ր վերցրու: Այնուհետև Արևս
24. Դուգգաման՝ այդ քաղաքն չավերեցի:
25. Եվ նրանցից գերիներ x x-~~Æ~~-~~Æ~~u-un, գերիներ Դուգգամայից
26. 3000 գերի թագավորական պալատ բերեցի:
27. Եվ նրանց զինվորներ և կառամարտիկներ դարձրեցի:
28. Երբ Ազգիի մարդիկ տեսան, որ իրենց ամրացված քաղաքները ինչպես են
29. նվաճում, Ազգի երկրի մարդիկ, որոնք
30. ամրոցներում և լեռների բարձր և դժվարամատչ
31. վայրերում էին ապաստանել, նրանք վախեցան: Եվ երկրի ավագներն ինձ



32. ընդառաջ եկան: Եվ ոտքերիս առջև ծունկի եկան:
33. Եվ ինձ ասացին՝ մեր տե՛ր, մեզ մի՛ ոչնչացրու,
34. այլևս մեզ, մեր տե՛ր, ծառայությա՛ն վերցրու և մեր տիրոջը զինվորներ, կառամարտիկներ
35. կուղարկենք: Խաթթիի գերիներին, որ մեզ մոտ են,
36. նրանց կուղարկենք: Եվ թող այնուհետև Արևը
37. չոչնչացնի, այլ ծառայության վերցնի:
38. Եվ քանի որ տարին վերջանում էր՝
39. Ազգի երկիրը չամրացրեցի և Ազգիի մարդկանց երդման տակ դրեցի:
40. Այնուհետև Խաթթուսաս քաղաք եկա: Եվ Խաթթուսասում
41. ձմեռեցի:

Ինգալավա քաղաքում զորատես անցկացնելուց հետո խեթական արքան արշավում է դեպի Չայասա-Ազգի: Չայասայի զորքը որոշել էր ցերեկը ճակատամարտ չտալ ու պատրաստվում էր գիշերը հանկարծակիի բերել խեթերին: Իրագեկ լինելով դրան՝ Սուրսիլիս II-ը հրամայում է իր բանակին կազմ ու պատրաստ լինել գիշերային հարձակումներին: Խեթերը, ներխուժելով Չայասայի տարածքը, պաշարում և գրավում են «ծովի մեջ գտնվող» Արիպսա քաղաքը, որի բնակիչները հեռացել էին մոտակա լեռները: Արիպսան ավարի մատնելուց հետո Սուրսիլիս II-ը հպատակեցնում է նաև Դուգգամա հայասական քաղաքը, որի բնակիչները դիմադրություն ցույց չեն տալիս: Խեթական արքան քաղաքը չի ավերում, միայն 3000 դուգգամացիների՝ որպես զինվորների, տանում է Խաթթի:

Այսպիսով, Խաթթիի արքան իր գահակալման 10-րդ տարին անցկացրել է՝ արշավելով դեպի Չայասա՝ արշավանքը սկսելով գարնանը (խեթ. *ÆamešÆant*-«գարուն») և ավարտելով ձմեռնամուտին (խեթ. *gimmant*-«ձմեռ»): Ժամանակային առումով արշավանքը բավականին ձգձգվել էր՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ խեթական բանակը գրավել էր ընդամենը երկու հայասական քաղաք, որից մեկն անձնատուր էր եղել: Առավել ևս, որ մինչև Արիպսա հասնելը որևէ ռազմական բախում տեղի չէր ունեցել խեթերի և հայասացիների միջև: Ամենայն հավանականությամբ, Սուրսիլիսը, Բարձր Չայքի տարածք ներխուժելով, այդ ժամանակահատվածում Տուրուբերանի տարածքով հասել էր մինչև Վանա լճի ափերը, որտեղ և գտնվել էր Արիպսան:

Իր գահակալության 11-րդ տարում Սուրսիլիս II-ը, նպատակ ունենալով վերջնականապես հպատակեցնել Չայասա-Ազգին, կրկին արշավանքի է ելնում:

#### IV.

42. ma-a~~Æ~~-~~Æ~~a-an-ma ~~Æ~~a-me-eš-~~Æ~~a-an-za ki-ša-at ma-an *I-NA KUR*<sup>URU</sup> Az-zi ta-ni-nu-ma-an-zi
43. pa-a-un ma-a~~Æ~~-~~Æ~~a-an-ma LÚ<sup>MEŠ URU</sup> Az-zi iš-ta-ma-aš-šir<sup>D</sup>UTU<sup>ŠI</sup>-wa ú-iz-zi

<sup>240</sup> KBo IV 4=2BoTU 58 (Götze A., նշվ. աշխ., էջ 132-138).

44. nu LÚ<sup>MEŠ URU</sup> Az-zi <sup>m</sup>Mu-ut-ti-in LÚ<sup>URU</sup> ïa-li-ma-na-a me-na-a~~Æ~~-~~Æ~~a-an-da
45. [u-]i-e-er nu-mu ki-iš-ša-an wa-a[-tar-]na-a~~Æ~~-~~Æ~~i-ir *BE-LÍ<NI>*-wa-an-na-aš ka-ru-ú
46. [ku-]it ~~Æ~~ar-ni-ik-ta nu-wa *BE-LÍ-NI* li-e nam-ma ú-wa-ši nu-wa-an-na-aš-za *BE-LÍ-NI*
47. [ÌR-a]n-ni da-a nu-wa *A-NA BE-LÍ-NI ÉRIN*<sup>MEŠ</sup> ANŠU.KUR.RA<sup>MEŠ</sup> pe-eš-ki-u-wa-an ti-ya-u-e-ni
48. [NAM.R]A<sup>URU</sup> ïa-at-ti-ya-wa-an-na-aš-kán ku-iš an-da nu-wa-ra-an pa-ra-a pi-i-ya-u-e-ni
49. [nu-mu NA]M.RA<sup>URU</sup> ïa-at-ti 1 *LI[-IM]* NAM.RA EGIR-pa pi-i-e-er
50. [nu-m]u e-ni-iš-ša-an ku-it [<sup>m</sup>Mu-]ut-ti-in LÚ<sup>URU</sup> ïa-li-ma-na-a
51. [me-]na-a~~Æ~~-~~Æ~~a-an-da u-i-e-er [NAM.RA]<sup>URU</sup> ïa-at-ti-ya-mu EGIR-pa pí-i-e-er
52. nu nam-ma <sup>D</sup>UTU<sup>ŠI</sup> *I-NA* KUR <sup>U</sup>[<sup>RU</sup> Az-z]i *Ú-UL* pa-a-un na-aš-za ÌR-an-ni
53. da-a~~Æ~~-~~Æ~~u-un na-aš-za ÌR-a~~Æ~~-~~Æ~~u[-un] nu nam-ma <sup>D</sup>UTU<sup>ŠI</sup> a-pé-e-da-ni MU.KAM-ti
54. gi-im-ri *Ú-UL* ku-wa-pí-ik-ki pa-a-un nu *I-NA*<sup>URU</sup> A-an-ku-wa an-da-an
55. ú-wa-nu-un nu *I-NA*<sup>URU</sup> A-an-ku-wa gi-im-ma-an-ta-ri-ya-nu-un<sup>241</sup>

#### IV.

42. Երբ գարունը բացվեց, Ազգի երկիրը կարգավորելու համար
43. գնացի: Երբ Ազգի երկրի մարդիկ լսեցին, որ Արևը գալիս է,
44. Ազգիի մարդիկ Մուստիին՝ Խալիմանա քաղաքի մարդուն ընդառաջ
45. ուղարկեցին: Եվ ինձ այսպես դիմեց. մեր տե՛ր, մեզ արդեն
46. հարվածել ես: Մեր տե՛ր, նորից մեզ մոտ մի՛ արի, այլ մեր տե՛ր, մեզ
47. [ծառայությ]ա՛ն վերցրու: Մեր տիրոջը զինվորներ և կառամարտիկներ կուղարկենք:
48. Խաթթիի գերիները, որ մեզ մոտ են, նրանց կուղարկենք:
49. [Եվ ինձ] Խաթթի երկրի 1000 գերի վերադարձրեցին:
50. [Եվ ինձ] քանի որ [Մու]տտին՝ Խալիմանա քաղաքի մարդը
51. [ընդ]առաջ եկավ և [գերիների]ն Խաթթի երկրի վերադարձրեց,
52. Թող Արևը [Ազգ]ի չգնա: Եվ թող մեզ ծառայության
53. վերցնի և մեզ ծառայեցնի: Այնուհետև, Արևս, քանի որ
54. ձմեռնամուտ էր, ոչ մի տեղ չգնացի: Դեպի Անկուվա քաղաք
55. գնացի և Անկուվայում ձմեռեցի:

Հայասայի իշխանավորները, տեղի տալով գերազանցող ռազմական ուժին, ստիպված բանակցություններ են սկսում Խաթթի արքայի հետ: Հայասական կողմը պարտավորվում է զորք տրամադրել խեթական բանակին, ինչպես նաև ետ վերադարձնել դեռևս իր մոտ պահվող խեթական գերիներին: Այսպիսով, հայասացիները վերականգնում են դեռևս Խուկկանայի օրոք

<sup>241</sup> KBo IV 4=2BoTU 58 (Götze A., նշվ. աշխ., էջ 138-139).

պայմանագրով ստանձնած պարտավորությունների մի մասը:

Այս դեպքը և մինչև այդ «Խուկկանայի պայմանագրում» հիշատակված Յայասայի մարդկանց (ավագներ կամ աշխարհաժողով) որպես դաշինքի մասնակից կողմ հիշատակելը խոսում է այն մասին, որ Յայասա-Ազգիի թագավորի իշխանությունը իր ցեղակիցների վրա բացարձակ չի եղել: Յավանաբար այն մոտ է եղել «Կյուրոպեդիայում» Քսենոփոնի հիշատակած հայոց թագավորի իշխանությանը, որը ինչպես և հոմերոսյան Յունաստանում սահմանափակվել է ավագների խորհրդով՝ բուլեյով (βουλή) և ժողովրդական ժողովով՝ էկլեսիայով (ἐκκλησία)<sup>242</sup>:

Մուրսիլիս II-ը վերադառնում է Խաթթի այն բանից հետո, երբ հայասական իշխանավորները նրան հավատարմության երդում են տալիս և վերադարձնում են 1000 խեթական տարագիրների<sup>243</sup>:

Մուրսիլիս II-ին հաջողվում է մի որոշ ժամանակով Խաթթիի հյուսիս-արևելքում չեզոքացնել հայասական վտանգը: Սակայն խեթերին այդպես էլ չի հաջողվել նվաճել Յայասա-Ազգին: Նրանք բավարարվել են միայն իրենց գերիներին վերադարձնելով և ռազմական օգնություն ստանալով, սակայն որևէ խոսք չկա այն մասին, որ Յայասան հարկ է վճարել Խաթթիին՝ որպես պարտված երկիր:

Մուրսիլիսի կառավարման հաջորդ տարիներին խեթական վավերագրերում տեղեկություններ չկան Յայասա-Ազգիի վերաբերյալ: Յավանաբար, Խաթթին և Յայասա-Ազգին այդ ընթացքում խաղաղ գոյակցության շրջան են ապրել, և երկու երկրների միջև որևէ ռազմական ընդհարում տեղի չի ունեցել:

## 2. 2. Խեթա-հայասական հարաբերությունները մ.թ.ա. XIII դարում

Մ.թ.ա. XIIIդ. Յայասա-Ազգիի պատմության լուսաբանումը սերտորեն առնչվում է այդ ժամանակաշրջանի Մերձավոր Արևելքի քաղաքական կյանքում տեղի ունեցած կարևոր իրադարձությունների հետ:

Դեռ մ.թ.ա. XIVդ. կեսերից երկու գերտերությունների՝ Խաթթիի և Եգիպտոսի միջև հաստատվել էր անկայուն հավասարակշռություն այն բանից հետո, երբ Սուլպիլիուլիումաս I-ը գրավեց Միտաննին, և Յյուսիսային Սիրիայի տարածքում ստեղծվեց խեթերից կախյալ Կարգամիսի թագավորությունը: Մ.թ.ա. XIIIդ. առաջին քառորդում խեթա-եգիպտական հակամարտությունը հասնում է իր բարձրակետին (մ.թ.ա. 1274թ. Քադեշի ճակատամարտը), որից հետո այն սկսում է աստիճանաբար տեղի տալ և ավարտվում է մ.թ.ա. 1258թ. Խաթթուսիլիս III-ի և Ռամզես II-ի միջև կնքված խաղաղության պայմանագրով: Դաշնագիրը վավերացնում է Քադեշից հետո ստեղծված իրավիճակը Սիրիայում: Այն ժամանակ, երբ խեթերն ու եգիպտացիները պայքարում էին սիրիական քաղաքների (Քադեշ, Յամատ, Ուգարիթ, Էբլա,

<sup>242</sup>Կրկյաշարյան Ս., Յին Յայաստանի պետական կառուցվածքը (մ.թ.ա. VI-մ.թ. IVդդ.), Երևան, 2005, էջ 96:

<sup>243</sup> KBo IV 4=2BoTU 58 (Götze A., նշվ. աշխ., էջ 139-141):

Խալպա, Ալալախ) վրա իրենց վերահսկողության հաստատման համար, Միտաննի գերիշխանությունից ազատագրված Ասորեստանը, արևմտափոքրասիական երկրները (Միլլավանդա, Լուկկա, Սեխա) և Ախիյավան բացահայտորեն ձգտում էին ընդարձակել իրենց քաղաքական ազդեցության շրջանակները Խեթական տերության հաշվին: Ոչ պակաս բարդ խնդիրներ են եղել նաև Խաթթի ներքաղաքական կյանքում՝ կապված Ուրիտի-Թեշուբի (Մուրսիլիս III) և Խաթթուսիլիս III-ի միջև ընթացած դինաստիական պայքարի հետ: Հավանաբար, Խաթթուսիլիսն իր դիրքերն ամրապնդելու համար զիջման է գնացել վտարված Ուրիտի-Թեշուբի կողմնակիցներին՝ Փոքր Ասիայի հարավում ստեղծելով Թարխունասայի կախյալ պետությունը Ուրիտի-Թեշուբի կրտսեր որդու՝ Կուրունտայի գլխավորությամբ<sup>244</sup>:

Մուրսիլիս II-ին հաջորդած Մուվատալլիս II-ի (մ.թ.ա. 1295-1272թթ.), Ուրիտի-Թեշուբի (մ.թ.ա. 1272-1267թթ.) և Խաթթուսիլիս III-ի (մ.թ.ա. 1267-1237թթ.) կառավարման տարիներից գուշակային և ինվենտարային բնույթի գրավոր աղբյուրներ են պահպանվել որտեղ հիշատակվել է Հայասա-Ազգին<sup>245</sup>: Հնարավոր է, որ դա մի խաղաղ ժամանակաշրջան է եղել խեթա-հայասական հարաբերություններում: Որևէ տեղեկություն չկա այդ թագավորների օրոք Հայասայի գրավման կամ կախյալ վիճակի մասին, ինչը վկայում է այն մասին, որ Հայասա-Ազգիի թագավորությունն ինքնուրույն և անկախ է եղել և չի ներգրավվել խեթերի արտաքին քաղաքականության մեջ: Սակայն, գոյություն ունի մի խեթական գուշակային տեքստ նվիրված Ազգիի դեմ ընթանալիք պատերազմի խնդրին, որը թվագրվել է մ.թ.ա. XIII դարի կեսերով<sup>246</sup>, որի մասին հետագա տեղեկությունները բացակայում են: Այնուամենայնիվ, եթե Մուրսիլիս II-ի օրոք Հայասան ստիպված էր զորք տրամադրել Խաթթիին և, հավանաբար, մասնակցել խեթական արքայի արշավանքներին, ապա այս ժամանակաշրջանում խեթական բանակի կազմում Հայասայի տարածքից որևէ զինվորական միավոր հիշատակված չէ:

Քաղեշի նշանավոր ճակատամարտում հիշատակվել են Խաթթի երկրի դաշնակից և հպատակ մի շարք երկրներ՝ Միտաննի, Արծավա, Դարդանի, Կասկա, Մասա, Պիտասսա, Արավանա և այլն<sup>247</sup>: Այս ցուցակում չի տրվել Հայասա-Ազգի երկրի հիշատակությունը՝ որպես Խաթթիի դաշնակից կամ հպատակ, ինչը վկայում է այն մասին, որ Հայասան Մուրսիլիս II-ից հետո՝ արդեն Մուվատալլիս II-ի օրոք, վերականգնել էր իր անկախությունը և զորք չէր տրամադրել Խաթթիին:

Մուվատալլիս II-ն իր եղբորը՝ ապագա խեթական թագավոր Խաթթուսիլիսին, նշանակել է Հայասայից արևմուտք գտնվող Վերին երկրի կառավարիչ, միաժամանակ նաև խեթական բանակի հրամանատար: Իր «Ինքնակենսագրությունում» Խաթթուսիլիսը նկարագրել է նաև իր ռազմական գործողությունները՝ ուղղված Խաթթիի թշնամիների և անհնազանդ երկրների դեմ<sup>248</sup>:

<sup>244</sup> Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 12-13:

<sup>245</sup> KUB XXII 62. KUB XLII 69. KUB XLVIII 105+KBo XII 53. KUB XLIX 1(CTH 572, 225, 245, 530, 575).

<sup>246</sup> KUB XLIX 70 (CTH 572. Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, 2004, էջ 148).

<sup>247</sup> Bryce T., The Kingdom of the Hittites, Oxford, 1999, p. 297.

<sup>248</sup> CTH 81. Friedrich J., Hethitisches Elementarbuch, II T., Heidelberg, 1946, S. 10-14. Хачатрян В. А. Некоторые вопросы хронологии Хеттского царства Древней Восточной Азии, 1978, № 3, Яз 100-102.

Այստեղ որևէ տեղեկություն չկա Հայասա-Ազգիի մասին, չնայած ռազմական գործողություններն ընթացել են Հայասայի սահմաններից ոչ հեռու՝ Վերին ու Կասկա երկրներում:

Մուվատալլիս II-ից հետո խեթական գահը փոխանցվել է Ուրխի-Թեշուբին (Մուրսիլիս III), որի՝ ժամանակին գրված խեթական սեպագիր աղբյուրներում Հայասայի մասին ոչ մի տեղեկություն չի վկայվել: Հայասա-Ազգիի վերաբերյալ ժամանակագրորեն վերջին հիշատակությունները հանդիպում են Խաթթիի արքա Թուդխալիյաս IV-ի (մ.թ.ա. 1237-1209թթ.) կառավարման շրջանից:

II.

12. [n]am?-ma-aš-ma-aš šu-me-e-eš ku-i-e-eš *BE-LU*<sup>iIA</sup>

13. [E]a-an-te-zi a-u-ri-uš ma-ni-ia-aE-Æe-eš-kat-te-ni

14. *IŠ-TU KUR*<sup>URU</sup> Az-zi *KUR*<sup>URU</sup> Ga-aš-ga

15. *IŠ-TU KUR*<sup>URU</sup> Lu-uq-qa-a nu ZAG še-ik?-kan-te-et

«Տերերդ, ովքեր առաջին հերթին (°) կառավարում եք Ազգիին, Կասկային, (և) Լուկկային նայող սահմանային կետերը...»<sup>249</sup> :

Այս հաղորդումը պարունակում է տեղեկություն Թուդխալիյաս IV-ի կողմից Խաթթիի սահմանային նահանգների կառավարիչներին տրված հրահանգների մասին: Խաթթիի արքան, հավանաբար, ցանկացել է նախազգուշական միջոցներ ձեռք առնել ընդդեմ Ազգի, Կասկա և Լուկկա երկրների:

Ուրեմն, նշված ժամանակաշրջանում Խաթթին բարիդրացիական հարաբերությունների մեջ չի եղել ոչ միայն Կասկա (Արևելապոնտական լեռների շրջանում) և Լուկկա երկրների (հետագայի Լիկիան՝ հարավ-արևմտյան Փոքր Ասիայում), այլ նաև Ազգիի հետ: Դեռ ավելին, Թուդխալիյաս IV-ը ցանկացել է նաև պատերազմել Հայասա-Ազգիի դեմ: Գոյություն ունի մի գուշակային տեքստ, որտեղ խեթական արքան փորձում է տեղեկանալ, թե ում է նպատակահարմար հանձնարարել դեպի Ազգի կազմակերպվելիք արշավանքի ղեկավարությունը<sup>250</sup>: Սակայն, որևէ տվյալ չկա դրան հաջորդած իրադարձությունների մասին:

Մ.թ.ա. XIIIդ. կեսերից Հայկական լեռնաշխարհը հայտնվում է Խեթական տերության և Ասորեստանի ռազմաքաղաքական մրցակցության ոլորտում: Այդ ժամանակաշրջանի ասսուրական գրավոր աղբյուրներն առաջին որոշակի տեղեկություններն են տալիս Հայկական լեռնաշխարհի *երկրների* մասին: Այդ տեղեկությունները գալիս են ասորեստանյան արքաների՝ դեպի հյուսիս կատարած արշավանքների նկարագրություններից:

Թուկուլթի-Նինուրտա I-ի (մ.թ.ա. 1233-1197թթ.) տեքստերում հանդիպում է Հայկական լեռնաշխարհի՝ *Նաիրի երկիր* հավաքական անունը: Ակնհայտ է, որ Թուդխալիյաս IV-ը և

<sup>249</sup> KUB XXVI 12 (Forrer E., ĩajasa-Azzi, Caucasia, 1931, № 9, S. 22. Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, էջ 71: ХачатрянВэВояточныепровинцияХетТЖоЙяимперииЕреваня1971, ЯВ 161, § 21 [Վ. Խաչատրյանն այս տեղեկությունը վերագրել է Խաթթուսիլիս III-ին]):

<sup>250</sup> Istanbul Arkeoloji Müzelerinde bulunan Boğazköy tabletlerinden seçme metinler (այսուհետև՝ IBoT) I 32 (CTH 572. Քոսյան Ա., Հայկական լեռնաշխարհի տեղանունները, Երևան, 2004, էջ 152).

Թուկուլթի-Նիմուրտա I-ը ժամանակակիցներ են եղել: Եվ եթե խեթերը Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան կողմերն անվանել են *Հայասա* կամ *Ազգի*, ապա ասորեստանցիները Լեռնաշխարհի արևմտյան հատվածը հիշատակել են *Նահրի երկրներ* անունով: Ըստ ասորեստանյան սկզբնաղբյուրների՝ Նահրի երկրները տարածվել են Տավրոսի լեռներից մինչև Սև ծով ընկած տարածքում և բնականաբար, իրենց մեջ ընդգրկել են նաև խեթական սկզբնաղբյուրներում հիշատակված Հայասա-Ազգին: Այդ սկզբնաղբյուրներում Հայասա-Ազգի և *Նահրի երկրներ* անվանումների համաժամանակյա հիշատակությունը վկայում է Հայկական լեռնաշխարհի խնդրո առարկա տարածքում պետական կազմավորումների ներքաղաքական զարգացումների մասին՝ միևնույն ժամանակ, թերևս, ցույց տալով Հայասա-Ազգիի տրոհման միտումը, որի բաղկացուցիչ մասերը հանդես են եկել իրենց իշխանավորների գլխավորությամբ: Այսպես, Թուկուլթի-Նիմուրտայի թողած արձանագրություններում պատմվում է Ասորեստանի արքայի՝ դեպի Հայկական լեռնաշխարհ կատարած արշավանքների և նրա դեմ դուրս եկած Նահրիի 43 *թագավորների* մասին<sup>251</sup>:

Ասորեստանի առաջխաղացումը հյուսիսում լայն աշխարհագրական ընդգրկում է ունեցել (Բաբելոն, Կադմուխի, Պուրուլունգի, Ալգի, Սուբարտու, Նահրի և այլն): Դրությունն ավելի է սրվել խեթերի՝ Նիխրիայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ասորեստանցիներից պարտություն կրելուց հետո, որը թույլ տվեց ասորեստանյան զորքին «Եփրատի այն կողմից» 28.800 խեթական բնակչություն գերեվարել<sup>252</sup>: Տարածաշրջանում Ասորեստանի ազդեցության ուժեղացումը չէր կարող չանհանգստացնել Հայկական լեռնաշխարհի *երկրներին*: Հավանաբար, Հայասայի ուշադրությունն այդ ժամանակաշրջանում բևեռված է եղել հարավից եկող վտանգի վրա, միևնույն ժամանակ արևմուտքի՝ Խաթթիի կողմից նույնպես չէր կարող բացառվել հարձակումը: Այդ փուլում Իսուվայի խեթամետ դիրքորոշման ավարտ է արձանագրվել<sup>253</sup>, մյուս կողմից Հայկական լեռնաշխարհի հարավի սուբարյան երկրները՝ Ալգին, Կադմուխին, հակասորեստանյան դիրքորոշում են ունեցել: Հայկական լեռնաշխարհի այս երկրները, բնականաբար, սերտ կապեր են ունեցել լեռնաշխարհում ուժ ներկայացնող Հայասա-Ազգիի հետ՝ ուղղված ընդդեմ Ասորեստանի և Խաթթիի:

Տվյալ պարագայում կարելի է ենթադրել նախկին կախյալ երկրների միջև սեպարատ հարաբերությունների ձևավորում: Մետրոպոլիաների թուլացման պայմաններում սա բնական էր, մանավանդ որ սույն ժամանակաշրջանում նման երևույթներ արդեն վկայված են: Սուբարյան երկրները և Իսուվան չէին կարող գերադասել Ասորեստանի կողմից բացահայտ ուժային միջոցներով ուղեկցվող գերիշխանության հեռանկարը Խաթթիի «քաղաքակիրթ» տիրապետությունից<sup>254</sup>: Տարածաշրջանում խեթական տերության հավասարակշռող դերի նվազումը պիտի ստիպեր Հայկական լեռնաշխարհի *երկրներին* գտնել իրենց ինքնուրույն կենսագործունեության ապահովման ուղիներ ինչպես խեթերի, այնպես էլ Ասորեստանի

<sup>251</sup> АВИИУ№3, 5, 6, 7.

<sup>252</sup> ARI, 1, §§ 773, 778. АВИИУ№6, 7.

<sup>253</sup> Քոսյան Ա., Իսուվան (Ծոփքը) մ.թ.ա. XIII-XII դարերում, ՊԲՀ, 1997, թիվ 1, էջ 184-186:

<sup>254</sup> Քոսյան Ա., Ասորեստանը և Հայկական լեռնաշխարհի երկրները մ.թ.ա. XIII դարի երկրորդ կեսին, ՊԲՀ, 1999, թիվ 2-3, էջ 228-230:

նկրտումների դեմ<sup>255</sup>: Առավել նպատակահարմարը տվյալ պարագայում Հայկական լեռնաշխարհի այդ *երկրների* միջև դաշնակցային հարաբերությունների հաստատումն էր: Հավանական է, որ դաշնակցային հարաբերություններ են գոյություն ունեցել Ազգի, Իսուվայի և սուբարյան երկրների միջև և ուղղված են եղել Հայկական լեռնաշխարհի երկրներին արևմուտքից և հարավից սպառնացող վտանգների դեմ:

Թուրքալիյաս IV-ին հաջորդել են Արնուվանդաս III-ը (մ.թ.ա. 1209-1207թթ.) և Սուպպիլուլիումաս II-ը (մ.թ.ա. 1207-XIIդ. սկիզբ): Նախկինում Արնուվանդաս III-ի կառավարման շրջանով թվագրվող խեթա-հայասական փոխհարաբերությունների վերջին փուլի հիմնական սկզբնաղբյուր համարվող, պայմանականորեն «Պախտուվացի Միտա» անվանումը կրող տեքստն, ինչպես վերը նշվեց, այժմ վերաթվագրվել է մ.թ.ա. XVդ. վերջերով կամ մ.թ.ա. XIVդ. սկզբով:

Սուպպիլուլիումաս II-ը հանդիսացել է Խաթթիի վերջին մեծ տիրակալը, որի օրոք, կամ նրանից հետո, խեթական տերությունը տրոհվել է, և արդեն մ.թ.ա. XIIդ. սկզբին Խաթթին իր նախկին սահմաններով Փոքր Ասիայում չի հիշատակվել:

Վերջին շրջանում, շնորհիվ զգալի թվով նորահայտ գրավոր և հնագիտական նյութերի, խեթական տերության անկման ընթացքն անվերապահորեն արտաքին գործոնին վերագրելու միտումը զգալի փոփոխություններ է կրել: Ուսումնասիրողներն այժմ ավելի շատ տեղ են հատկացնում ներքին քայքայիչ պրոցեսներին՝ խնդիրը դիտելով ոչ այնքան որպես հետևանք թշնամական հարձակման («ծովի ժողովուրդներ»), այլ խեթական տերության քաղաքական կառույցի աստիճանական տրոհման՝ նրա բաղկացուցիչ մասերը հանդիսացող մի շարք կախյալ երկրների անկախացման ու տնտեսական ճգնաժամի արդյունքում<sup>256</sup>: Խաթթիի անկման «տրոհման» տեսության համաձայն՝ այն հետևանք էր առաջին հերթին մ.թ.ա. XIIIդ. կեսերից երկրի ներսում տարեցտարի խորացող ներքաղաքական անկայունության, որ գլխավորապես բացատրվում է Մուրսիլիս II-ի դինաստիայի երկու ճյուղավորումների միջև ընթացող հակամարտությամբ՝ սկսած Խաթթուսիլիս III-ից: Մ.թ.ա. XIIդ. սկզբներին ներքաղաքական վայրիվերումների, տնտեսական լուրջ բարդությունների և կենտրոնական Փոքր Ասիայի բնակչության մի զգալի մասի զանգվածային արտագաղթի հետևանքով խեթական տերությունը տրոհվեց երեք քաղաքական միավորների՝ Թարխունտասսան՝ Փոքր Ասիայի հարավում, Կարգամիսը (Հյուսիսային Սիրիայում) և Մելիդը (Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմուտքում)<sup>257</sup>:

Հենվելով կենտրոնական Փոքր Ասիայի՝ մոտավորապես մ.թ.ա. 1200թ. ավերված խեթական քաղաքների տեղաբաշխման քարտեզի վրա՝ Հ. Գյուտերբոկը կարծիք է հայտնել, որ խեթերի մայրաքաղաքը և մյուս քաղաքները հարձակման են ենթարկվել ոչ թե արևմուտքից

<sup>255</sup> Головлева Л. и Царя Г. Вторая Алзия во второй половине I тысячелетия до н. э. Древний Восток 1978, № 3, Яз. 72.

<sup>256</sup> Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ 113-114:

<sup>257</sup> Քոսյան Ա., Տուն Թորգոմայ, Երևան, 1998, էջ 11:

կամ հարավից, այլ, հավանաբար, հյուսիս-արևելքից կամ արևելքից<sup>258</sup>, այսինքն՝ այն տարածքներից, որտեղ գտնվել են Կասկա և Չայասա երկրները: Խաթթի նախորդ ողջ պատմության ընթացքում կասկական ցեղերի մշտական հարձակումները խեթական բնօրրանի վրա թույլ են տալիս ենթադրել նրանց ակտիվությունը նաև մ.թ.ա. XIIIդ. վերջին: Դժվար է պնդել, թե Չայասան արդյոք մասնակցություն ունեցել է Խաթթի բնօրրանի վրա հարձակումներին, այնուամենայնիվ, գիտության մեջ գոյություն ունեցող այն տեսակետը, որ Խաթթի կործանումից հետո անկում է ապրել նաև Չայասա-Ազգիին<sup>259</sup>, Խաթթի տրոհման տեսության ի հայտ գալով թույլ է տալիս վերանայել նաև Չայասա-Ազգիի՝ մ.թ.ա. XIIդ. սկզբին անկում ապրելու ենթադրությունը:

Մ.թ.ա. XIIIդ. երկրորդ կեսին Չայասա-Ազգին հանդես է եկել որպես անկախ երկիր և չի մտել ո՛չ Խաթթի և ո՛չ էլ Ասորեստանի տիրապետության տակ: Մ.թ.ա. XIIդ. սկզբին Խաթթի տրոհվելը մի շարք պետությունների նոր, ավելի նպաստավոր իրադրություն պետք է ստեղծեր Չայասա-Ազգիի համար: Ասորեստանը նույնպես քաղաքական անկում է ապրել այդ ժամանակաշրջանում<sup>260</sup>: Այսպիսով, տարածաշրջանում որևէ արտաքին լուրջ գործոն չկար, որը կարող էր բերել Չայասա-Ազգիի կործանմանը:

Ըստ մի շարք հեղինակների՝ Չայասա-Ազգին հանդիսացել է այն տարածքը, որտեղից սկիզբ է առել հայ ժողովուրդը: Այսպես, ըստ Ն. Մարտիրոսյանի՝ Չայասան հայ ժողովրդի նախահայրենիքն է եղել, և հայասական ցեղերը հիմքն են հանդիսացել հայ ժողովրդի<sup>261</sup>: Նման եզրակացության էր եկել նաև Պ. Կրեչմերը: Ըստ նրա՝ Չայասա անունը նշանակում է Չայաստան, որի բնակիչները իրենց հայ անունն այնուհետև ժառանգել են հնդեվրոպացի արմեններից<sup>262</sup>: Ըստ Գ. Ղափանցյանի՝ *Æaia*-(sa) էթնիկական տերմինը նույնական է «հայ» ինքնանվանը, և Չայասա-Ազգին նա համարել է հայերի նախնական բնօրրանը: Գ. Ղափանցյանը ենթադրել է, որ Խաթթի տրոհումից հետո Չայասան առավել հզորացել է, և հայերի նախնիները՝ հայասացիները ներթափանցել են հարավ՝ Մելիտենեի կողմը և Լեռնաշխարհի արևելյան կողմը<sup>263</sup>:

Ըստ Ս. Երեմյանի՝ Շուբրիա երկրում՝ մասնավորապես Իսուվա, Ալզի և Պուրուլունզի շրջաններում, բնակություն են հաստատել հյուսիս-արևմուտքից (մասնավորապես Խայասա-Խաթե երկրից) ներխուժած մուշկերի, ուրումեացիների (հայերի նախնիները) և կաշկեացիների ցեղերը, որոնք մ.թ.ա. XIIդ. կեսերին կազմում են ցեղային միություն, որը ասորեստանյան արձանագրություններում հայտնի է որպես «Մուշկերի թագավորություն»: Այնուհետև, Իսուվայի,

<sup>258</sup> Güterbock H., *Survival of the Hittite Dynasty, Crisis*, 1992, p. 53-55.

<sup>259</sup> Բարսեղյան Լ., Չայասա-Ազգիի ռազմա-քաղաքական պատմությունից, ՏՅԳ, 1964, թիվ 7, էջ 78: Երեմյան Ս., Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, ՊԲՀ, 1970, թիվ 2, էջ 36: Աղոնց Ն., Չայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 52: Мананджян Я. О некоторых проблематике истории географии древней Армении и Ереваня 1956, Я. 120. Մաչատրյան Վ., Չայաստանը մ.թ.ա. XV-VII դարերում, Երևան, 1998, էջ 94:

<sup>260</sup> Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, էջ 139:

<sup>261</sup> Մարտիրոսեան Ն., Հայերենի յարաբերութիւնը հեթնոստեանի հետ, ՀԱ, 1924, թիվ 9-10, էջ 453: Նույնի, Պրպտուններ փոքրասիական անուններու մասին, ՊԲՀ, 1961, թիվ 3-4, էջ 99: Նույնի, Նպաստ մը հեթ և հայ բառաքնության, ՊԲՀ, 1972, թիվ 2, էջ 164-167:

<sup>262</sup> Kretschmer P., *Der Nationale Name der Armenier*, ՀԱ, 1933, թիվ 7-8, էջ 429-432 (հայերեն համառոտ թարգմանությունը):

<sup>263</sup> ИЛР 191 191 23-125.



Ալզհի և Պուրուլունգի տարածքում «Մուշկերի թագավորության» փոխարեն հանդես է եկել Արմե երկիրը, որը կոչվել է նաև Ուրումե, Ուրմե-Ուրմեուխի: Ժամանակի ընթացքում արիմ-ուրումեացիների լեզուն՝ հայերենը, հանդես է եկել որպես ցեղային միության հիմնական լեզու: Արիմ-ուրումեացիների անունն աստիճանաբար տարածվել է ասորեստանյան արձանագրություններում հիշատակվող ողջ Շուբրիա երկրի վրա: Այս անվանումը հետագայում, ըստ Ս. Երենյանի, զարգացում է ապրել դեպի «Արմե[նի]» և «Արմինա» անվանաձևը<sup>264</sup>: Վ. Բընըցյանուն նույնպես հայերի հայ ինքնանվան առաջացումը Հայասա էթնոնիմի հետ է կապել: Նա նշել է, որ հայասացիները շարունակել են ապրել Հայկական լեռնաշխարհում նաև խեթական տերության կործանումից հետո<sup>265</sup>: Հ. Ավետիսյանը Հայասան նշել է որպես հայոց ազգասերման կարևոր գործոն: Ըստ նրա՝ խեթական աղբյուրներում հիշատակված հայասացիները ասուրական արձանագրություններում ստացել են ուրումեացիներ անվանումը (Հայասայի Ուրա բերդաքաղաքի անվանումից): Մ.թ.ա. XIIIդ. վերջից, երբ խեթական պետությունն անկում է ապրել, ուրումեական (հայասական) ջոկատները, կասկերի (աբեշլացիների) գորամիավորումների հետ միացած, շարժվել են դեպի հարավ՝ Շուբրիա երկիրը: Այս պայմաններում էլ, ըստ նրա, կազմավորվել է Ուրմե-Շուբրիա կամ Հայասա-Շուբրիա առաջին հայկական պետական միավորումը<sup>266</sup>:

Խեթական տերության տրոհման հետևանքով մ.թ.ա. XII-Xդդ. Մերձավոր Արևելքի պատմության վերաբերյալ գրավոր աղբյուրները կտրուկ նվազում են, իսկ եղած սահմանափակ նյութը լուսաբանում է գլխավորապես ներմիջագետքյան և ներեգիպտական խնդիրները՝ բացառությամբ մ.թ.ա. XIIդ. վերջերի և XIդ. առաջին կեսի ասորեստանյան տեքստերի<sup>267</sup>:

Հավանաբար, Հայասա-Ազգին իր գոյությունը պահպանել է նաև մ.թ.ա. XIIդ. ընթացքում, սակայն ոչ որպես միասնական պետություն, այլ մի շարք քաղաքական միավորներից բաղկացած մի երկիր: Այդ միավորներն, ամենայն հավանականությամբ, մտել են ասորեստանյան սկզբնաղբյուրներում հիշատակված *Նահրի երկրների* կազմի մեջ:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

### Հայասա-Ազգիի նյութական և հոգևոր մշակույթը

#### 3. 1. Հնագիտական տվյալներ պատմական Հայասա-Ազգիի տարածքից

Հայասա-Ազգի թագավորության պատմությունն, ըստ խեթական սեպագիր սկզբնաղբյուրների, ընթացել է մ.թ.ա. XIV-XIIIդդ.: Այդ ժամանակահատվածը հնագիտորեն համընկնում է զարգացած կամ ուշ բրոնզի ժամանակաշրջանին:

<sup>264</sup> Երենյան Ս., Հայերի ցեղային միությունը Արմե-Շուբրիա երկրում, ՊԲՀ, 1958, թիվ 3, էջ 59-74:

<sup>265</sup> БэнэцянусэВэлНекоЗорыеВопроЯыэЗногенезаВрмяннИПРЗИ1961, թիվ 2, էջ 91-123:

<sup>266</sup> Ավետիսյան Հ., Հնագույն էթնիկական տեղաշարժերը և Հայկական լեռնաշխարհը մ.թ.ա. III-I հազարամյակներում, ՊԲՀ, 1994, թիվ 1-2, էջ 243-245:

<sup>267</sup> АВИИУИ10 (IV, 43; V, 22), 11, 12, 13, 16.

Հայասա-Ազգիի տարածքը մասնագետների մեծ մասը տեղորոշում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան հատվածում՝ որպես կենտրոն նշելով հիմնականում Բարձր Հայքը և հարակից տարածքները<sup>268</sup>: Ներկայումս այդ տարածաշրջանում փաստագրված են հնագույն ժամանակներից մինչև միջնադար ընկած ժամանակաշրջանին վերաբերող մի շարք հնավայրեր:

Կարին-Էրզրումի շրջանը մասն էր կազմում Հայկական լեռնաշխարհի վաղբրոնզեդարյան մշակութային արեալի, իսկ երկաթի դարում՝ Վանի թագավորության: Այս տարածքը մտնում էր Հայասա-Ազգիի կազմի մեջ և կապող կամուրջ էր հանդիսանում մի կողմից Արարատյան դաշտավայրի, Գուգարքի բրոնզեդարյան զարգացած շրջանների, մյուս կողմից՝ Փոքր Ասիայի կենտրոնական շրջանների բնակավայրերի միջև: Կարագ, Բլուր, Գյուլգեղավա, Սոս հնավայրերն այս տարածքում ուշբրոնզեդարյան բնակավայրերի գոյության կարևոր վկայություններն են:

Էրզրումի շրջանում կատարված հնագիտական պեղումներն ի հայտ բերեցին մ.թ.ա. II հազարամյակի, մասնավորապես ուշբրոնզեդարյան մշակույթի առկայությունը Հայկական լեռնաշխարհի այս հատվածում: Այս փաստը հիմնված է Էրզրումի շրջանի մի շարք բլուրներից պեղված խեցեղենի ուսումնասիրության վրա, մասնավորապես ներկայիս Բուլամաչ հույուք (գտնվում է Էրզրումից 30կմ դեպի արևելք՝ Հասանկալայի մոտ), Սոս հույուք, Ուզունահմեդ (այս հնավայրը կոչվում է նաև Քայալըք ու գտնվում է Էրզրումից 15կմ արևելք), Էսկիշեհիր թեփե (գտնվում է Էրզրումից 5կմ արևելք) կոչվող հնավայրերից: Այս բլուրներից պեղված նյութը պատկերացում է տալիս այն մասին, որ այս շրջանում վաղբրոնզեդարից մինչև երկաթի դար ընկած ժամանակահատվածում բնակավայրեր են գոյություն ունեցել: Հնավայրերից պեղված խեցեղենը պատրաստված է բրուտի անիվի՝ դուրգի վրա՝ ավազախառն կավից, մակերեսը սև ու կարմրավուն է, լավ հղկված է և ունի տեղական մշակույթին բնորոշ գծեր, սակայն զուրկ չէ նաև խեթական մշակույթի որոշ ազդեցությունից<sup>269</sup>:

Sos Höyük (Սոս) հնավայր-բլուրը գտնվում է Էրզրում քաղաքից 25կմ դեպի արևելք՝ պատմական Վերին Բասեն գավառում: Հնավայրում պեղումներն սկսվել են դեռևս 1987թ. Էրզրումի համալսարանի և Էրզրումի թանգարանի աշխատակիցների խմբի կողմից: Այնուհետև, սկսած 1994թ-ից, թուրք-ավստրալական միացյալ հնագիտական արշավախումբն Անտոնիո Սագոնայի, Կլաուդիա Սագոնայի, Հիլմի Օզկոռուսուկլուի, Յան Մաքֆիի և այլոց մասնակցությամբ ավելի ինտենսիվ կերպով շարունակեց բնակավայրի պեղումները: Պեղումների ընթացքում հայտնաբերված նյութերը վերաբերում են տարբեր ժամանակաշրջանների՝ առնվազն մ.թ.ա. III հազարամյակից սկսած մինչև միջնադար (XIIIդ.): Ժամանակագրական տարբեր շերտերի առկայությունը վկայում է, որ Սոսում կյանքը հարատևել է դարեր շարունակ: Սոսը բնակեցված է եղել նաև մ.թ.ա. II հազարամյակում: Այս հնավայրի

<sup>268</sup> Forrer E., ĭajasa-Azzi, Caucasia, 1931, № 9, S. 11. Աղոնց Ն., Հայաստանի պատմություն, Երևան, 1972, էջ 46: Капанцяня Гэя ХайаЯаф колыбеля армяния Ереваня 1948я Яэ 27. Երեմյան Ա., Հայ ժողովրդի կազմավորման ընթացքը, ՊԲՀ, 1970, թիվ 2, էջ 30: Քոսյան Ա., Մ.թ.ա. XII դարի մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, 1999, էջ166:

հյուսիսային մասն ուշբրոնզեդարյան ժամանակահատվածում արտադրական կենտրոն է եղել: Այրված և կտրտված ոսկորների և օջախի մնացորդները, որոնք գտնվել են այնտեղ, հաստատում են, որ այդ մասում գտնվել է մսամթերքի մշակման կենտրոն: Սոսում գտնվել են տների և շինությունների հետքեր: Բոլոր շերտերում հայտնաբերված կառույցները բաղկացած են գավիթներից, կլոր կացարաններից ու հարակից քառանկյունի տնտեսական շինություններից, որոնց հարդախառն աղյուսե պատերը հենվում են քարե հիմնապատերի վրա: Տներն իրենց ներքին հարդարանքով նման են Հայկական լեռնաշխարհի արևելյան հատվածի նմանատիպ շինություններին, սակայն տարբերվում են նախագծով և կառուցվածքով: Տների մոտ գտնվել են նաև հորեր՝ նախատեսված սննդամթերք պահելու համար: Սոս հնավայրից պեղվել են գերեզմաններ, որոնք նման են Թռեղքում գտնված գերեզմաններին: Հանգուցյալների հետ գերեզմանափոսերում գտնված մ.թ.ա. II հազարամյակով թվագրվող խեցեղենը մուգ է և բավականին ամուր: Սոս հնավայրում հայտնաբերվել են օբսիդիանե աշխատանքային գործիքներ: Այստեղից պեղված խեցեղենը սերտ առնչություն ունի Թռեղքի խեցեղենի հետ: Դրա գերակշռող մեծամասնությունն ունի սև փայլեցված մակերես և գունավոր, սովորաբար կարմրավուն ներքին մաս, երբեմն հանդիպում են գորշ, վարդագույն և մոխրագույն մակերես ունեցող ամաններ: Գտնվել են լայնափոր սափորներ, որոնք ունեն նաև «նախիջևանյան» տիպի բռնակներ: Խեցեղենի վրա արված նախշազարդերը հիմնականում անոթների վերին մասում են: Սոսի խեցեղենը սերտորեն առնչվում է նաև Բլուրի և Գյուզելովայի խեցեղենի հետ<sup>270</sup>:

Երզրումից 16կմ դեպի հյուսիս-արևմուտք տեղորոշվում է նշանավոր Karaz (Կարազ) հնագիտական վայրը: Կարազը (Ղարազ, Կար Արծն) գտնվում է հին հայոց Արծն քաղաքի մոտ: Այստեղ պեղումներ են իրականացվել դեռևս XXդ. 40-ական թթ.: 1942թ. Հ. Քոչայը և նրա օգնական Ք. Թուրֆանը կատարել են փորձնական պեղումներ, այնուհետև դրանք շարունակել են 1944թ.-ին:

Կարազի համալիրում գտնվել են նյութեր, որոնք վերաբերում են էնեոլիթից մինչև միջնադար ընկած ժամանակաշրջանին: Այնտեղ հայտնաբերվել են կավե կլոր անոթներ, լայնաբերան սափորներ, ձեռքի ապարանջան, կավե օջախներ և այլն: Խեցեղենը հիմնականում տեղական է՝ բնորոշ զարդանախշերով: Հայտնաբերվել են մեծ քանակությամբ օբսիդիանե աշխատանքային գործիքներ: Այսպես կոչված «Կարազի մշակույթը» նույնպես սերտ առնչություն ունի Հայկական լեռնաշխարհի արևելյան մասի մշակույթի հետ<sup>271</sup>: Ըստ Ք. Քյոքթենի կողմից Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևմտյան շրջաններում իրականացված հետազոտությունների արդյունքների՝ Կարազի նյութական մշակույթի ոճը հանդիպում է

<sup>269</sup> Güneri S., Erzurum Çevresindeki Höyüklerin Yüzey Araştırması, AST, 1988, № 5/2, s. 51-65.

<sup>270</sup> Güneri S., Erzurum Çevresindeki Höyüklerin Yüzey Araştırması, s. 58-59. Sagona A., Sagona C., Özkorucuklu H., Excavations at Sos Höyük 1994, AnSt, 1995, № 45, p. 193-218. Սոսի, Excavations at Sos Höyük-1994, KST, 1995, № XVII, 1, p. 151-155. Sagona A., Erkmen M., Sagona C., Excavations at Sos Höyük, 1995, AnSt, 1996, № 46, p. 27-52. Sagona A., Erkmen M., Sagona C., Howells S., Excavations at Sos Höyük, 1996, Anatolica, 1997, № XXIII, p. 183-186. Sagona A., Erkmen M., Sagona C., Excavations at Sos Höyük, 1997, KST, 1998, № XX, 1, p. 205-206. Sagona A., Sagona C., Excavations at Sos Höyük, 1998 to 2000, ANES, 2000, № 37, p. 66-68.

<sup>271</sup> Lamb W., The Culture of North-East Anatolia and its Neighbours, AnSt, 1954, № 4, p. 21-32. Koşay H., Turfan K., Erzurum-Karaz Kazisi raporu, Belleten, 1959, № XXIII, s. 349-413. Güneri S., Doğu Anadolu'da Yeni Gözlemler, TAD, 1992, № XXX, s. 152-158.

Բաբերդի և Երզնկայի շրջաններում. այն իր արեալի մեջ էր ընդգրկել նաև Երզնկայից հյուսիս գտնվող Pulur Höyük (Բլուր) հնավայրը: Կարագի նյութական մշակույթի ոճի ազդեցությունը նկատելի է նաև Վանա լճի ավազանում<sup>272</sup>:

Բլուր-ը (հայկական՝ Բլուր) նույնպես հայտնի հնավայր է: Այն գտնվում է Երզրումից 20կմ դեպի արևմուտք: Այս հնավայրում նույնպես ուսումնասիրություններ են կատարվել դեռևս XXդ. 40-ական թթ.-ին<sup>273</sup>: Բլուրում գտնվել են մ.թ.ա. II հազարամյակի դամբարաններ, որտեղից հայտնաբերվել է մեծ քանակությամբ խեցեղեն: Ուշբրոնզեդարյան Բլուրի գերեզմաններն ուշագրավ են իրենց ձևով ու չափով: Բլուրում գտնվել է երեք գերեզման՝ 2մ երկարությամբ: Սահացածների դիակները փաթաթված են պատանքի մեջ: Թաղվածները մեկը (III գերեզման) մի ծեր կին է, որի հետ հայտնաբերվել է արծաթե կրծքագարդ, հինգ բրոնզե ասեղ և երկու բրոնզե ապարանջան: Կարևոր է շեշտել, որ երկու գերեզմաններում գտնված բրոնզե նետասայրերը շատ նմանատիպ օրինակներ ունեն Թռեղքի համաժամանակյա գտածոների մեջ: Պեղված բրոնզե նյութերը թվագրվում են մ.թ.ա. XIIIդ. վերջով և XIIդ. սկզբով, իսկ գերեզմանափոսերում գտնված կավանոթների մի մասը՝ մ.թ.ա. XIV կամ XIII դարերով: Թաղման արարողությունների ժամանակ ընտանի կենդանիներ են զոհաբերվել և նրանց մնացորդները դրվել են գերեզմանափոսերում<sup>274</sup>: Այսպիսի թաղումները փաստում են, որ մեր նախնիները հավատացել են անդրշիրիմյան կյանքի գոյությանը, այդ իսկ պատճառով դամբարանների մեջ աճյունի հետ միասին տեղավորել են կերակուր ու տոնային սպասքի առարկաներ, զենքեր և աշխատանքի գործիքներ, զարդեր, սպանված անասունների մարմիններ, որոնք պետք է շարունակեին ծառայել տիրոջը հանդերձյալ կյանքում:

Ներկայումս Güzelova (Գյուզելովա, թուրք.՝ Գեղեցիկ դաշտ) կոչվող հուշարձանը գտնվում է Երզրումից 15կմ դեպի հյուսիս-արևելք: Այստեղ պեղումներ կատարվել են 1961թ.-ին: Պեղումներից ստացված նյութը վերաբերում է էնեոլիթից մինչ միջնադար ընկած ժամանակահատվածին: Այս բնակավայրը ևս բնակեցված է եղել մ.թ.ա. II հազարամյակում<sup>275</sup>:

Բլուրից, Գյուզելովայից գտնվել են բրոնզե ապարանջաններ, ուլունքներ, խեցեղեն, ոսկրե, օբսիդիանե և փայտե իրեր<sup>276</sup>: Բլուրի դամբարաններից ձեռք բերված անոթները Կարագից, Գյուզելովայից գտնված անոթների հետ մի մշակութային շղթա են կազմում: Մյուս կողմից Բլուրի, Գյուզելովայի անոթների ձևերը նույնպես սերտ առնչություն ունեն Լեռնաշխարհի արևելյան մասի նույնատիպ խեցեղենի հետ: Բլուրից գտնված իրերը

<sup>272</sup> Lamb W., նույն տեղում:

<sup>273</sup> Kökten K., Orta, doğu ve kuzey Anadolu'da yapılan tarih öncesi araştırmaları, Belleten, 1944, № VIII/32, s. 659-680. Սուլմի, Kuzey-doğu Anadolu prehistoryasında Bayburt çevresinin yeri, 1945, № III/5, s. 465-505. Koşay H., Pulur ve Güzelova, TTKY, 1964, № XVII, 1, s. 91-94. Güneri S., Erzurum Çevresindeki Höyüklerin Yüzey Araştırması, s. 45-76. Սուլմի, Doğu Anadolu'da Yeni Gözlemler, TAD, 1992, № XXX, s. 153-158.

<sup>274</sup> Koşay H., Vary H., Die Ausgrabungen von Pulur, Ankara, 1964.

<sup>275</sup> Koşay H., Vary H., Güzelova Kazisi. Ausgrabungen von Güzelova, Ankara, 1967. Koşay H., Pulur ve Güzelova, s. 91-94. Güneri S., Doğu Anadolu'da Yeni Gözlemler, s. 153-158.

<sup>276</sup> Kökten K., Orta, doğu ve kuzey Anadolu'da yapılan tarih öncesi araştırmaları, s. 659-680. Սուլմի, Kuzey-doğu Anadolu prehistoryasında Bayburt çevresinin yeri, s. 465-505. Koşay H., Pulur ve Güzelova, s. 91-94. Güneri S., Erzurum Çevresindeki Höyüklerin Yüzey Araştırması, s. 45-76. Սուլմի, Doğu Anadolu'da Yeni Gözlemler, s. 153-158. Koşay H., Vary H., Güzelova Kazisi. Ausgrabungen von Güzelova, Ankara, 1967.

զուգահեռներ ունեն թռեղքի մշակույթի հետ: Այդ նմուշները թվագրվում են մ.թ.ա. XIV-XII դարերով: Ջուգահեռներ կարելի է անցկացնել նաև Հայկական լեռնաշխարհի արևելյան մասի և Կարազից, Բլուրից գտնված ծայրակալների, դաշույնների, բրոնզե ապարանջանների, ուլունքների միջև: Բլուրի առավել կատարելագործված բրոնզե ապարանջանների և ուլունքների տիպեր կարելի է նկատել հետագա Վանի թագավորության նույնանման օրինակներում<sup>277</sup>:

Ներկայիս Էրզրումի մարզի տարածքը, որտեղ գտնվում են Սոս, Գյուզելուվա, Բլուր, Կարազ (Արծն) հնավայրերը, հնուց ի վեր հայտնի է իր տնտեսական նշանակությամբ: Տարածաշրջանի գյուղատնտեսական զարգացմանը զգալի կերպով նպաստել է գետային ցանցը: Մարզի տարածքից են սկիզբ առնում Հայկական լեռնաշխարհի երեք խոշոր գետերը՝ Արևմտյան Եփրատը, Արաքսն ու ճորոխը, որոնք իրենց ջրային խիտ ցանցով ոռոգման լայն հնարավորություններ են ստեղծում երկրագործության զարգացման համար: Այդ առումով առավել բարենպաստ պայմաններ ունեն Էրզրումի ու Բասենի դաշտերը: Քանի որ Էրզրումի մարզի տարածքը հարուստ է արոտավայրերով, բոլոր հիմքերը կային նաև անասնապահության զարգացման համար<sup>278</sup>:

50. nu-uš-ma-aš ka-a-ša ki-e k[u-e u]d-da-a-ar ŠA.PAL NI.IŠ DINGIR<sup>LIM</sup>

51. te-e~~Ē~~-~~Ē~~u-un na-at ma-a-an [šu-me-eš LÚ<sup>MEŠ</sup> URU.ĭ]a-ya-ša <sup>m</sup>Ma-ri-ya-aš-ša

52. Ú-UL pa-a~~Ē~~-~~Ē~~a-aš-te-ni nu-uš-ma[-aš ke-e] NI.IŠ DINGIR<sup>LIM</sup> šu-me-en-za-an

53. SAG.DU<sup>MEŠ</sup>-KU-NU QA.DU DAM<sup>MEŠ</sup>-KU-NU DUMU<sup>MEŠ</sup>[-KU-NU ŠEŠ]<sup>MEŠ</sup>-KU-NU  
MUNUS.KU<sup>MEŠ</sup>-KU-NU

54. MÁŠ<sup>ĭIA</sup>-KU-NU Ē<sup>MEŠ</sup>-KU-NU A.ŠÀ<sup>ĭIA</sup>-KU-NU U[RU DIDLI<sup>ĭIA</sup>-KU-N]U <sup>GIŠ</sup>SAR.GEŠTIN-  
KU-NU

55. KISLA<sup>ĭIA</sup>-KU-NU GUD<sup>ĭIA</sup>-KU-NU UDU<sup>ĭIA</sup>-KU-NU [QA.DU MIM-MU-KU-NU-ya]

56. kat-ta-an ar-~~Ē~~a <Ēar-ga-nu-wa-an-du> da-an-ku-wa-ya-az-ma-aš-k[án tág-n]a-az

57. še-ir ar-~~Ē~~a ni-ni-in-kán-du nu-uš-ša-an a[m-mu-uk]

58. A.NA LÚ<sup><MEŠ></sup> KUR<sup>URU</sup> ĭa-ya-ša <sup>m</sup>Ma-ri-ya <KUR><sup>URU</sup> ĭa-ya-ša-y[a]

59. i-da-a-lu Ú-UL tág-ga-aš-[~~Ē~~i]<sup>279</sup>

50. Եվ ձեզ այսպես երդման տակ

51. դրեցի, եթե [դուք՝ մարդիկ Հ]այասայի, և Մարիյա

52. չկատարեք, ապա [այս] երդումը ձեզ

53. բոլորիդ՝ ձեր կանանց, ձեր որդիների, ձեր եղբայրների, ձեր քույրերի, ձեր

<sup>277</sup> Güneri S., Doğu Anadolu'da Yeni Gözlemler, s. 154-155.

<sup>278</sup> Մելքոնյան Ա., Էրզրում, Երևան, 1994, էջ 29-30:

<sup>279</sup> Friedrich J., Staatsverträge des ĭatti-Reiches in hethitischer Sprache, 2 T., Leipzig, 1930, S. 134-136.

54. ընտանիքների, ձեր տների, ձեր դաշտերի, ձեր քաղաքների, ձեր] խաղողի այգիների, ձեր
55. արտերի, ձեր խոշոր եղջերավոր անասունների, ձեր ոչխարների, ձեր [ունեցվածքի հետ միասին]
56. թող սաստիկ <ոչնչացնի>, ս[և եր]կրի
57. երեսից: Եվ [ես]
58. Հայասայի մարդկանց, Մարիային՝ Հայասա երկրի,
59. չարիք չեմ պատճառի:

«Խուկկանայի պայմանագրի» այս հատվածից կարելի է եզրակացնել, որ հայասացիները զբաղվել են երկրագործությամբ և անասնապահությամբ, քանի որ խեթական կողմն ի դեմս Սուպաիլուլիումաս I-ի, սպառնում էր պայմանագիրը խախտելու դեպքում ավերել և ոչնչացնել նրանց տները, դաշտերը, խաղողի այգիները, արոտները, անասունները և այլն:

Ուշբրոնզեդարյան ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում բարձր զարգացման էր հասել երկրագործությունը: Մ.թ.ա. II հազարամյակի վերջին դարերի բնակավայրերում հնագետները բացել են կարասներ, հացահատիկի բազմաթիվ մեծ հորեր: Երկրագործության բարձր զարգացման մասին են խոսում են ոչ միայն կավե ամանեղենի վրա պահպանված բուսական հարուստ զարդապատկերներն ու պտղաբերության կանացի արձանիկները, որ հանդիպում են ամենուրեք բրոնզեդարյան բնակավայրերում, այլև զանազան նյութերից բաղկացած գործիքների քանակն ու բազմազանությունը, որոնք ծառայում էին վար ու ցանքի, բերքահավաքի ու գյուղատնտեսական մթերքների վերամշակման համար<sup>280</sup>: Երկրագործությունը զարգանում էր գերազանցապես մեծ ու փոքր գետերի, արհեստական ջրանցքների ու առուների ջրերով ոռոգվող հարթակներում ու բարեբեր հովիտներում: Երկրի բարձրադիր շրջաններում՝ ալպյան մարգագետիններին կից, ստեղծվում էր ջրանցքների ու ջրավազանների մի ամբողջ համակարգ<sup>281</sup>: Մ.թ.ա. II հազարամյակի երկրորդ կեսին Հայկական լեռնաշխարհում զարգանում էր նաև անասնապահությունը: Այստեղ, ի տարբերություն երկրի նախալեռնային ու լեռնային շրջանների, որտեղ հիմնական հարստությունը մանր եղջերավոր անասունն էր, առաջատար նշանակություն էին ստանում խոշոր եղջերավոր անասունները, որոնք լայնորեն օգտագործվում էին երկրագործության մեջ՝ որպես քաշող ուժ: Տարբեր բնակավայրերի պեղումների ժամանակ գտնվել են ընտանի կենդանիների՝ կովերի, եզների, ոչխարների, այծերի, խոզերի, էշերի, ձիերի ու շների կմախքների մնացորդներ<sup>282</sup>:

Տնտեսության հիմնական ճյուղերին առընթեր զարգանում էր արհեստագործությունը և առաջին հերթին՝ խեցեգործությունը, որն անմիջականորեն կապված էր երկրագործության ու անասնապահության մթերքների պահպանման, վերամշակման, տնային տնտեսության այլևայլ կարիքների հետ:

<sup>280</sup> Карапе2яняЛэ3иПрои3водстваеяэозияЯ2ваяядуэовнаякультураяплемениАрменииивяэпоэуяпозднейя бронзыияраннегожелезаяиЕревании1980, Яэ44-53.

<sup>281</sup> Карапе2яняЛэ3и2վ. աշխ., էջ33-44:

<sup>282</sup> Նույն տեղում, էջ33-72:

Բրուտները կավից պատրաստում էին տնտեսական ու պաշտամունքային իրեր՝ հսկա կաթսաներ, բազմազան ամանեղեն, կափարիչներ, պատվանդաններ, օջախներ ու նրանց տարատեսակ հենակներ, պղնձե իրեր ձուլելու կաղապարներ, մարդու և կենդանիների արձանիկներ:

Հայաստանի ուշբրոնզեդարյան բնակատեղիները, որոնք, որպես կանոն, զետեղված են համեմատաբար բարձրադիր վայրերում, գետերի, գետակների, առվակների ափերին կամ նրանցից ոչ հեռու՝ տափարակ ու բարեբեր դաշտերի մեջ, գրավում են մի քանի հեկտար տարածություն: Բնակատեղիների ու նրանց կից ցանքատարածությունների այսպիսի տեղադրությունը լայն հնարավորություններ է ստեղծել մշակելի հողատարածությունների ոռոգման համար:

Ինչպես Արևելքի երկրագործական մարզերում, այնպես էլ Հայաստանի լեռնադաշտերում յուրաքանչյուր «համայնական տուն» բաղկացած էր կլոր ու քառանկյունի շինությունների միատիպ մեկուսացված խմբերից: Կլոր կացարանների շուրջը համախմբված քառանկյուն շինություններն, իրենց մեծ ու փոքր հորերով, շտեմարաններով կամ պարզապես հարթ հատակներով, հացահատիկի պահեստներ էին ու գոմեր ընտանի կենդանիների համար: Կլոր կացարաններում որոշակի դասավորությամբ հանդես են գալիս կավակերտ երկարուկ նստարանները կամ մահճակալները, հատակի մեջ թաղված կարասներն ու պատի որևէ անկյունում պատրաստված օջախը՝ մոխրի ու սևացած ամանների մնացորդներով: Օջախների մոտ հաճախ գտնվում են սանդեր, ծեծիչներ, աղորիքներ: Կացարանների կենտրոնական մասում փորված է հացահատիկի հորը, որի եզրին կանգնեցվում էր պտղաբերության կանացի քարե արձանիկը:

Հայկական լեռնաշխարհի մյուս շրջանը, որի մ.թ.ա. II հազարամյակի հնագիտությունը կարևոր է Հայաստան-Ազգիի պատմության ուսումնասիրության համար, ճորոխ ու Գայլ (Լյուկոս, այժմ՝ Կելկիտ) գետերի հովիտներն են:

Ուսումնասիրողների մեծ մասը, վերականգնելով խեթական քաղաքական աշխարհագրությունը, գտնում են, որ Վերին երկիրը պետք է տեղադրված լիներ ներկայիս Սեբաստիա քաղաքի և Իրիս ու Գայլ գետերի ավազաններում<sup>283</sup>: Վերին երկրից արևելք գտնվում էր Հայասան: Վերին Գայլ (Կելկիտ) գետի հովիտը, հավանաբար, այն շրջանն էր, որտեղ կասկական արևելյան ցեղերը շփվել են հայասացիների հետ:

Խեթական տերության արևելքում և հյուսիս-արևելքում քաղաքական անհանգիստ վիճակը, որը սկիզբ էր առել դեռևս Թուդիսալիյաս III-ի օրոք (մ.թ.ա. XIV դ. I կես), շարունակվեց նաև նրա հաջորդների ժամանակ: Խեթական տեքստերը, ինչպիսին է Մուրսիլիսի տարեգրությունը, պատմում են հաճախակի զինված բախումների մասին արևելքում՝ ներառյալ զինված ներխուժումները Վերին երկրի քաղաքներ Հայաստան-Ազգիի կողմից<sup>284</sup>:

Այս տարածքում՝ ներկայիս Գյումուշխանեի նահանգի Բաբերդի և Կելկիտի (անունն

<sup>283</sup> RGTC, VI, S. 293-294.

<sup>284</sup> KBo VI 28 I 11-12. KBo IV 4 II (Götze A., Die Annalen des Muršiliš, MVAG, 1933, № 38, S. 115).

ածանցվում է Գայլ գետի անունից և նրա աղավաղված տարբերակն է՝ Գայլ գետ-Կեկիտ<sup>285</sup>) շրջաններում, 1980-ական թթ. վերջում սկսված հնագիտական աշխատանքներն ի հայտ բերեցին բազմաթիվ հնավայրեր<sup>286</sup>: Ուսումնասիրվել են 60-ից ավելի հնավայրեր, այդ թվում նաև հնագետ Ք. Քյոքթենի կողմից հիշատակված 5 վայրերը Բաբերդի շրջանում, որտեղ նա եղել էր 1940-ական թթ. իր հետազոտական արշավանքի ժամանակ<sup>287</sup>: 12 միջին չափսի հնավայր-բլուրների մեջ են նաև Tepecik (թուրք.՝ Փոքր կատար, որի մասին զեկուցել է Ք. Քյոքթենը՝ որպես Siptoros՝ Սուրբ Թորոս հայկական բնակավայրի անվան աղավաղված ձևը<sup>288</sup>), Kitre, Gundulak, Pülür Tepe և այլ առավել լավ ուսումնասիրման կարոտ մի շարք հնավայրեր: Մեծ բլուրներ են Söğütü-ն (զեկուցված Ք. Քյոքթենի կողմից Hindi անվամբ), Բլուրը՝ Göğcedere գյուղում, Karakilise Tepe-ն (Սև եկեղեցու գագաթ), Çorak Höyük-ը (Ձորակ հայկական բնակավայրի աղավաղված անվանումը<sup>289</sup>), Cengiler Tepesi-ն (Ցանքի լեռ), Büyüik Tepe-ն՝ առանձնացված Küçük Tepe-ից թամբարդով, Kilise Tepe-ն (Վանքի գագաթ) և այլն<sup>290</sup>:

Բաբերդի շրջանում հետազոտությունները շարունակվեցին նաև XX դ. 90-ական թթ.-ի սկզբին Büyüktepe Höyük-ի պեղումների հետ միասին<sup>291</sup>:

Büyüktepe Höyük (Բյույուքթեփե, թուրք.՝ Մեծ գագաթ, այլ կերպ կոչվում է նաև İkiztepe) կոչվող հնավայրը գտնվում է Բաբերդից 30 կմ դեպի հարավ-արևմուտք՝ Çiftetaş (Չիֆթեթաշ) գյուղի մոտ: Այն Բաբերդի դաշտում է՝ պատմական Սպեր գավառում: Այս հնավայրը հայտնագործվել է 1988 թ.-ին՝ Մելքունի համալսարանի արշավախմբի կողմից, որը կանոնավոր պեղումներ սկսել է 1990 թ.-ից: Ընդհանուր առմամբ հնավայրից պեղված նյութը թվագրվում է վաղբրոնզեդարից մինչև վաղ հռոմեական ժամանակաշրջանը: Բյույուքթեփեյի մ.թ.ա. II հազարամյակի խեցեղենը նույնպես մուգ է, պատրաստված բրուտի անիվի վրա, փայլեցված, զարդանախշերով ու նույնպես առնչվում է Հայկական լեռնաշխարհի արևելյան մասի մշակութային ձևերին<sup>292</sup>:

Հայկական լեռնաշխարհի մյուս շրջանը, որի՝ մ.թ.ա. II հազարամյակի հնագիտությունը կարևոր է ուսումնասիրության համար, ճորոխ գետի հովիտն է: Սև ծովի ավազանի ամենախոշոր գետը Հայկական լեռնաշխարհում ճորոխն է: Այն նաև Լեռնաշխարհի ամենաջրառատ գետերից մեկն է: Դեռ հնուց օգտագործվել է լաստառաքման նպատակներով: Արդվինից ցած գետը նավարկելի է ոչ խորանիստ նավերի համար: Բազմամետաղները, ոսկին, արծաթը, գորշ ածխի պաշարները ճորոխ գետի ավազանում մեծ հնարավորություն կարող էին ստեղծել

<sup>285</sup> Մելքոնյան Ա., Էրզրում, Երևան, 1994, էջ 32:

<sup>286</sup> Sagona A., An Archaeological Survey of the Bayburt and Kelkit Regions, North-Eastern Anatolia: Pre-classical Period, AST, 1989, № 7, p. 425-433.

<sup>287</sup> Kökten K., Kuzey-doğu Anadolu prehistoryasında Bayburt çevresinin yeri, s. 479-486, 498-505.

<sup>288</sup> Մելքոնյան Ա., Էրզրում, էջ 161:

<sup>289</sup> Նույն տեղում:

<sup>290</sup> Sagona A., նշվ. աշխ., էջ 425-433:

<sup>291</sup> Sagona A., Bayburt Survey, 1990, AST, 1991, № 9, p. 397-403. Նույնի, Bayburt Survey, 1991, AST, 1992, № 10, p. 261-268.

<sup>292</sup> Sagona A., Pemberton E., Mcphee I., Excavations at Büyüktepe Höyük, 1992, AnSt, 1993, № 43, p. 69-83. Նույնի, Büyüktepe Höyük 1993 Activities, KST, 1994, № XVI, 1, p.161-164.



լեռնահանքային գործի զարգացման համար<sup>293</sup>:

Բաբերդի, Կելկիտի, Էրզրումի շրջանների հնավայրերից հայտնաբերված հնագիտական նյութերի մի մասը վերաբերում է ուշ բրոնզի ժամանակաշրջանին, և դրանք կարելի է համարել Հայաստանի նյութական մշակույթի իրենց փաստեր: Դրանց թվագրման համար ամենակարևոր տվյալները տալիս է հայտնաբերված խեցեգործական արտադրանքը:

Բարձր Հայքի և հարակից տարածքների հնագիտական պեղումներն ի հայտ բերեցին հարուստ խեցեգործական արտադրանք: Ընդհանուր առմամբ այդ ժամանակաշրջանի ամբողջ խեցեղենը պատրաստված է բրուտի անիվի վրա և դասակարգվում է երկու հիմնական խմբերի՝ միաերանգ և բազմերանգ գունազարդ խեցեղեն և հասարակ, առանց նախազարդերի խեցեղեն: Անոթների կավի քիմիական վերլուծությունը ցույց է տվել, որ դրանք պատրաստված են տեղում տեղական հումքով: Բազմերանգ գունազարդված անոթները պատրաստված են բարձր վարպետությամբ ու տեխնիկայով: Ջարդամոտիվները ցույց են տալիս առաջընթաց, ավելի հարուստ երկրաչափական մոտիվներ, վերադիր կենդանակերպ զարդեր: Երկու խմբերում դիտարկվող ընդհանուր հատկանիշներից մեկն այն է, որ զարդամոտիվներն արված են անոթների վերին հատվածում: Միաերանգ գունավոր մոտիվները կատարված են սև գույնով՝ բաց դարչնագույն ֆոնի վրա<sup>294</sup>: Անոթները հիմնականում լավ փայլեցված են: Բազմերանգ խեցեղենի վրա, որը համեմատաբար ավելի բարդ է իր բազմատեսակ մոտիվներով, քան միաերանգ խեցեղենը, զարդամոտիվների մեծ մասը երկգույն են, շատ հաճախ՝ աղյուսագույն ու սև, կամ էլ՝ աղյուսագույն ու դարչնագույն: Նախազարդերը գերազանցապես ներկայացված են մեծ ձգված ու փոքր եռանկյունիների, կենդանիների ու երկրաչափական պատկերների միջոցով<sup>295</sup>:

Բացի վերոնշյալ նյութական մշակույթի փաստերից, պատմական կարևոր նշանակություն ունի նաև խեթա-հայաստանյան մի պայմանագրի վերջում տրված Հայաստանի աստվածների և նրանց պաշտամունքի կենտրոններ հանդիսացող քաղաքների ցուցակը<sup>296</sup>: Դրանով փաստվել է տաճարների՝ որպես այդ աստվածությունների պաշտամունքի կենտրոնների գոյությունը Հայաստանի քաղաքներում<sup>297</sup>: Վաղ ժամանակաշրջանի քաղաքներին բնորոշ էր տաճարական կառույցների և տնտեսության առկայությունը: Խեթական սկզբնաղբյուրներում տվյալներ կան Հայաստան-Ազգիի երկու տասնյակից ավել քաղաքների (բնակավայրերի) մասին (Արիպսա, Արխիտա, Արնիյա, Գազու..., Գասմիյախա, Դուգզամա, Լախիրխիլա, Լիտտա, Խալիմանա, Խարսալասա, Կամ..., Հայասա, Պախիտուտեյա, Պատտեու..., Պարրայա, Տախ(ա)նիսարա, Տամատտա, Տավատենա, Ուտկունիսա, Ուրա, Քադկուսա):

Հայկական լեռնաշխարհի տվյալ ժամանակաշրջանի բնակավայրերը և բերդ-շեները քաղաքական, առևտրական, տնտեսական և ռազմական կենտրոններ էին<sup>298</sup>: Դրանք

<sup>293</sup> Գաբրիելյան Հ., Հայկական լեռնաշխարհ, Երևան, 2000, էջ 187-188:

<sup>294</sup> Özfirat A., Research on the Cultures of East Anatolia in the 2<sup>nd</sup> Millennium B.C., Istanbul, 2001, p. 326-330.

<sup>295</sup> Նույն տեղում:

<sup>296</sup> Forrer E., i ajasa-Azzi, S. 6.

<sup>297</sup> Գ. Ղափանցյանը հնարավոր է համարել Երզնկայի մոտ գտնվող Ալթըն-Ռեփե հնավայրը՝ տաճարի մնացորդներով վերագրել Հայաստան-Ազգիի ժամանակաշրջանին (ИЛР№1, 1981:22):

<sup>298</sup> Арешьян Г. В. Вопросы Близкого Востока Армении и позднего бронзового и раннего железного

տեղաբաշխված են եղել հիմնականում կիկլոպյան տիպի ամրոցների շուրջ<sup>299</sup>: Այդպիսի հուշարձաններ ուսումնասիրվել են Հայկական լեռնաշխարհի տարբեր մասերում՝ Արարատյան դաշտավայրում, Շիրակում, Վանանդում, Կարինի, Մուշի շրջաններում, Վասպուրականում, Տաշիր-Չորագետում, Ջավախքում, Թռեղքում, Արցախում և այլուր<sup>300</sup>:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, ներկայիս Էրզրումի, Գյումուշխանեի մարզերի տարածքը (Մեծ Հայքի Տայք, Բարձր Հայք նահանգների տարածքի մի մասը, Այրարատի արևմտյան գավառները, Տուրուբերան նահանգի հյուսիսային գավառները և Փոքր Հայքի հյուսիս-արևելյան մասը), որտեղ գտնվում են վերը նշված հնավայրերն, ուշ բրոնզեդարում մասն էր կազմում մշակութային այն ընդարձակ տարածքի, որն ընդհանուր առմամբ զբաղեցնում է ներկայիս Վրաստանի, Սեբաստիայի շրջանի, Կասպից ծովի և Ուրմիա լճի միջև ընկած տարածքը<sup>301</sup>, այսինքն՝ Հայկական լեռնաշխարհը:

### 3. 2. Հայասա-Ազգիի հոգևոր մշակույթը

Հայկական լեռնաշխարհի բնակիչների վաղ պաշտամունքն ու հավատալիքները զարգացման բարձրակետին են հասնում ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանում: Լեռնաշխարհի քաղաքական, սոցիալ-տնտեսական կյանքի և հոգևոր մշակույթի զարգացման անմասն չէր կարող մնալ նաև Հայասա-Ազգին: Հոգևոր մշակույթի ուսումնասիրության համար արժեքավոր նյութ են տալիս հնագիտական պեղումները և խեթական սեպագիր աղբյուրների տվյալները, որոնցում որոշ տեղեկություններ կան Հայասայի լեզվի և դիցարանի մասին:

Խեթերը պաշտել են ոչ միայն բուն խեթական, այլ նաև իրենց հարևան և հեռավոր ժողովուրդների բազմաթիվ աստվածություններ<sup>302</sup>, դրանց շարքում նաև Հայասայի աստվածներին: Խեթական տերության պետական վավերագրերը պետք է գերազույն աստվածների և աստվածուհիների հովանավորության տակ լինեին, այդ պատճառով գրագիրները կազմում էին բոլոր տեղական աստվածությունների ցուցակները, որոնց պետք է նշեին պայմանագրերի ու թագավորական հրամանագրերի մեջ: Շատ տեղական աստվածություններ խմբավորվում էին ըստ իրենց միանման նշանակության, այդ պատճառով հարմարության համար խեթերն այդ աստվածությունների անվանումները համապատասխանեցրել են իրենց լեզվաշխարհին և կրոնական պատկերացումներին՝ դրանք դարձնելով ավելի հոգեհարազատ<sup>303</sup>:

---

веков. Научные Труды ИИМК. Москва. 1978, № X, №91-108.

<sup>299</sup> Belli O., Konyar E., Archaeological Survey on Early Iron Age Fortresses and Necropoleis in Northeast Anatolia, Istanbul, 2001, p. 331-335. Özfirat A., նշվ. աշխ., էջ 326:

<sup>300</sup> Карапетянц Л. П. Производящие языки в Восточной Азии. Культурная племена Армении в эпоху поздней бронзы и раннего железа. № 31.

<sup>301</sup> Özfirat A., նույն տեղում: Özgüç T., Early Anatolian Archaeology in the Light of Recent Research, Anatolia, 1963, № 7, p. 7.

<sup>302</sup> Haas V., Geschichte der hethitischen Religion, Leiden, New York, Köln, 1994, S. 539-615.

<sup>303</sup> Герния О. И. Хетские боги. Москва. 1987, № 119.

Այսպես, Սապագուրվանտա խեթական քաղաքում այլ երկրների աստվածների շարքում հիշատակվել է նաև «Ազգի երկրի Ամպրոպի աստվածը»<sup>304</sup>: Հիշատակություն կա «Հայասայի Ամպրոպի աստծո» արձանիկը՝ սպասարկող քուրմ Վաննիի հետ միասին<sup>305</sup>: Այլ խեթական տեքստերից հայտնի է նաև, որ զոհեր են մատուցվել Հայասա քաղաքի U.GUR աստծուն<sup>306</sup>:

Հայասայի դիցարանը ներկայացված է խեթական մի արձանագրության մեջ, որը, թերևս, խեթական և հայասական արքաների համաձայնագրի մի հատված է: Այն առաջին անգամ հրատարակվել է Է. Ֆոռերի կողմից:

I.

26. [D]U.GUR URU i-a-ya-ša D IŠTAR URU Pa-a-at-te-u-[.....]

27. ....

28. [D .....-š/t]a?-an-nu-uš URU La-Æi-ir-Æi-la D Za-ag-ga(-)[.....[URU]Qa?-ad-ku/ma-ša/ta?

29. [DU UR]U Ar-ni-ya DTa-a-ru-u-mu-uš URU Kam?-[.....]

30. [D]U URU Pa-aÆ-Æu-u-te-ya DTe-ri-it-ti-tu-u-ni-i[š]

31. [UR]UTa-ma-at-ta DU-na-ga-aš-ta-aš URUGa-zu-ú[?]

32. DU tak-ša-an-na-aš URU Ar-Æi-ta DBa-al-ta-ik

33. [UR]UDu-ug-ga-am-ma-na DU-na-ag-ga-aš-ta-aš URUPár-ra-ya

34. [D ...r]a(?)-Æu-Æu-uš URUGa-aš-mi-ya-Æa DŠi-il-I[?]-I[i? URU .....] <sup>307</sup>

Այս արձանագրության մեջ հիշատակվել են տասնչորս հայասական քաղաքների աստվածներ, որոնցից երկուսը՝ գաղափարագրով ներկայացված Ամպրոպի աստված DU-ն և DUnagaštaš աստվածությունը, կրկնվում են: Հայասա քաղաքի U.GUR աստվածը և Պատեու... քաղաքի IŠTAR (INANNA) աստվածուհին ցուցակի հայասական հատվածում տրվել են առաջինը: Այնուհետև մեկ տող դատարկ է, իսկ աստվածների թվարկումը շարունակվել է մյուս տողից, ինչը առիթ է տվել Է. Ֆոռերին իրավացիորեն կարծելու, որ այդ երկուսն են հանդիսացել Հայասայի գլխավոր աստվածները<sup>308</sup>:

Ե. Սարտիրոսյանը Հայասա (ըստ հեղինակի՝ Խայաշա) անվան հիմքն ընդունել է iaiia (Խայա)-ն, որը գաղափարագրով էր տրվել՝ U-GUR և ըստ նրա՝ կարող էր հանդիսանալ հայերի անվանադիր աստծո անունը և համապատասխանել է բաբելոնական Էնլիլին<sup>309</sup>:

Գ. Ղափանցյանի կարծիքով հայասական պանթեոնը գլխավորել է Արը կամ Արա

<sup>304</sup> Bo 434 IV 18 (Forrer E., iajasa-Azzi, Caucasia, 1931, № 9, S. 22. Ertem H., Coğrafya Adlari Dizini, Ankara, 1973, s. 120).

<sup>305</sup> KUB XII 2 24 (Forrer E., նշվ. աշխ., էջ 23: Քոսյան Ա., Անի-Կամախը խեթական դարաշրջանում, էջ 239).

<sup>306</sup> KBo IV 13. KUB X 82 (Forrer E., նշվ. աշխ., էջ 22).

<sup>307</sup> KUB XXVI 39.

<sup>308</sup> Նույն տեղում, էջ 7:

Գեղեցիկ աստվածությունը (հիմնավորելով իր միտքն այն հանգամանքով, որ մեռնող-հարություն առնող աստվածները հաճախ դառնում են նաև անդրաշխարհի տերեր), մյուս կողմից նա հնարավոր է համարում <sup>D</sup>U.GUR-ի հնչյունական ընթերցումը (Ուգուր)<sup>310</sup>: <sup>D</sup>U.GUR-ի պաշտամունքն, ըստ նրա, հայասացիները, հավանաբար, վերցրել են Յուսիսային Միջագետքի խուրրիներից<sup>311</sup>:

Իշտար կամ Ինաննա աստվածուհու գաղափարագիրը Գ. Ղափանցյանը համեմատել է Անահիտ դիցանվան հետ, որի հայասական անունը եղել է կամ Նանե, կամ Խեպատ, կամ էլ Նվարդ: Հայտնի է նաև, որ և՛ Անահիտ, և՛ Նանե դիցուհիների պաշտամունքի կենտրոն է հանդիսացել Բարձր Հայքի տարածքը: Այս դիցուհիները (Խեպատ, Նանե) որպես սիրո, պտղաբերության, բերքատվության աստվածուհիներ, աստվածների մեծ մայրեր, իրենց որոշ հատկանիշներով նման են Ինաննային (Իշտար), իսկ Նվարդը հայտնի է որպես Արա Գեղեցիկի կին (Արա Գեղեցիկը՝ որպես <sup>D</sup>U.GUR աստվածը):

Գ Ղափանցյանն առաջարկում է նաև Ջագգա... դիցանվան վերջում լրացնել -ga-a և կարդալ Zaggaga՝ հաշվի առնելով խեթական Ջագգա աստվածությունը: Հետաքրքիր է նաև Terittitūniš հայասական դիցանվան բացատրությունը, որն, ըստ նրա, նշանակում է «երեքոտանի, եռագի, երեքպոչանի»: Իսկ Baltaik հայասական դիցանունը նա դիտում է որպես սեմական ծագում ունեցող բառ, որը նշանակում է «Կյանքի աստված» (աքադ. haštu «կյանք», «առողջ լինել» բառերից)<sup>312</sup>:

Գ. Ջահուկյանը հայասական Ուգուրը համեմատել է հայերեն ոգոր-իմ «պայքարել» բառի հետ: Իսկ հայասական <sup>D</sup>U-Ամպրոպի աստծուն նա համեմատել է հետագայի հայկական հեթանոսական դիցարանի Վահագն աստծու հետ<sup>313</sup>: Ըստ նրա՝ հայասական դիցանուններից երկուսը՝ (Kar)ĒuĒuš-ը (եթե հավաստի է Kar-բաղադրիչի վերականգնումը) և Tarumuš-ը, փոխառյալ աստվածություններ են: Սրանցից առաջինը զուգահեռներ ունի KarĒuĒaš-ի (Kar-Ēu-Ēa-aš) հետ, որը Կարգամիսի գլխավոր աստվածություններից երրորդն էր: -ĒuĒuš բաղադրիչը նույնական է ĒuĒ(Ē)aš «պապ» խեթա-լուվական բառի հետ<sup>314</sup>: Ըստ Գ. Ջահուկյանի՝ հայասական դիցարանում եղել են ինչպես բնիկ, այնպես էլ փոխառյալ աստվածություններ: Բնիկ աստվածություններն են՝ Šilili..., Terittituniš, Baltaik, Unagaštaš, Zakk(an...): Tarumuš-ն, ըստ նրա, և, եթե ճիշտ են վերականգնումները, [Izzišt]anuš-ն ու [Kar]ĒuĒuš-ը փոխառյալ աստվածություններ են, այսինքն՝ հայասացիները պաշտում էին նաև փոքրասիական աստվածություններ: Հայասական Zakk(an...)-ը նա նմանեցնում է հայերեն «ծագ-» բառի հետ: Tarumuš-ի Taru բաղադրիչը նույնական է համարում խաթական Taru-ի՝ «ժամանակի աստծո» հետ: Իսկ Terittituni դիցանունն, ըստ նրա, բաղկացած էր t(e)ri-«երեք» և (t)tituni-«պոչ,

<sup>309</sup> Մարտիրոսյան Ն., Պրպտուններ փոքրասիական անուններու մասին, ՊԲՀ, 1961, թիվ 3-4, էջ 100:

<sup>310</sup> ИЛРиИЯЭ89я

<sup>311</sup> Նույն տեղում, էջ 306:

<sup>312</sup> Նույն տեղում, էջ 90-94, 306:

<sup>313</sup> ДжаукянГЭХайаЯКийЯязыкияегоЯ2ношениеЯиндоевропейЯкимЯязыкамиЕреванИ1964,ЯЯЭ57.я

վերջավորություն» կամ «օր, լույս, փայլ», -երի-(երի-g-u) «երեք» և տտուն (տուտն) կամ տի «մեծ» բառերից<sup>315</sup>:

Գ. Ջահուկյանը ենթադրել է մի շարք հայասական դիցանունների հայկական ծագում, դրանք են Šilili-ն՝ հայերեն *սիլեի* «սիրեցյալ» բառից, Terittituni-ն՝ հայերեն *eri*-«երեք» և ttun, tutn- «վերջավորություն» բառերից: Այսպիսով, նա ենթադրել է այս դիցանունների տեղական-հայկական ծագումը: Իսկ Unagašta դիցանվան մեջ նա սկզբում ենթադրել է հնդեվրոպական \*ong<sup>ll</sup> «օծել» բառարմատը և այն թարգմանել է որպես «օժյալ», այնուհետև նույն բառի մեջ ենթադրել է հայերեն սոճ<sup>c</sup> (քիթ, բեղեր) և (h)ast-(հաստ) բառարմատները: Ըստ Գ. Ջահուկյանի՝ Baltaik դիցանվան արմատն է հանդիսանում է հնդեվրոպական \*bh<sup>l</sup>-to «փայլուն» արմատը<sup>316</sup>: Baltaik և Unagaštaš դիցանունների -ik և -aštaš ածանցներն, ըստ նրա, բնիկ հայկական են, և դրանք կարելի է համեմատել հայերեն -իկ և -աստ վերջածանցների հետ<sup>317</sup>:

Գ. Ջահուկյանը, գրելով խեթա-լուվական լեզվական միջավայրի հետ հայասերենի ունեցած փոխառնչությունների մասին, հնարավոր է համարել, որ Հայասան ոչ միայն աստվածություններ փոխառած լինի, այլև. «հենց ինքը՝ Հայասան, լինի հարևան ժողովուրդների մեջ պաշտվող մի շարք աստվածությունների աղբյուրը: Այդպիսիք են Šanta (բնիկ հնդեվրոպական *շանթ* բառից), Lušiti (*լույս* բնիկ հնդեվրոպական բառից) աստվածությունները»: Նա քննում է նաև որոշ չստուգաբանված խեթական դիցանուններ, որոնց նա վերագրել է հայկական-հայասական ծագում՝ Andaliya (հողի աստված, հայ. անդ «դաշտ, արտ» հնդեվրոպական \*andh-), Anzaliya (հայ. անձեղ- թռչուն), ĩuzziya (խուց, հնդեվրոպական \*khu-sko-), KallaEare (հայ. քաղահար), Šulutta (հայ. շողուտ), Zukki (հայ. ձուկն)<sup>318</sup>:

Լեզվագիտական համեմատության հիմքի վրա Գ. Վարդումյանը տվել է հայասական դիցանունների նշանակությունները՝ Տերիտտիտունիսը՝ «եռոտանի, եռագի կամ եռամեծ», Ունագաստասը՝ «օժյալ», Բալտաիկը՝ «փայլուն» կամ «խելացի», Սիլիլին՝ «բարեհաճ, գթառատ, սիրելի», Թարունուս՝ «Թարույի ուժ, հավերժ», Ուտակասանա՝ արարիչ, ստեղծող կամ հավասարության և միջօրեի աստված, Ջակկանը՝ «սուրբ», կամ «ձուկն», Սաննուս-«առողջ» և այլն<sup>319</sup>: Ըստ նրա՝ գերագույն զուգի Ոգոր աստվածը, որ ստորգետնյա աշխարհի տիրակալն էր, նաև ողջ երկրի որոտ-կայծակի, ռազմի աստվածն էր («ոգորել»՝ կռվել, մարտնչել): Իսկ իգական կեսն Իշթար (Ինաննա) գաղափարագրով վկայված սիրո, գեղեցկության, պտղաբերության

<sup>314</sup> Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 327:

<sup>315</sup> Ջահուկյան Գ., Հայաստանի լեզվի հինամատուլիական ծագման վարկածը, ՊԲՀ, 1976, թիվ 1, էջ 95, 108: Նույնի, Լեզվական նոր տվյալներ հայոց նախաքրիստոնեական կրոնի և հավատալիքների մասին, ՊԲՀ, 1992, թիվ 1, էջ 22:

<sup>316</sup> ДжаукяняГэиэзվ. աշխ., էջ48, 53-54: ՆույնիՊОяЯоо2ношенияэайаЯЯкогояияармянЯкогояязыковия ՊԲՀ1988,թիվ1,էջ67:

<sup>317</sup> Ջահուկյան Գ., Լեզվական նոր տվյալներ հայոց նախաքրիստոնեական կրոնի և հավատալիքների մասին, էջ 22:

<sup>318</sup> Ջահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 22-23:

<sup>319</sup> ВардумянГэиэзвДээрЯианЯкиеякульЗыяармяннիՀայ ազգագրություն և բանահյուսություն (այսուհետև՝ ՉԱԲ)1991, թիվ 18, էջ 68:

աստվածուհին էր, որի հայասական (հայկական) անունն Անահիտ էր<sup>320</sup>:

Հայասական դիցարանին անդրադարձել է նաև Ս. Պետրոսյանը: Ըստ նրա՝ այդ դիցարանի գերագույն աստված <sup>D</sup>U.GUR-ը որպես առասպելաբանական նախատիպ ունեցել է ամպրոպի այն նույն աստվածությունը, որի մյուս զարգացումներն էին հանդիսանում հեթանոսական Արամազդը և ժողովրդական հավատալիքների Գռզո բաբան: Այսինքն՝ հնագույն հայերի ամպրոպի աստվածը կրելու էր իր ամպրոպային բնույթը բացահայտող բնածայն Գրգուռ անունը կամ մականունը, որից սերում են ինչպես Գրգուռ լեռնանունը, այնպես էլ ամսվա երրորդ տասնօրյակը սկզբնավորած օրվա հին հայկական Գրգուռ անունը: Իսկ Իշթար/Ինանան, ըստ նրա, որպես մայր դիցուհի լինելու էր հեթանոսական դարաշրջանում երեզում պաշտված Անահիտի նախատիպը: Երեզ/Երեզ անունով նախապես հայտնի են եղել ինչպես Մայր դիցուհին, այնպես էլ նրա տաճարի շուրջ տարածված դաշտը կամ վերջինիս՝ խոպան թողնված մի հատվածը: Այնուհետև Երեզ դաշտի սրբավայրը կոչվել է Երեզ-ալան կամ ուղղակի Երեզ/Երեզ: Ըստ այդմ, Մայր դիցուհու Երեզ/Երեզ անունից կամ մականունից կազմվել է նրան ձոնված ամսվա 11-րդ օրվա անունը՝ Երեզկան<՝Երեզ-ական: Մայր դիցուհին, ըստ Ս. Պետրոսյանի, իր պաշտամունքի վայրի անունով Երեզական է կոչվել<sup>321</sup>:

Հայասական Սnagašta աստվածությունն, ըստ նրա, հանդիսացել է խաղողագործության-գինեգործության հովանավորը: Այդ դիցանվան Սnag-բաղադրիչի հիմքում ընկած է եղել հնդեվրոպական \*uein-ak նախածնը<sup>322</sup>:

Ըստ Ս. Պետրոսյանի և Ծ. Պետրոսյանի՝ «հայասական <sup>D</sup>U.GUR-ը, իսուվական <sup>D</sup>U-ն, հայոց տոմարում իր հիշատակը թողած Գրգուռը և հայ հեթանոսական դիցարանի նախնական Արամազդը ներկայացրել են Հայկական լեռնաշխարհի բնակչության Ամպրոպի աստծուն, հայասական <sup>D</sup>INANNA-ն, իսուվական <sup>D</sup>INANNA-ն, հայոց տոմարի Երեզկանը և հեթանոս հայերի Անահիտը ներկայացրել են Մայր դիցուհուն, իսկ հայասական <sup>D</sup>Izzi-istanu-ն, իսուվական <sup>D</sup>Pirua-ն, հայոց տոմարի Արեզը և հայ հեթանոսական դիցարանի նախնական Վահագնը՝ Արևի աստծուն»<sup>323</sup>:

Ըստ Ա. Պետրոսյանի՝ խեթական և լուվական աղբյուրներում U.GUR-ը հիշատակվել է շատ հաճախ: Մեկական անգամ հիշատակվել են Խալպուտիլին քաղաքի U.GUR-ը և նրա պաշտամունքը Ջիխիլայում, ապա բազմիցս հիշատակվել է Հայասայի U.GUR-ը<sup>324</sup>: Սա ցույց է տալիս, որ Խաթթի և նրա ազդեցության ոլորտում գտնվող երկրներից հենց Հայասան է եղել U.GUR-ի պաշտամունքի նշանակալի կենտրոնը: Խեթա-խաթական ավանդույթում երկրորդ հազարամյակի կեսից միջագետքյան Ներգալ/U.GUR-ը նույնացվել է խաթական Šulikatte «Սուլի

<sup>320</sup> Վարդունյան Գ., Հայկական լեռնաշխարհը հայոց հավատքի բնօրրան, Հայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան, Հայագիտական գիտաժողով, Երևան, 2004, էջ 148:

<sup>321</sup> Պետրոսյան Ս., Պատերը և եռադասության դրսևորումները հին ու վաղմիջնադարյան Հայաստանում, Երևան, 2001, էջ 117, 121:

<sup>322</sup> Պետրոսյան Ս., Հին հայոց խաղողագործ աստվածը, Հայկական լեռնաշխարհը հայոց և համաշխարհային քաղաքակրթության բնօրրան, Հայագիտական գիտաժողով, Երևան, 160, 162:

<sup>323</sup> Պետրոսյան Ս., Պետրոսյան Ծ., Հնագույն Ծոփքի դիցական գլխավոր եռյակի շուրջ, Գիտական աշխատություններ, 2001, թիվ 4, էջ 81:

արքա» կամ Šulinkatte՝ «Սուլիի արքա» աստծու հետ, որի «արքա» լինելը նորից շեշտում է U.GUR-ի տիրող դիրքը դիցարանում<sup>325</sup>: Ըստ Ա. Պետրոսյանի՝ U.GUR-ը և INANNA-ն հայկական նախաքրիստոնեական դիցարանի կառույցում պիտի համապատասխանեին աստվածների նահապետ Արամազդին և մայր աստվածուհի Անահիտին: Արամազդի պաշտամունքի կենտրոնը հանդիսացող Անի ամրոցում էր գտնվում հին հայոց արքաների գերեզմանոցը: Ըստ այդմ, Արամազդը՝ աստվածների նահապետն ու թերևս արքան, առնչվել է արքայատոհմի, ապա և անդրաշխարհի հետ<sup>326</sup>:

Ըստ Ա. Պետրոսյանի՝ Չայկը նույնպես համադրելի է «Չայասա քաղաքի» մեծ աստծուն՝ U.GUR-Ներգալին: Չայկ և Չայասա անունների համահնչությունն էլ հնարավոր է դարձնում այդ անունների ստուգաբանական կապի և Չայկի նախատիպի՝ Չայասայի էպոնիմ աստված լինելու ենթադրությունը (Չայկ < Չայ-իկ, հին դիցանունների բնորոշ քնքշական իկ ածանցով): Ըստ այդմ, Ա. Պետրոսյանը միանգամայն հավանական է համարում, որ Եփրատի ակունքների մեծ աստվածն՝ Արամազդի հնագույն նախորդը, եղել է Չայկը կամ նրա նախնական կերպարը, որն իր հատկանիշների և անվան նմանության պատճառով նույնացվել է միջագետքյան U.GUR-Ներգալի, Ea-ի, արևմտասեմական El-kunirša-ի և խաթական Šulinkatte-ի հետ<sup>327</sup>: Չայկի՝ Չայասայի էպոնիմ լինելու վարկածը մինչ այդ առաջարկվել է Զ. Սանանդյանի կողմից, որը ելնում էր Չայասայի՝ Չարքի շրջանում տեղայնացումից<sup>328</sup>:

Չայասական երրորդ աստծու անունը, որից պահպանվել է վերջին մասը, ըստ մի կարծիքի, կարող է լինել Izzištanuš<sup>329</sup>, այսինքն՝ խաթական արևի աստված Eštan-ի խեթական մի ձևը (հնարավոր է՝ Ezzi Eštan-ից՝ «բարի արևի աստված»): Ըստ Ա. Պետրոսյանի՝ հայոց Արամազդ, Անահիտ և Վահագն եռյակի առաջին նախատիպը հայասական է, որը հետագայում է միայն վերանվանվել իրանական անուններով<sup>330</sup>: Չայասական դիցարանի վեցերորդ աստված Tarumu-ն (Ta-a-ru-u-mu-uš), ըստ նրա, անբաժանելի է թվում Taru-Tarawa-ից (ըստ Գ. Ջահուկյանի՝ Taru-muwa>Tarumu-՝ «Տարուի ուժ»<sup>331</sup>): Իսկ Վահագն աստծու կենտրոնի Տարաւն (Tarawn) անվանումը պետք է կապվի խաթա-խեթական Taru/ Tarawa-ի հետ<sup>332</sup>:

Ըստ Զ. Զնայակյանի՝ Արան օժտված է եղել ռազմի, պտղաբերության, մեռնող-հարություն առնող աստծո և շեշտված անդրշիրիմյան գործառույթներով և կարող էր հայասական պանթեոնում գրավել գլխավոր դերը՝ հանդես գալով <sup>D</sup>U.GUR գաղափարագրով<sup>333</sup>: Իսկ <sup>D</sup>IŠTAR-ը, ըստ նրա, դա Անահիտ կամ Աստղիկ դիցուհին է եղել: Այդ գաղափարագրերի տակ (<sup>D</sup>U.GUR և

<sup>324</sup> KBo IV 13 II 21, III 7, IV [3], 24, VI 33. KUB X 82.5. XIX 128 II 10, VI 19. KUB XXVI 39 I 26. IBoT III 15 I 6-7.

<sup>325</sup> Haas V., Geschichte der hethitischen Religion, S. 366-367.

<sup>326</sup> Պետրոսյան Ա., Չայկական դիցարանի հնագույն ակունքները, ՊԲՅ, 2004, թիվ 2, էջ 222, 226:

<sup>327</sup> Պետրոսյան Ա., նշվ. աշխ., էջ 226-227:

<sup>328</sup> Манандяня Язя Оя неко2орыэя Япорныэя проблемаэя иЯ2ориния ия географияя древнейя Арменияя Ереваня1956, Яя149.

<sup>329</sup> Хача2ряняВзяВоя2очныэяпровинцияяХе22ЯкойяимперииияЕреваня1971, ЯЯя148.

<sup>330</sup> Պետրոսյան Ա., նշվ. աշխ., էջ 223:

<sup>331</sup> ЯДжаукяняГзяХайаЯЯкийяязыкяяегоя2ношениеяяиндоевропейяЯкимяязыкамияЯя1.я

<sup>332</sup> Պետրոսյան Ա., նշվ. աշխ., էջ 223-224:

<sup>333</sup> Զնայակյան Զ., Չայասական <sup>D</sup>U.GUR-ը և Արա Գեղեցիկը, ՄՍԱԵԺ, 2004, XXIII, էջ 381-394:

<sup>D</sup>IŠTAR) նկատի են առնվել երկու տեղական աստվածություններ: Յ. Յմայակյանը շեշտել է <sup>D</sup>U.GUR-ի առանձնահատուկ դերը հայասական պանթեոնում, որը պաշտվել է նաև խեթերի կողմից: Այդ աստվածության պաշտամունքը, ըստ նրա, պետք է կապված լիներ անդրաշխարհի և նրա հետ առնչվող պատկերացումների հետ: Եվ քանի որ, անդրերկրային հատկություններով օժտված են լինում նաև մեռնող-հարություն առնող, պտղաբերության աստվածությունները, ապա նրանցից ոմանք դառնում են նաև անդրաշխարհի տերեր, ինչպես օրինակ, եգիպտական Օզիրիսը: Այստեղից էլ, Յ. Յմայակյանը ենթադրել է, որ <sup>D</sup>U.GUR գաղափարագրով հանդես է եկել Արա Գեղեցիկ աստվածությունը<sup>334</sup>:

Ա. Դավթյանը «Յայոց աստղային դիցաբանություն» աշխատության մեջ անդրադարձել է հայասական դիցաբանին: Նա նույնպես համաձայնվել է այն կարծիքի հետ, որ <sup>D</sup>U.GUR-ը այդ տեքստում ներկայացվել է վանկազիր, այսինքն, <sup>D</sup>U.GUR դիցանունը հնչել է հենց Ուզուր: Իսկ «կռվել, մարտնչել» իմաստներով U.gur-ոգոր-ը՝ նա նույնացրել է Սարս մոլորակը մարմնավորող Ներգալ աստծո հետ, իբրև ռազմիկ աստված: Ըստ Ա. Դավթյանի, Աստղիկ-<sup>D</sup>IŠTAR գաղափարագրով գրված Patteu... քաղաքի դիցուհին, գլխավոր դիցուհին էր՝ Ներգալի կինը: Նա ենթադրել է, որ Առնիյա քաղաքն ինքը կրում է աստծո անունը, քաղաքանունը հենց դիցանունն է: Եվ ելնելով այս ենթադրությունից, նա Առնիյա դիցանուն-քաղաքանունը նույնացրել է ուրարտական Առնի դիցանվան հետ: Šilili... դիցանունը նույնպես նա համարել է քաղաքանուն: Իսկ Teritituni դիցանվան մեջ նա տեսնում է հայերեն թերատ-տուն- «կարիճ» բառը: Իսկ հայասական Մtakšanaš դիցանունը, Ա. Դավթյանը տառադարձել է հայերեն ութաքսան ձևով, այսինքն՝ քսան ութ բառն է: Նա այս աստծուն նույնացրել է հայկական ամսի 28-րդ օրվա՝ Սիմ (Սեին) աստծո հետ<sup>335</sup>:

Յայասայի առասպելների վերաբերյալ ուղղակի տվյալներ չկան: Բայց ուշ խեթական ժամանակաշրջանի (մ.թ.ա XIV-XIIIդդ.) աղբյուրներից մեկում հիշվում է մի արևմտասեմական՝ քանանական առասպել՝ տեղայնացած այս շրջանում: Ըստ այդ առասպելի՝ Ասերտու (Ašertu) աստվածուհին՝ գերագույն աստված Էլ-կունիրսայի (El-kunirša) կինը, սիրո առաջարկություն է անում Էլ-կունիրսայի որդի Ամարոպի աստծուն (արևմտասեմական համատեքստում՝ Ba‘al, ուգարիթյան Ba‘lu): Ամարոպի աստվածը «գնաց դեպի Mala գետի ակունքները: Նա գնաց Էլ-կունիրսայի՝ Ասերտուի ամուսնու մոտ, [և] մտավ վրանը (= տուն, կացարան) Էլ-կունիրսայի»: Էլ-կունիրսա անունը խեթական հաղորդումն է սեմական Էլ աստծու և նրա մակդիրի՝ ‘ēl qūnī (‘a)rsa «երկրի արարիչ Էլ», իսկ Սալան Եփրատի խեթական անվանումն է: Մ.թ.ա. XIV-XIII դարերում Եփրատի ակունքների երկիրը Յայասան էր, իսկ Եփրատի ակունքներում բնակվող «երկրի արարիչ Էլը» պետք է նույնացվեր Յայասայի մեծ աստծուն: Ասերտուն (= Աստարտե) և Իշտարը համադրելի են U.GUR-ի կնոջը<sup>336</sup>:

<sup>334</sup> Յմայակյան Յ., Յոգևոր ավանդույթների ժառանգականությունը (Պտղաբերության պաշտամունքից մինչև քրիստոնեություն), 21-րդ դար, 2005, թիվ 2, էջ 167-168:

<sup>335</sup> Դավթյան Ա., Յայոց աստղային դիցաբանություն, Երևան, 2004, էջ 207-222:

<sup>336</sup> Պետրոսյան Ա., նշվ. աշխ., էջ 224-225:



Հայասայի դիցարանի <sup>D</sup>U.GUR-ը և <sup>D</sup>IŠTAR-ը մեծ աստվածների մի զույգ են եղել՝ աստվածների նահապետն ու նրա կինը: Այդ աստվածների անունները ներկայացվել են գաղափարագրով, այսինքն՝ տեղական աստվածները համապատասխանեցվել են միջազգայն U.GUR-ին և INANNA-ին: Իսկ INANNA-ն մայր աստվածուհու շումերոգրամն է (=աքաղ. Իշտար)<sup>337</sup>: U.GUR-ը դեռևս հինբաբելոնական դարաշրջանից (մ.թ.ա. II հազարամյակի սկզբից) նույնացվել է Ներգալին և դարձել նրա հիմնական անուններից մեկը: Ներգալը հնագույն հյուսիս-միջագետքյան աստված էր՝ կապված մահվան և պատերազմի հետ, անդրաշխարհի տիրակալը, որի պաշտամունքը հետագայում տարածվել է նաև հարևան երկրներում<sup>338</sup>: Հայասայի <sup>D</sup>U.GUR-ը նույնպես պետք է լիներ հանդերձյալ աշխարհի, ինչպես նաև մեռնող և հարություն առնող աստվածությունը՝ հինարևելյան որոշ աստվածությունների մեջ<sup>339</sup>: Այս հատկանիշներով նա կարող էր հանդես գալ նաև որպես Արա Գեղեցիկի նախատիպը:

Այս աստծո անունն առաջինն է հիշատակվում տրվելով Հայասա քաղաքի հետ, որը, հավանաբար, երկրի մայրաքաղաքն էր, ինչը նույնպես խոսում է <sup>D</sup>U.GUR-ի՝ Հայասայի դիցարանում գլխավոր աստվածությունը լինելու փաստի օգտին: <sup>D</sup>U.GUR-ի հնչյունական (Ուզուր, այստեղից՝ ոզոր-իմ) կամ բնածայնական (Գրգուռ) ընթերցումը քիչ հավանական է: Պանթեոնի գլխավոր աստծո կինն իր հատկանիշներով մեծ է եղել շումերական Ինաննային, ասուրա-բաբելոնական Իշտար-Աստարտային: Սովորաբար գլխավոր աստվածուհին հանդիսացել է նաև երկրի հովանավորը, որը հիմք է տալիս նրան համեմատելու Անահիտ աստվածուհու հետ:

Վաղմիջնադարյան հայկական սկզբնաղբյուրներից հայտնի նախաքրիստոնեական Հայոց աստվածների մեծ մասի (Արամազդ, Անահիտ, Նանե) պաշտամունքի կենտրոններից էին Մեծ Հայքի հյուսիսարևմտյան Դարանաղի, Եկեղյաց (անտիկ սկզբնաղբյուրների Ակիլիսենե) և Դերջան գավառները: Այս տարածքները մ.թ.ա. XIV-XIII դարերում ընդգրկված են եղել Հայասայի կազմում և որպես կարևորագույն կրոնական կենտրոն մնացին նաև քրիստոնեության հաստատումից հետո՝ դառնալով Լուսավորչի տոհմի տիրույթը:

Ակնհայտ է, որ U.GUR-ը և INANNA-ն հայկական նախաքրիստոնեական դիցարանի կառույցում պետք է համապատասխանեին աստվածների նահապետ Արամազդին և մայր աստվածուհի Անահիտին<sup>340</sup>:

Այսպիսով, ելնելով կրոնական փոփոխությունների ժամանակ հին դիցաբանական կերպարների՝ իրենց պաշտամունքի վայրերում վերանվանված ձևով պահպանվելու դրույթից՝ կարելի է կարծել, որ հենց Հայասայի աստվածներն են եղել այստեղի (Բարձր Հայք) հայոց նախաքրիստոնեական աստվածների հնագույն նախատիպերը<sup>341</sup>:

<sup>337</sup> Gray J., Near Eastern Mythology, 1969 թ. 21-22.

<sup>338</sup> Крамеръ С. Г. Древ. вост. мифология, т. 1, с. 150-151. Афана́сия́евая В. И. Перга́ли Мифы народов мира, т. 2, Москва, 1982, с. 212.

<sup>339</sup> Haas V., Geschichte der hethitischen Religion, S. 367.

<sup>340</sup> Պետրոսյան Ա., Հայկական դիցարանի հնագույն ակունքները, էջ 222:

<sup>341</sup> Πετρούγια Α. Η. Αρμενική μυθολογία, Ερεβάν, 2002, σ. 38. Ялэ

Հայասա-Ազգիում ամենայն հավանականությամբ գոյություն է ունեցել նաև քրմական դաս: Հայաստանում հայտնաբերված վիմական տվյալներից և Մ. Խորենացու վկայություններից վստահ կերպով կարելի է եզրահանգել, որ քրմապետը Հայաստանում ևս, ինչպես և հարևան երկրներում, երկրորդ դեմքն էր թագավորից հետո, երբեմն քրմապետի պարտականությունները նույնիսկ միահյուսվում էին թագավորի պարտականություններին և միևնույն անձը հանդիսանում էր միաժամանակ թագավոր և քրմապետ: Ասվածը կարելի է վերագրել նաև Հայասա-Ազգիի ժամանակաշրջանին, երբ Արևելքի երկրներում ավանդույթ է եղել, որ թագավորը հանդես է եկել նաև որպես քրմապետ: Այս ամենի լավագույն բնորոշումը տվել է մ.թ.ա. IV դ. խոշորագույն մտածող, փիլիսոփա Արիստոտելը, նշելով, որ բասիլևսը (թագավորը) հանդիսանում է գորքի առաջնորդ, միաժամանակ դատավոր ու կրոնապետ<sup>342</sup>:

Քանի որ Հայասա-Ազգիից որևէ գրավոր աղբյուր չի պահպանվել, նրա հոգևոր մշակույթի մասին կարելի է պատկերացում կազմել հայասական հատուկ անունների ուսումնասիրությամբ, որոնք հիշատակվել են խեթական սեպագիր տեքստերում: Պահպանված հայասական հատուկ անունները երեք կարգի են՝ անձնանուններ, դիցանուններ և տեղանուններ: Բուն հայասական անձնանուններն են Anniya-(An-ni-ya-), iukkana-(i-u-uk-ka-na-a-), Karanni-(Kar-an-ni-), Mariya-(Ma-ri-ya-), Mutti-(Mu-ut-ti-), դիցանուններն են՝ Baltaig (Ba-al-ta-ig), Šillili (Ši-il-l[i?]-l[i?]), Tarumuš (Ta-a-ru-u-mu-uš), Terittitūniš (Te-ri-it-ti-tu-u-ni-i[š?]), Unagaštaš (Ú-na-ga-aš-ta-aš), Zagga (Za-ag-ga-...), (...)šanuš (...š/t]a-an-nu-uš ) և (...)ĒuĒuš ([...]-Ēu-Ēu-uš)<sup>343</sup>:

Համեմատաբար մեծ թիվ են կազմում հայասական տեղանունները (քաղաքանուններ, երկրանուններ, լեռնանուն)՝ ArĒita, Aripša, Arniya, Azzi, iayaša, ialimana, iaršalaša, iuddu, Iyaninna, Kam..., GašmiyaĒa, Gazú, LaĒirĒila, Lalatta, Litta, PaĒĒuteya, Parraya, Partanta, Patteu..., TaĒ(Ēa)nišara, Tamatta, Tawatena, Dukama, Ukšu, Ura, Utkuniša: Հայտնի է նաև մի քաղաքանուն, որի ընթերցումը կասկածելի է՝ Qa?-ad-ku-ša?: Հայասայի տարածքում հիշատակված են LaĒa[La-Ēa-a] անունը կրող լեռներ<sup>344</sup>:

Եղած փոքրաթիվ տվյալների հիման վրա Հայասայի լեզվի մասին իրենց ուսումնասիրություններն են կատարել Գ. Ղափանցյանը և Գ. Ջահուկյանը:

